

ՀՍՍՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԻ
ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

Ուսումնական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ 1981

896.981.09

✓

ՀՍՍՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԻ
ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ՀԱՅԿԱԿՍԵՆ ՊԵՏ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

A II
65751

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ձեռնարկ

89-5566



ԵՐԵՎԱՆ 1981

МИНИСТЕРСТВО ВЫСШЕГО И СРЕДНЕГО СПЕЦИАЛЬНОГО
ОБРАЗОВАНИЯ АРМ. ССР

АРМЯНСКИЙ ОРДЕНА ТРУДОВОГО КРАСНОГО
ЗНАМЕНИ ГОСУДАРСТВЕННЫЙ ПЕДАГОГИЧЕСКИЙ
ИНСТИТУТ им. Х. АБОВЯНА

БИБЛИОГРАФИЯ ХУДОЖЕСТВЕННОЙ
ЛИТЕРАТУРЫ И ЛИТЕРАТУРОВЕДЕНИЯ

Учебное-пособие

Составитель А. М. Давтян

(на армянском языке)

Ереван — 1981

© Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական
ինստիտուտ, 1981:

© Армянский государственный педагогический институт
им. Х. Абовяна. 1981.

Կազմող՝ Հ. Մ. ԴԱՎԹՅԱՆ

Պատ. խմբ.՝ ՀՐ. ԿՈՍՏԻԿՅԱՆ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՄԱՏՆԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հրատ. խմբագիր՝ Լ. Զ. Գևորգյան

Տեխ. խմբագիր՝ Խ. Գ. Մուրադյան

Սրբագրիչ՝ Ա. Է. Դարբինյան

վճ 10967

Պատվեր 362

Տպաքանակ 500

Հանձնված է շարվածքի 2/IV 1981 թ.

Ստորագրված է տպագրության 9. 10. 1981 թ.:

Թուղթ տպ. № 2, 60×42¹/₁₆, հրատ. 4 մ. = տպագր. 5,5 մ.:

Գինը՝ 40 կոպ.:

Հայկական ՍՍՀ լուսավորության մինիստրության տպարան,

Երևան, Խանջյան փ. № 5

Типография Министерства просвещения Арм. ССР, Ереван, ул.

Ханджяна № 5,

ԳՍՍԸՆԹՍՅՈՒՆ

«Գեղարվեստական գրականության և գրականագիտության մատենագիտությունը» կամ «Գրական մատենագիտությունը» ընդհանուր մատենագիտության մի ճյուղն է: Այն գրականագիտության օժանդակ զինակիքներից է և ղեկավարվում է նույն սկզբունքներով, որոնցով առաջնորդվում են ընդհանրապես սովետական գիտությունը, գրականագիտությունն ու մատենագիտությունը: Նրա ուսումնասիրության առարկան գեղարվեստական գրականության և գրականագիտության վերաբերյալ մատենագիտություններն են, նրանց կազմելու և նրանցից օգտվելու հղանակները: Միաժամանակ գասընթացը ուսումնասիրում է գրական-գեղարվեստական հրատարակությունների կառուցվածքն ու տեսակները, դրանց հրատարակչությունները, գրական-գեղարվեստական ժամանակակից պարբերականները:

Գրագործանալին բաժանմունքի ուսումնական պլանի համաձայն դասընթացն անց է կացվում երկու կիսամյակներում: Առկա բաժնում ուսանողները պետք է հանձնեն մեկական կուրսային աշխատանք, կատարեն գործնական-լաբորատոր հանձնարարություններ, վերջում՝ քննություն: Հեռակա բաժնում առաջին կիսամյակում հեռակայող ուսանողները պարտավոր են գրել մեկական ստուգողական և կուրսային աշխատանք, իսկ վերջում՝ քննություն:

Դասընթացն ինքնուրույն ուսումնասիրելու համար հանձնարարվում է ներկա ձեռնարկը և ռուսերեն դասագիրքը. Библиография художественной литературы и литературоведения. Под ред. Б. Я. Бухштаба. М., 1971, стр. 400.

Ձեռնարկի ծավալը հնարավորություն չտվեց կանգ առնելու հայկական գրական մատենագիտությունների առավելությունների

և թիրուխյունների վրա: Այդ պակասը լրացնելու նպատակ են հետապնդում զրախոսությունները, որ բերվում են այդ մատենագիտություններից շատերի նկարագրություններից հետո: Բացի այդ, յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ տրվում է համապատասխան գրականություն: Առանց այս ամբողջ գրականությունն ուսումնասիրելու անհնար է դասընթացի լիակատար յուրացումը:

Ներկա դասընթացը ուսանողին հնարավորություն կտա կողմնորոշվելու գրական-գեղարվեստական բազմաճանակ հրատարակությունների մեջ, տեղյակ լինելու գրականության, արվեստի վերաբերյալ ՄՄԿԿ Կենտկոմի և Սովետական կառավարության որոշումներին ու ղեկավար նյութերին, պրպտելու, գտնելու հայ, ռուս, համաշխարհային գրականության մասին տեղեկատու-մատենագիտական աղբյուրները: Նաև՝ մատենագիտական ցանկեր կազմելու, դրանցից օգտվելու և ստացած դիտելիքները գրադարձնելու, գիտական, հրատարակչական ուլլ առաջադններում կիրառելու հմտություն:

Ձեռնարկը կազմելիս առաջնորդվել ենք ՌՍՖՍՀ Կուլտուրայի մինիստրության ուսումնական հաստատությունների վարչության հաստատած ծրագրով: Ռուսական մատենագիտությունների վերաբերյալ նյութերը քաղված են վերը հիշատակված ռուսերին դասադրքից, իսկ հայկական բաժինները շարադրված են սեփական դիտողությունների հիման վրա:

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

Թ Ե մ ա 1. Գեղարվեստական գրականության դերը հասարակական կյանքում: Կոմունիստական կուսակցության ֆաղափականությունը գեղարվեստական գրքի հրատարակության ասպարեզում

Գեղարվեստական գրականությունը կրթության և դաստիարակության ամենահզոր միջոցներից մեկն է: Նրա ներգործությամբ հղկվում, զարգանում է մարդու միտքը, ընդլայնվում են գիտելիքների շրջանակներն ու գեղագիտական ճաշակը: Այն հսկայական դեր է խաղում հասարակության և անհատների կյանքում: Իսկական գեղարվեստական երկերը մոռացվող անցյալի կենդանի հուշարձաններն են, ներկայի պատկերը, գալիքի ուղեցույցը, ազդերի ու ժողովուրդների հոգեբանության ճշգրիտ հայելին: Պատմական վաղ շրջանի մասին ամենախոստուն պատկերացումն ստանում ենք գեղարվեստական երկերից: Հնագույն ոչ մի հուշարձան այնքան հստակ տեղեկություններ չի տալիս հին հույների կյանքի ու կենցաղի մասին, որքան Հոմերոսի «Իլիականն» ու «Ոդիսականը»: Մեղանից երկու հազար տարի առաջ ասորած ասորաբարելական ժողովուրդների մասին մեր գիտելիքները շատ ավելի աղուտ կլինեին, եթե մեզ հասած չլինեի կապի սալիկների վրա գրված հուշակավոր «Գիլգամեշը»: Ռուսական հոգեբանությունն ու բնավորությունը ասես քանդակված է «Բիլինաներում», Պուշկինի, Դոպուլի, Տոլստոյի, Դոստոևսկու, Զեյնովի, Գորկու երկերում: Նույնը կարելի է ասել նաև հայկական «Սամա ծեփի», Նարեկացու, Սյայթ-Նովայի, Թումանյանի, Տերյանի, Բակունցի, Սևակի երկերի մասին: Ֆրանսիան ու ֆրանսիացիներին անհնար է ճանաչել առանց «Ռուլանդի երգի», Հյուգոյի, Մոպսսանի, Բալզակի երկերի: Նոսելուվ այս վերջինիս մասին, Ֆր. Էնգելսը ասել է. «Բալզակը... իր «Մարդկային կատակերգություն» մեջ տալիս է ֆրանսիական

Հասարակության ամենասքանչելի ռեալիստական պատմությունը նկարագրելով՝ բարձրեց ժամանակագրական կարգով, տարի առ տարի, սկսած 1816-ից մինչև 1848 թվականը: ...Ես ավելի շատ բան իմացա նույնիսկ տնտեսագիտական մանրամասնությունների իմաստով, քան բոլոր մասնագետների՝ այդ շրջանի պատմագետների, տնտեսագետների, վիճակագիրների գրքերից միասին վերցրած»¹: Հսկայական է Հասարակության կյանքում զեղարվեստատական գրքի մի այլ կարևոր դերը ևս. այն ժողովուրդների կապի և բարեկամության ամենաազդեցիկ միջոցներից է: Փոխադարձաբար թարգմանելով միմյանց գրականություններ, նրանք օրիցօր ավելի են ճանաչում ու մոտենում իրար: 1915 թ. գրած իր հոդվածներից մեկում Հ. Թումանյանը զեղարվեստական գրականությունը համարելով ժողովուրդների կուլտուրականության չափանիշը, բնդդեմ է. «Բայց միաժամանակ նաև բարձր հոգեկան կապ է ժողովուրդների մեջ»²:

Գեղարվեստական գիրքը յուրաքանչյուր կրթված անհատի ամբողջ կյանքի անբաժանելի, երբեմն բախտորոշ ուղեկիցն է: Ո՛վ իմանա, թե ինչպես կընթանար Պերճ Պոռչյանի կյանքը, եթե երիտասարդության շեմին ձեռքը չընկներ Աբովյանի «Վերք Հայաստանին», որի ընթերցանության ազդեցությամբ նա մճռեց դառնալ մեծ լուսավորչի աշակերտը, ամբողջ կյանքը նվիրել հայ գրականությանը: Ռուս սովետական տաղանդավոր գրող և գրականագետ Կ. Չուկովսկին, խոսելով Տոլստոյի հռչակավոր վեպի թողած ազդեցության մասին, գրել է. «Պատերազմ և խաղաղությունը» կարդալուց հետո արդյոք չի՞ փոխվում մարդու աչքերի գույնը, նրա շուրթերի ձևը: Գիրքը վերափոխում է մարդու էությունը, նրա արյունը, արտաքինը...»:

Գրականության դաստիարակչական, ճանաչողական այս մեծ նշանակությունը նկատի ունենալով, կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը Հոկտեմբերյան հեղափոխության առաջին իսկ օրից, առաջնորդվելով գրականության

¹ Կ.Մարսը և Զ. Էնգելսը արվեստի մասին, հատ. 1, կազմեց Մ. Լիֆշից, Ե., Հայպետհրատ, 1963, էջ 8—9:

² Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Ե., Հայպետհրատ, 1951, էջ 325.

կուսակցականութեան լենինյան սկզբունքներով, մեծ ուշադրութիւն են դարձրել գեղարվեստական գրքի թե՛ գաղափարական և թե՛ հրատարակչական մակարդակը բարձրացնելու վրա: Ժողովրդական զանգվածների գաղափարական դաստիարակութեան գործում գեղարվեստական գրքի դերի բարձրացման հոգատարութեամբ են տոգորված դեռևս 1918 թ. հունվարի 11-ի «Պետական հրատարակչութեան մասին» որոշումը, ուր կոնկրետ ցուցումներ են տրվում գեղարվեստական գրքերի հրատարակչութիւնը կարգավորելու և ընդլայնելու մասին: 1928 թ. դեկտեմբերի 28-ի «Մասսայական ընթերցողին գրքով սպասարկելու մասին», 1931 թ. օգոստոսի 15-ի «Հրատարակչական աշխատանքի մասին» որոշումներում, ելնելով ընթացիկ ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական իրադրութիւնից, ՀամԿ(բ)Կ Կենտկոմը ընդգծում էր առաջին հերթին առօրեական թեմաներով գեղարվեստական ստեղծագործութիւնների շրջանակը ընդլայնելու անհրաժեշտութիւնը:

Հետագա տարիները նույնպես բնութագրվում են իրրեւ ժամանակի հրատարակչական գործի կատարելագործման, առանձին հրատարակչութիւնների մակարդակը բարձրացնելու տարիներ: Այդպիսին են ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1931 թ. դեկտեմբերի 29-ի որոշումը «Մոլոդայա գվարդիա» հրատարակչութեան մասին», սույն՝ 1933 թ. սեպտեմբերի 9-ի որոշումը՝ «Մանկական գրականութեան հրատարակչութեան մասին»: Գրատպութեան ասպարեզում կուսակցութեան քաղաքականութեան կարևոր կողմերն էր շոշափում ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1940 թ. հուլիսի 13-ի «Գոսլիտիզդատի» աշխատանքի և 1940 թ. թեմատիկ սլանի մասին» որոշումը: Այստեղ ճշտվում է գեղարվեստական գրականութեան այս առաջատար հրատարակչութեան հիմնական ուղղութիւնը, մատնանշվում են սլանավորման մեջ տեղ գտած թերութիւնները, պահանջներ են ներկայացվում բարձրացնելու տպագիր արտադրանքի գաղափարական-գեղարվեստական որակը: Այս որոշումը վճռական նշանակութիւն ունեցավ մեր երկրում գեղարվեստական գրքի հրատարակչութեան մակարդակը բարձրացնելու ճանապարհին:

Նտպատերազմյան մի շարք որոշումներում քննադատվում են գեղարվեստական գրքի անբավարար խմբագրման, ձևավորման, նկարազարդումների, տպաքանակի և այլ հարցերում թույլ տրված առանձին թերութիւններ: Այսպես, ՍՄԿԿ Կենտկոմի 1958 թ.

սարկիլի 5-ի «Արտատաճմանյան զեղարվեստական զրահանության հրատարակման և զրախոսման թերությունների մասին» որոշումը հրատարակչություններին պարտավորեցնում է վերանայել թարգմանվող երկերի բնաբության և հրատարակման սկզբունքները, արտասահմանյան երկերին կցել այնպիսի առաջաբաններ, վերջաբաններ, ծանոթագրություններ, որոնք նպաստեն այդ գրվածքները խորապես և ճիշտ հասկանալուն:

Վերջին տասնամյակներում տպագրության վերելքը, գրքի պահանջի աճը մեր երկրում զրահատարակչության ամբողջ ցանցի վերակառուցման պահանջ առաջացրեց: Դեռևս 1949 թ. որոշում ընդունվեց ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին կից պոլիգրաֆիական արդյունաբերության, հրատարակչությունների և գրքի առևտրի գլխավոր վարչություն ստեղծելու մասին: Իսկ 1963-ի աշնանը ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին կից ստեղծվեց Մամուլի կոմիտե, որը 1972-ի օգոստոսից վերանվանվեց ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին կից հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի պետական կոմիտե: Միութենական հանրապետություններում ստեղծվեցին հանրապետական կոմիտեներ: Բաղմաթիվ հրատարակչություններ նոր անուններ ստացան, ճշտվեց նրանց զործունեության ուղղությունը:

Կուսակցության մշտական հոգատարությամբ էլ պայմանավորված է զրահան-զեղարվեստական հրատարակչությունների որակական ամենամյա աճը մեր երկրում: Ներկայումս Միության մեջ զրահան-զեղարվեստական զրքեր են տպագրում շուրջ երեք տասնյակ կենտրոնական և 120 հանրապետական ու տեղական հրատարակչություններ՝ ընթերցողների առաջ դնելով աշխարհի բոլոր ժողովուրդների զրահանությունների լավագույն նմուշները: Այն դեպքում, երբ նախահեղափոխական շրջանում հրատարակվել են հատուկենա հայ հեղինակների երկերի երկհատորը կամ եռահատորը, սովետական տարիներին կարելի է ցույց տալ տասնյակ հայ դասականների երկերի լիակատար ժողովածուները, ժամանակակից գրողներից մեծ մասի երկերի ժողովածուները, ռուս և այլ ժողովուրդների շատ հեղինակների երկերի բաղմահատորները: Աննախադեպ արագությամբ է բարձրանում նաև զրքերի տպաքանակը: Այդ ակնհայտ է զառնում, մանավանդ, երբ համեմատում ենք արտասահմանյան խոշոր երկրների հետ: Մինչդեռ երկու-երեք

միլիոն ընթերցող ունեցող հայերեն ղեղարվեստական դրքի միջին տպաքանակը տաս-տասնհինգ, իսկ առանձին ղեպքերում՝ երեսուն-հիսուն հազար է, ռուսերեն շատ դրքերի տպաքանակը մեկ միլիոն է։ Ֆրանսիայի նման խոշոր երկրում սովորական տպաքանակը երեք-չորս հազար է, և առանձին ղեպքերում միայն տաս հազարի է հասնում։ Իսկ Անգլիայում դրանից էլ ցածր է։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍՄԿԿ գաղափարախոսական աշխատանքի մասին։ Փաստաթղթերի ժողովածու, Ե., 1980, 886 էջ։

Պարտիական և սովետական մամուլի մասին։ Փաստաթղթերի ժողովածու Ե., Հայպետհրատ, 1955, 952 էջ։

Հայկական սովետական հանրագիտարան, հատ. 6։ Ե., 1980, էջ 622—624 (Հրատարակչական գործ)։

Մանուկյան Մ., Գիրքը տասներորդ հնգամյակում։ Ե., 1977, 100 էջ։

Գիրքը՝ և պարբերական մամուլը Հայկական ՍՍՀ-ում 40 տարում։ Վիճակագրական տվյալներ։ Կաղմեց Գ. Աղախանյան։ Ե., 1960, 77 էջ։

Ա. Բաղդասարյան, Գեղարվեստական գրականության դերը աշխատավորների կոմունիստական դատարարակության գործում։ Ե., 1960, 92 էջ։

Библиография художественной литературы и литературоведения. Под ред. Б. Я. Бухштаба. М., 1971, стр. 11—18.

Печать СССР за 50 лет. Статистические очерки. М., 1967.

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Թ Ե մ ա 2. Գեղարվեստական նրատարակությունների տեսակները

Գեղարվեստական գրքերը միմյանցից տարբերվում են ոչ միայն գաղափարական բովանդակությամբ, արվեստով, շարադրման ձևով, այլև հրատարակչական առանձնահատկություններով։ Դրանց հրատարակչական այս կամ այն տեսակին պատկանելը հիմնականում որոշվում է բնագրերի կազմով, այսինքն նրանով, թե մեկ զբոսում քանի ստեղծագործություն է գեանդված։ Ըստ այդմ էլ գեղարվեստական հրատարակությունների հիմնական տեսակները հետևյալներն են.

Մեկ ստեղծագործություն մեկ գրքով: Սովորաբար այսպես են հրատարակվում մեծածալալ գրվածքները՝ վեպերը (մեկ կամ մի քանի հատորով), լիսյակները, թատերագրությունները, երբեմն էլ պատմվածքները, պոեմները, մանկական ստեղծագործությունները:

Կոլեկտիվ ժողովածուներ: Այն հրատարակություններն են, որոնք բովանդակում են թվով շատ ստեղծագործություններ և պատկանում են զրական ուղղությամբ, ազգային պատկանելությանամբ, աշխարհայացքով իրար նման հեղինակներին: Պայմանականորեն այդպես են կոչվում նաև բանահյուսական հավաքածուները: Կոլեկտիվ ժողովածուները կազմելիս հաշվի են առնվում նրանց մեջ մտնող ստեղծագործությունների այլևայլ կողմերը. ասենք, որևէ ազգի պատկանելի կամ ժանրը: Օրինակ, «Ընտիր էջեր հայ գրականության: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը», «Ուկրաինական քնար», «Վրացական պատմվածքներ»: Նրբեմն՝ թեման, ընթերցողական հատկացվածությունը և այլն: Որոշ կոլեկտիվ ժողովածուներ կոչվում են իրենց բնութագրող անվանումներով՝ ավանախ, անթուլցիա, քրեստոմատիա:

Նրկերի ժողովածուներ: Ընդգրկում են լավագույն, րըն-նադատության և ընթերցողների բարձր գնահատությանն արժանացած երկերը, գրական-հասարակական նշանակություն ունեցող հոգվածները, նամակները, ելույթները: Լույս են տեսնում զանա-պան անուններով: Ընտիր երկեր, նրկերի ժողովածու, նրկեր, Մի-հատորյակ, Ընտրանքի, Հատընտիր, երբեմն էլ կրում են նրանցում զետեղված ստեղծագործություններից մեկի անունը: Բաղկացած են լինում մեկ կամ ավելի հատորներից: Նրկերի ժողովածուի հրատարակումը գրողի մեծարման, գրականության մեջ նրա խա-ղացած դերի ճանաչումն է:

Նրկերի լիակատար ժողովածուներ: Այսպիսի ընդգրկումով հրատարակվում են բացառապես անցյալի դասականների գրական ժառանգությունը: Անվանումից ենթադրվում է, որ նրանում պետք է հավաքված լինեն գրողի բոլոր գրվածքները: Սակայն միշտ չէ, որ այդպիսի է: Պետք է տարբերել նրկերի լիակատար ժողովածու-ների երկու տեսակ՝ ակադեմիական և ոչ-ակադեմիական:

«Ակադեմիական» անվանումը տրվում է դրանք գրականու-թյան պատմաբանների, քննադատների, ընդհանրապես մասնա-գետների գիտահետազոտական աշխատանքների համար նախա-

տեսված լինելու, ինչպես և հրատարակությունը գիտությունների ակադեմիաների կողմից իրականացվելու պատճառով: Ակադեմիական հրատարակություններում բացի ընդարվեստական ավարտուն երկերից, մտնում են նաև տարբերակները, սևագրությունները, պատառիկները, գրական սկզբնական փորձերը, հեղինակացությամբ գրվածները, այն գործերը, որոնց տվյալ հեղինակին պատկանելը հավանական է, բայց անվիճելի չէ, հրապարակախոսական, զիտական, փիլիսոփայական երկերը, ինչպես նաև այնպիսի ժառանգությունը, որ ընդունված չէ ստեղծագործություն անվանել, ինչպես նամակները, օրագրերը, ելույթները, գրառումները, կոնսպեկտները, կարգացած զրբերի լուսանցքներում կատարած նշումները, ուրիշի ստեղծագործությունների վերամշակումները, զրբերի վրա և ալրոմներում թողած ընծայականները: Ակադեմիական հրատարակությունների բնագրերը պատրաստվում են զիտական հիմունքներով, հատուկ խնամքով և ծառայում են իբրև հիմք առանձին զրբերով, ընտիր երկերի և ոչ-ակադեմիական երկերի լիակատար ժողովածուների հրատարակության համար:

Առավել լայն տարածում ունեն երկերի լիակատար ժողովածուների ոչ-ակադեմիական հրատարակությունները: Սրանցում ղետեղվում են հեղինակի բոլոր ղեղարվեստական, հրապարակախոսական, քննադատական երկերը, սակայն բացառվում են տարբերակները, սևագրությունները, ոչ ստեղծագործական գրվածքներից շատերը: Իսկ նամակներից և օրագրություններից ընտրվում են առավել կարևորները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Библиография художественной литературы, стр. 19—38.

Սովետական գրական-ղեղարվեստական ժողովածուներ: Կաղմեց Ռ. Ռուբինյան, Ե., 1964, էջ III—XL, VII:

Թ Ե Մ ա 3. Գրականագիտական-ֆննդատական հրատարակություններ

Գեղարվեստական գրականությանը ղուգընթաց հետզհետե ավելի է մեծանում գրականագիտական հրատարակությունների

թիվը: Տասնապատկվել է դրանց տպագրականը: Բազմաթիվ ու բազմապիսի այդ հրատարակություններից են:

Մարխսիզմ-լենինիզմի հիմնադիրների և Կոմունիստական կուսակցության նշանավոր գործիչների գրականության մասին աշխատությունները: Կուսակցության որոշումները, մարխստ բննադատների ժողովածուները: Սովետական դրականագիտության համար սկզբունքային, ելակետային նշանակություն ունեն մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների, Կոմունիստական կուսակցության նշանավոր գործիչների աշխատությունները, դրականության և արվեստի վերաբերյալ կուսակցության և կառավարության որոշումները, ինչպես նաև մարքսիստ քննադատների աշխատությունները: Ահա վերջին տարիներին հրատարակված դրանցից մի քանիսը:

Մարքսը և ինգելսը արվեստի մասին: Կադմեց Մ. Լիֆշից: Հատ. 1—2: Ե., Հայպետհրատ, 1963—64:

«Վ. Ի. Լենինը դրականության և արվեստի մասին» ռուսերեն հարուստ ժողովածուն արդեն հինգերորդ հրատարակությունն է ունեցել: «Վ. Ի. Լենինը դրականության մասին» հայերեն ժողովածուն լույս է տեսել 1948-ին: Դրականության վերաբերյալ Լենինի շատ ասույթներ են սփռված «Վ. Ի. Լենինը կուլտուրական հեղափոխության մասին» (Ե., 1969) ժողովածուի տարբեր բաժիններում:

Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի որոշումները հրատարակվել են մի շարք անգամներ: Ամենածավալուններից են՝ «Պարտիական և սովետական մամուլի մասին: Փաստաթղթերի ժողովածու» (Ե., 1955), եռահատոր «ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի սլենդոմների բանաձևերում ու որոշումներում. 1898—1954» (Ե., 1954—55), «Գաղափարական աշխատանքի հարցեր. ՍՄԿԿ կարևորագույն որոշումների ժողովածու. 1954—1961» (Մոսկվա, 1961, ռուսերեն) և այլն:

Վերջին երկու տասնամյակներում իրականացվել է Ա. Վ. Լուսաչարսկու ութհատորյա երկերի ժողովածուի տպագրությունը, Պլեխանովի, Վսրովսկու, Շահումյանի, Օլմինսկու, Ֆ. Մերինգի, Պ. Լաֆարգի, Ռ. Լյուքսեմբուրգի, Կ. Ցետկինի գրական-քննադատական հոդվածների ռուսերեն ժողովածուները: Հայաստանում հրատարակվել են Ստ. Շահումյանի «Դրականության մասին», Պլեխանովի «Գեղարվեստ և դրականություն», Ս. Սպանդարյանի,

Ա. Մյասնիկյանի, Ա. Մռավյանի հոգովածներն ու ճառերը, որոն-
ցում ղգալի տեղ են գրավում գրաքննադատությունները:

Համաշխարհային գեղագիտության և էմնադատական մտքի
հուշարձաններ, ուս հեղափոխական-դեմոկրատների, ուս և հայ
դասականների և էմնադատների աշխատությունները: Մոսկվայի
«Խոշորժեստիկննայա լիտերատուրա» հրատարակչությունը «Հա-
մաշխարհային գեղագիտական և քննադատական մտքի հուշար-
ժաններ» մատենաշարով հրատարակել է Աբխաստների, Բուալույի,
Հեգելի, Լեսինգի, Հերդերի և այլոց աշխատությունները, ինչպես
և ուս հեղափոխական-դեմոկրատների, հիբոպական նոր շրջանի
սոաջագեմ մտածողների այդ բնույթի երկերը: Հարյուրների են
հասնում անցյալի ուս քննադատների և դասակարգների գրակա-
նության մասին ժողովածուները: Այսպիսի հրատարակություննե-
րով հարուստ է նաև հայ գրականությունը: Դեռևս անցյալ դարի
սոաջին կեսին գրաբար թարգմանությունը լույս է տեսել Հորա-
քիտի «Արուեստ քերթողականը», մեր օրերում թարգմանվեցին
Բուալույի «Բանաստեղծական արվեստը», Հ. Թենի «Գեղարվեստի
փիլիսոփայություն», Դորրոյսերովի «Քննադատական հոգովածնե-
րը», Բեկինսկու «Ընտիր երկերը», Ջերնիշնիկու «Էսթետիկան» և
«Ռուս գրականության Դոդույան շրջանի ուղղվածները»: Հետգհտի
ալիկնում են հայ գրականների գրականության և արվեստի մա-
սին ժողովածուները. «Թումանյանը քննադատ», «Ներշն Ջարենցը
գրականության մասին», «Բաֆիին գրականության մասին», «Վ.
Փափազյանը գրականության մասին», Դ. Դեմիրճյանի «Հոգոված-
ները», Սա. Զորյանի «Հոգովածները», «Դր. Զոհրապը գրականու-
թյան և արվեստի մասին» և այլն:

Դրականագիտական ուսումնասիրությունների կոլեկտիվ ժո-
ղովածուներ, «Ընթերցումներ», գրպին նվիրված հոբելյանական
ժողովածուներ, հիշողություններ: Դրականագիտական ուսումնա-
սիրությունների կոլեկտիվ ժողովածուները մեծ մասամբ հրատա-
րակության են պատրաստում գրականության ինստիտուտները:
Դրանք նվիրվում են գրական սրե է թեմայի, ուղղության, ժամա-
նակաշրջանի, առանձին հեղինակի: Ռուսերեն այսպիսի հրատա-
րակությունների միայն ցուցակը տասնյակ էջեր կարող է կազմել:
Այս կարգի հայերեն գրականությունը թեև նոր է սկզբնավորվել,
բայց արդեն կարելի է թվարկել մի շարք ծանրակշիռ հրատարա-

կույթյուններ. «Հոկտեմբերը և հայ գրականությունը», «Գրական ժանրեր», «Գրական ղեմքեր», «Ավանդույթներ և գեղարվեստական դարգացում» և այլն:

Հորեկյանական ժողովածուները տարեկիցների առթիվ արտա-
ւանած ղեկուցումները կամ գրված ուսումնասիրություններն են:
Նյգույիսի լավագույն վերջին հրատարակություններից են. «Թու-
մանյան 100» և «Խառհակյան 100»:

Վերջին շրջանում հատկապես առատ են հիշողությունները:
Գրանք կամ շատերի հուշերն են մեկ գրողի մասին, կամ մեկի
հուշերը իր և այլոց մասին: Ահա. «Ժամանակակիցները հաշտույթ
Արովյանի մասին», «Հիշողություններ Նզիշե Չարենցի մասին»,
«Ղազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում», «Թուման-
յանը ժամանակակիցների հուշերում»: Իրենց ժամանակի ու գրչու-
կիցների մասին գեղարվեստական բարձրաժան հուշեր են թողել
հայ դասականներ Աղայանը, Պռոշյանը, Շիրվանզադեն, Խա-
հակյանը, Նորադույն գրողների ու բանասերների հուշերից են Գ.
Լեոնյանի «Հուշերը», Վ. Ալազանի «Հուշերը», Աշ. Հովհաննիսյանի
«Հուշեր և բնութագրումները», հաիշատակությամբ ընթերցվող Ռ.
Զարյանի «Հուշապատումը»:

Գրականության պատմություններ, բարձրագույն ու միջնա-
կարգ ուսումնական հաստատությունների դասագրքեր: Ռուս գրա-
կանության պատմության բազմաթիվ ծանրակշիռ աշխատություն-
ներից ամենավերջինն ու լիակատարը 1941—55 թթ. ՍՍՀՄ ԳԱ
Ռուս գրականության ինստիտուտի հրատարակած տասնատորյա
(13 գրքով) «Ռուս գրականության պատմություն» է: Նրանում
սուսական գրականության պատմությունը հասցվում է մինչև Հոկ-
տեմբերյան հեղափոխություն: Սրա անմիջական շարունակությունն
է Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի
Եռահատոր «Ռուս սովետական գրականության պատմությունը»
(2-րդ տիպ 1967—68): Ռուսերեն հրատարակվել են ՍՍՀՄ բոլոր
ժողովուրդների, այդ թվում «Հայկական սովետական գրականու-
թյան պատմությունը»: Հայ գրականությունը համեմատաբար հա-
րուստ է գրականության պատմություններով: 19-րդ դարի երկրորդ
կեսից մինչև 1920 թ. նոյեմբերը հրապարակվածների մեջ
աչքի են ընկնում Գ. Զարբաճանայանի, Ստ. Պալասանյանի, Լեոյի,
Վ. Փափաղյանի, Լ. Մանվելյանի աշխատությունները: Սակայն

Հայ գրականության մարքսիստական պատմագրությունը ստեղծվեց Հայրենական մեծ պատերազմից հետո: 1946—47 թթ. հրատարակվեց Մ. Արեգյանի «Հայ հին գրականության պատմություն» սովորածավալ երկհատորը (տպագրվել է նաև ռուսերեն թարգմանությունը): 1960-ին սկսվել և արդեն իրականացվել է Արեգյանի անվան գրականության ինստիտուտի հինգհատորյա «Հայ նոր գրականության պատմությունը» և «Սովետահայ գրականության պատմություն» երկհատորը: Գրվել են գրականության պատմության առանձին շրջաններ կամ հատվածներ բնագրի ու մի շարք ուսումնասիրություններ: Մի ամբողջ գրագրարան կազմեն Հայ գրականության պատմության պարոցական դասագրքերը: Արդեն ստեղծվել են մի շարք բուհական դասագրքեր, ինչպես Մ. Մկրչյանի «Հայ հին գրականության պատմությունը», Ա. Առաքելյանի հունական և հռոմեական գրականության պատմությունները:

Սովետահայ գրականագետ-մեծադասերի հոգիվածների ժողովածուներ: Ինչպես Ռուսաստանի ֆեդերացիայում և մյուս հանրապետություններում, մեղանում ևս հաստատուն ավանդույթ է դարձել սովետական իշխանության առաջին շրջանի և արդի գրականագետ-քննադատների մամուլում հրատարակված հոգիվածները ժողովածուներով հրատարակելը: Մինչև 1937 թվականը ապրել ու գործել են մի շարք քննադատներ, որոնց հոգիվածներն ու ուսումնասիրությունները տեսագաղափար գուրս էին մնացել: 1950-ական թթ. կեսերից հետզհետե մոռացությունից հանվում է նրանց գրական ժառանգությունը: Արդեն հրատարակի վրա են Հ. Գյուլիքիսյանի, Դր. Սիմոնյանի, Յ. Խանդավյանի, Հ. Սուրխաթյանի ժողովածուները: Առավել ճոխ է արդի քննադատների հոգիվածների ժողովածուների շարքը, որոնց թիվը մի քանի տասնյակի է հասնում:

Գրամեծադատական գիտահանրամատչելի ակնարկներ, մեծագրություններ: Գրական որևէ հարցի կամ գրողի մասին գրված տասնյակ գրքերի քննությունը ցույց է տալիս, որ դրանք կարելի է բաժանել երկու հիմնական խմբի. գիտահանրամատչելի ակնարկներ և մեծագրություններ:

Գիտահանրամատչելի ակնարկները, որ երբեմն կոչվում են ուրվագիծ, փորձ, գիմանկար և այլն, գրական հարցը կամ գրողի կյանքն ու գործունեությունը ժողովրդականացնելու, հանրության

ւեփականութիւնը դարձնելու նպատակ ունին: Սրանցում շեշտը դրվում է ոչ այնքան նոր փաստեր հայտնաբերելու, տեսականներ առաջ քաշելու, որքան արդեն հայտնի իրողութիւնները յուրովի մեկնաբանելու, հնարավորին չափ մատչելի շարադրելու վրա: Նման ակնարկների ծավալը հարչութից-երկու հարյուր էջ է:

Մենագրութիւնները (հուն. մոնոս—մեկ և դրաֆո—գրում ևս բառերից) այն ուսումնասիրութիւններն են, որոնցում, ի տարբերութիւն գիտահանրամատչելի ակնարկների, հանդամանորին, դիվանական փաստաթղթերի հիման վրա առաջ են քաշվում նոր դրույթներ, հաստատում կամ հերքում են նախկին ոչ ճիշտ փաստերն ու եզրակացութիւնները, անդրադառնում հեղինակի բոլոր ստեղծագործութիւններին, վերլուծվում մասնագիտական խորութեամբ: Դրանք շատ դժուարեամբ ծավալում, մեկից ավելի հատորներով են: Որոշ մենագրութիւններ նվիրված են զրական մի խնդրի կամ զրոյի ստեղծագործութեան մի կողմին: Իրենց բնութիւնով մենագրութիւններ են նաեւ զրոյների կյանքի և գործունեության կիսագեղարվեստական շարադրանքները, որոնցից են Ա. Մորուայի «Երեք Դիւմա», «Պրոմէթէս կամ Բալզակի կյանքը», էրերմանի «Զրույցներ Գլոմէի հետ», սուսերին «Նշանավոր մարդկանց կյանքը» մատենաշարով հրատարակվող հարչութեամբ աշխատութիւններ:

Ուսումնական հրատարակութեանն ուսուցիչների և աշակերտների համար: Հատկապէս ուսուցիչների և աշակերտների համար ուսերին լեզվով ստեղծված է հակադասական գրականութիւն: Այս ուղղութեամբ նկատելի քաջեր են արված նաեւ մեզանում: «Լույս» հրատարակչութիւնը լույս է ընծայել Գ. Զուհարյանի «Գրականութեան մեթոդական», Ա. Հալրապետյանի «Բնութիւնը և մարդը» Հ. Սահյանի «Գեղարվեստ», Ա. Մկրտչյանի «Գրողի կենսագրութեան ուսումնասիրումը դպրոցում» և այլ գրքեր, «Սովետական գրող»-ը (նախկինում «Հայաստան») հատկապէս աշակերտութեան համար հրատարակել է Հր. Թամրազյանի «Տաղանդի ծնունդը (Շիրվանդադերի կյանքից)» և «Երիտասարդ Զարենցը», Ս. Աղաբաբյանի «Ստեփան Զորյան»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Библиография художественной литературы, стр. 80—105.

**Թ Է մ ա 4. Գրական-գեղարվեստական հրատարակությունների
օժանդակ ապարատը**

Օժանդակ կամ գիտական ապարատ են կոչվում գեղարվեստական կամ զրականագիտական զրքի այն մասերը, որոնք հեղինակինը չեն, այլ կազմողինը, խմբագրինը կամ մեկ ուրիշինը: Օժանդակ ապարատի մեջ են մտնում առաջաբանը կամ վերջաբանը, ծանոթագրությունները, այլևայլ ցանկերը, բառարանները, զրոզի աշխատության տարբերակները՝ ծանոթագրություններով: Իրենց կազմով, կատարման խորությամբ միանգամայն տարբեր են մասսայական և գիտական հրատարակությունների օժանդակ ապարատները: Վերջինները ավելի բարդ, բազմակողմանի և մասնագիտական բնույթ են կրում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


299-80 Библиография художественной литературы, стр. 38—48.

**Թ Է մ ա 5. Ռուսերեն գրական-գեղարվեստական երկերի
ժամանակակից հրատարակությունները**

Իր մեծությամբ և հրատարակած զրքերի քանակով սովետական հրահրատարակությունը ամենախոշորն է աշխարհում: Գրատպության ծավալուն ցանցում աչքի ընկնող տեղ են զրավում գեղարվեստական զրքի մասնագիտացված հրատարակությունները: Մոսկվայում զործում են այգայիսի զրքերի խոշորագույն հրատարակություններ: Միութինական հանրապետություններից շատերը նույնպես ունեն մասնագիտացված հրատարակություններ: Սրանք ազգային ըտցի հրատարակում են նաև ռուսերեն գեղարվեստական զրքեր:

Ռուսերեն գեղարվեստական և զրականագիտական զրքերի մի խոշոր մասը թողարկում են հետևյալ երկու մասնագիտացված հրատարակությունները. «Խուզոժեստվեննայա լիտերատուրա», և «Սովետսկի պիսատել»:

«Խուզոժեստվեննայա լիտերատուրա»: Հիմնվել է 1930-ական թվականներին՝ մի շարք հրատարակությունների միաձուլումից:



դասականների գրադարանը» ընդգրկում է գրողների բազմաՀատոր ընտիր երկերը. Գոնշարով՝ 6 հատորով, Գորկի՝ 18, Տոլստոյ՝ 12, Տուրգենև՝ 10 և այլն: Մի շարք մատենաշարեր ներկայացնում են սովետական բազմազգ գրականությունը. «Սովետական բանաստեղծության գրադարան», «Սովետական արձակի գրադարան», «Լենինյան մրցանակի արժանացած ստեղծագործությունների գրադարան», Բեմատիկ մատենաշարերից են. «Պատմական վեպի գրադարան», «XX դարի արտասահմանյան վեպը» և այլն: Շատ հրատարակություններ ընթիրցողին են հասնում բաժանորդագրությամբ: Ստ. Զորյանը առաջին հայ հեղինակն է, որի հինգհատորյակը այս ձևով հրատարակվել է 1974—75 թթ.:

Տպագրվում են նաև մենագրություններ նշանավոր գրողների և գրական հարցերի վերաբերյալ, գրական ժողովածուներ, գիտահանրամատչելի գրական ակնարկներ:

«Սովետսկի պիսատել»: ՍՍՀՄ գրողների միության հրատարակչությունն է: Հիմնագրվել է 1938-ին: Հիմնական խնդիրն է ուսուս սովետական մշուս ժողովուրդների հեղինակների հրատարակումը: Տպագրվում են նաև խոստումնալից սկսնակ, ոչ հանրաճանաչ հեղինակների գրվածքները: Մատենաշարային հրատարակություններից ամենախոշորն է Մ. Գորկու նախաձեռնությամբ սկզբնավորված «Բանաստեղծի գրադարանը» («Բիրլիոտեկա սոետա»): Ընդգրկում է ուսական րնարերգության մեջ որոշակի հետք թողած բոլոր բանաստեղծներին, ՍՍՀՄ ժողովուրդների րնարերգության վարպետներին: Ունի «Մեծ մատենաշար» և «Փոքր մատենաշար» թողարկումները: Վերջինս ավելի բարձր տպաքանակ և մեծ պահանջարկ ունի: Ներկայումս «Մեծ մատենաշարը» տպագրվում է երկրորդ, իսկ «Փոքրը»՝ երրորդ հրատարակությամբ: Այս մատենաշարով լույս են ընծայվել 500 հեղինակի գործեր⁴:

Մասնագիտացված այս հրատարակչություններին զուգընթաց գեղարվեստական զրքեր են տպագրում նաև բազմաճյուղ հրատարակչությունները՝ յուրաքանչյուրն իր թեքման համապատասխան: Դրանցից խոշորագույններն են.

⁴ Այս մատենաշարի ցանկը տես՝ Библиотека поэта. Аннотированная библиография. (1933—1965). М.-Л., «Сов. писатель», 1955, 307 стр.

«Նաուկա»: ՍՍՀՄ ԴԱ հրատարակչությունն է: Այլ գիտություններին պատկանող գրքերի հետ տպագրում է նաև Գրական-գեղարվեստական, մասնավորապես ուսա դասականների ակադեմիական հրկերի լիակատար ժողովածուները, երբեմն էլ առանձին զրվածքների ակադեմիականը:

«Նաուկան» տպագրում է նաև բազմաթիվ զրական մենագրություններ, գրականության պատմություններ, զրական մատենագիտություններ:

«Մոլոդայա գվարդիա»: ՀամԿԵՄ Կենտկոմի հրատարակչությունը: Հիմնվել է 1922-ին: Դեղարվեստական գրքերը կազմում են նրա պլանի կեսից ավելին: Թեքումը երիտասարդական է: Նկատի ունենալով պատանեկության և երիտասարդության հակումները, տարիներ շարունակ թողարկում է «Ֆանտաստիկա: Արկած: Ժանապարհորդություն», «Ժամանակակից ֆանտաստիկայի զրագարան», «Սովետական ֆանտաստիկայի զրագարան» մատենաշարերը: Չափածո խոսքը պրոպագանդում է «Ընտիր քնարերգության զրագարան», «Աշխարհի երիտասարդ բանաստեղծները», իսկ արձակը՝ «Երիտասարդ գրողներ», «Արձակի առաջին զիրքը» մատենաշարերով: Մեծ ժողովրդականություն է վայելում «Նշանավոր մարդկանց կյանքը» մատենաշարը:

«Դեստկայա լիտերատուրա»: Գոյություն ունի 1933-ից: Մինչև 1963 թ. կոչվում էր «Դեոգիդ»: Հրատակում է գիտահանրամատչելի և գեղարվեստական գրականություն նախագայրոցական ու դպրոցական երկխաների համար, իսկ «Դպրոցական զրագարան» մատենաշարով՝ ծրագրային գրականություն դպրոցականների համար: Իրականացնում է նաև նշանավոր մանկագիրների երկերի ժողովածուների հրատարակումը:

«Պրոգրես» և «Միք»: Հիմնվել են 1964-ին: Հրատարակում են արտասահմանյան լեզուներից թարգմանված գրականություն: «Պրոգրեսը» հումանիտար գիտելիքների թեքում ունի: Քաղաքական, հասարակական այլ գիտությունների հետ հրատարակում է նաև գեղարվեստական: «Ժամանակակից արտասահմանյան թատերագրություն», «Ժամանակակից արտասահմանյան բանաստեղծություն» և այլ մատենաշարերի մեջ առանձնանում է «Դեղարվեստական թարգմանության վարպետները» մատենաշարը, որի յուրաքանչյուր զիրքը սովետական հեղինակներից որևէ մեկի թարգ-

մանություններն են: Տպագրում է նաև արտասահմանյան հեղինակների գրվածքները բնագրերի լեզվով և սովետական շաղկապներով՝ արտասահմանյան լեզուներով:

«Միրը» ճշգրիտ և բնական գիտությունների թեքում ունի, բայց հրատարակում է նաև այդ գիտությունների հետ առնչվող գեղարվեստական թարգմանական գրքեր:

«Պրավդա» և «Իզվեստիա»: Լրագրա-ամսագրային խոշորագույն հրատարակություններ: Առաջինը հիմնվել է 1912-ին, երկրորդը՝ 1918-ին: Տպագրում են նաև գեղարվեստական գրքեր:

«Պրավդա» հրատարակությունը թողարկում է «Օկտյաբր», «Ջնամյա», «Յունոստ», «Սմենա», «Օգոնյոկ», «Կրոկոդիլ» հանդեսները: Վերջին երկուսն ունեն գրական մատենաշարեր. «Օգոնյոկի գրադարան» և «Կրոկոդիլի գրադարան»: «Օգոնյոկի գրադարանը» լույս է տեսնում երկու թողարկումով, մեկը՝ ամենամսյա է և բովանդակում է հայրենական և արտասահմանյան շատ ընթերցվող հեղինակների երկերի բազմահատորները (Տուրգենև, Ցվեյգ, Կոնան-Դոյլ, Շոլոխով, Կուպրին, Մերիմե, Ստիվենսոն), իսկ մյուսը՝ շաբաթական, որ հրատարակում է սովետական և արտասահմանյան հեղինակների նոր ստեղծագործությունները՝ գրպանի փոքրածավալ չափով: «Կրոկոդիլի գրադարանը» եռամսյա է: Ընդգրկում է աշխարհի գրականությունների երգիծական նմուշները:

«Իզվեստիան» թողարկում է «Նովի միր», «Ինոստրաննայա լիտերատուրա», «Դրուժբա նարոդով» ամսագրերը: Վերջինս ունի «ՍՍՀՄ ժողովուրդների գրականությունների դասականների գրադարան», «ՍՍՀՄ ժողովուրդների պատմավեպի գրադարան», «Սովետական վեպի հիսուն տարին» մատենաշարերը: Մեկամյա գեղարվեստական հրատարակությունների թիվը 90—100 հատոր է:

«Խսկյուստովո»: Լույս է ընծայում պիեսներ, կինոսցենարներ, աշխարհի խոշորագույն թատերագիրների՝ Շեքսպիրի, Մոլիերի, Իրսենի և այլոց երկերի ժողովածուները, առանձին պիեսներ՝ շքեղ նկարազարդ, գիտական հարուստ ապարատով: Մասնագետների և բազմամիլիոն ընթերցողների պահանջները բարարարվում է «Ժամանակակից թատերագրություն» ամենամյա տրամախուով, «Թատերագրի գրադարան», «Կինոգրամատուրգի գրադարան», «Խրատասահմանյան կինոդրամատուրգիա» և այլ մատենաշարերով:

«Սովետական Ռուսիա»: ՌՍՖՍՀ Հրատարակումի և Գրողների միության բաղմամբ չորս հրատարակչությունը: Տպագրում է մեծ մասամբ Ռուսաստանի ֆեդերացիայի գրողների երկերը՝ առանձին գրքերով, ժողովածուներով, գրքեր մանուկների համար:

Կենտրոնական այլ հրատարակչություններ: Մոսկվայում գործող «Վոենիզդատ», «Պրոֆիզդատ», «Պոլիտիզդատ», «Միսլ», «Կոլոս», «Զնանիե» և այլ հրատարակչություններ իրենց թեքումով շրջանից բացի հրատարակում են նաև այդ բնագավառների հետ առնչվող գեղարվեստական երկեր: Օրինակ, «Վոենիզդատի», «Սովետական ռազմական վեպը» մատենաշարի տպաքանակը 200 հազարի է հասնում: «Պոլիտիզդատի» գեղարվեստական հրատարակչությունների մեջ մեծ տեղ են բռնում աթեիստական բովանդակությամբ ստեղծագործությունները: «Զնանիեն» թողարկում է «Գիտական ֆանտաստիկա» վիպաշարը, «Պրոֆիզդատը»՝ բանվորական թեմաներով գրքեր, «Կոլոսը»՝ գյուղական, «Միսլը»՝ աշխարհագրական-ճանապարհորդական:

Երկամասային, մարզային, զոտիների (տեղական) հրատարակչություններ: Ռուսաստանի ֆեդերացիայի ընթերցողների պահանջները բավարարում են նաև այսպիսի տասնյակ հրատարակչություններ: Սրանք հիմնականում բաղմացնում են երկրամասի կամ մարզի հեղինակների գործերը և դասականների երկերի ժողովածուները: Օրինակ, Սվեբլովսկում են հրատարակվել Մամին-Միբիրյակի, Բեռնտիկովի առավել լիակատար երկերի ժողովածուները, Նովոսիբիրսկում՝ Պ. Պ. Նրշովինը: Մատենաշարերից շատերը բնութագրում են երկրամասի դրական դեմքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Библиография художественной литературы, стр. 61—79.

Թ Ե մ ա 6. Հայերեն գրական-գեղարվեստական երկերի ժամանակակից հրատարակչությունները

Զորահարյուր տարուց ավելի հայ գեղարվեստական գիրքը, ինչպես հայ գիրքն ընդհանրապես, տպագրվել է հայկական բնաշխարհից դուրս: 1512—13 թթ. վենետիկում լույս տեսած հինգ

Հնատիպերից մեկը գեղարվեստական է: Դա «Տաղարան է սաք վերնագրով մի ժողովածու է, որն ընդգրկում է միջնադարյան բանաստեղծների Հովհ. Բլկուրանցու, Մկրտիչ Նաղաշի, Ֆրիկի և այլոց տաղերը, Ն. Շնորհալու հանելուկները: Մինչև 19-րդ դարի կեսերը բավական շատ գեղարվեստական գրքեր են տպագրվել Վենետիկում, Ամստերդամում, Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Մադրասում, Կալկաթայում, Ն. Նախիջևանում, Մոսկվայում: Այդ դարի երկրորդ կեսից տպագրությունը կենտրոնացավ երկու խոշոր քաղաքներում՝ Թիֆլիսում և Կ. Պոլսում: Եվ միայն սովետական կարգեր հաստատվելուց հետո է, որ հայ տպագրությունը կենտրոնացավ Հայաստանի մայրաքաղաք Երևանում: Գրատպությունը, որ մինչ այդ անձնուրաց անհատների և ղանազան ընկերությունների մասնավոր նախաձեռնությամբ էր, պետական հզոր միջոցներով ու հովանավորությամբ գործ դարձավ: Վերացավ սնանկացման, փակվելու վտանգը, ապահովվեց նրա անընդհատ վերելքն ու ընդլայնումը:

Հայաստանի կառավարության 1921 թ. հունիսի 8-ի դեկրետով հիմնադրվեց Հայաստանի պետական հրատարակչությունը (Հայպետհրատ): Բաղմամշյուղ այս հրատարակչության ներսում ստեղծվեց գեղարվեստական բաժին: Այնուհետև լույս տեսած հայերեն գեղարվեստական գրքի գերակշռող մեծամասնությունը կրում է այս հրատարակչության նշանը: 1935-ին ստեղծվեց Մանկապատանեկան գրականության բաժին: Հայպետհրատի գեղարվեստական բաժինը վարել են մեր մշակույթի անվանի ներկայացուցիչներ Պ. Մակինյանցը, Գ. Լևոնյանը, Ե. Չարենցը, Ռ. Զարյանը և ուրիշներ: Հայպետհրատի սկզբնական շրջանում հատկապես բեղուն էին չարենցյան տարիները (1928—35 թթ.): Մեծ բանաստեղծը ամենից առաջ արդի և սկսնակ հեղինակների հրատարակողը, խորախուսողն ու խմբավիրն էր, ապա և դասական գրականության վերականգնացնողը: Գրականագետ-արվեստաբան Ռ. Զարյանը հիշում է, որ Չարենցը նաև կենդանի դասականների հրատարակելու սկզբնավորողը եղավ՝ լույս ընծայելով Շիրվան-դադեի և Նար-Դոսի երկերի ժողովածուների բաղմահատուրները. («Գրքերի աշխարհ», 1970, նոյեմբ. 10): Տեսագաշտից դուրս չմնացին նաև արևմտահայ հեղինակները. Հ. Պարոնյան, Ե. Օտյան, Պ. Դուրյան, «Արևմտահայ բանաստեղծներ» ժողովածուն և այլն:

Զարենցի ընթերցասիրությունը, գիտելիքների հսկայական պա-
 շարը հնարավոր դարձրին ընտրել աշխարհի գրականություններից
 ահրաժեշտն ու լավագույնը: Խոստուն է այդ գրքերի լոկ ցանկն իսկ
 ուսանականից՝ Դոստոևսկու «Երկերի ժողովածուի» առաջին հա-
 տորը, Տուրգենևի «Որսորդի հիշատակարանից», Պուշկինի «Կապի-
 տանի աղջիկը», «Դուբրովսկի», Գոգոլի «Տարաս Բուլբա», «Լիր-
 մոնտովի «Մեր ժամանակի հերոսը»... Արտասահմանյան գրակա-
 նությունից՝ Շեքսպիրի «Համլետը», «Օթելլոն», «Վենետիկի վա-
 ճառականը», Սվիֆտի «Գուլիվերի ճանապարհորդությունը», Սեր-
 վանտեսի «Դոն Կիսոտը», Բալզակի «Հայր Գորիոն», Ֆլոբերի
 «Տիկին Բուվարին», Աբրա Պրեվոյի «Մանոն Լեսկոն», Ռեմարկի
 «Արևմտյան ֆրոնտում անփոփոխ է»... ՍՍՀՄ ժողովուրդների
 գրականություններից՝ «Նմուշներ» (ադրբեջանական և վրացական
 գրականություններից), Ա. Զավախաշվիլու «Արսեն Մարաբդելի»,
 Օրդուբադի «Մշտնուպատ Թավրիզ», Շևչենկոյի «Կոբզար»... Առա-
 ջին համաշխարհային պատերազմի և նրան հաջորդող տարիների
 նյութական սուղ պայմաններում, հրք ընդհատվել էր գրահրատա-
 րակչությունը, հսկայական էր «Պետհրատի էժանագին գրագարան»
 մատենաշարի նշանակությունը: Ցածրորակ թղթով, ստվարաթղթե
 կաղմով, պարզ ու ճաշակով ձևավորված տասնյակ այդ գրքերը
 գրավիչ են իրենց ընտիր բովանդակությամբ, հայ ու համաշխար-
 հային հին ու նոր գլուխգործոցներով: Եվ դժվար է պատկերացնել
 այդ ժամանակի ընթերցողի կարգալու ծարավը հագեցնելու մի
 ավելի հարմար ձև ու միջոց: Զարենցը անդուգական հմտությու-
 ն է ցուցաբերել գրողների ընտիր երկերը հրատարակելու գործում:
 Նույնիսկ այսօր խորին հիացմունքով ենք թերթում նրա խմբա-
 գրած Թումանյանի «Գեղարվեստական երկերը», Սունդուկյանի
 «Կատակերգություններ, արձակ երկեր, նամակներ», Օտյանի
 «Երկերի ժողովածուն», Զարենցի «Երկերը»: Առանձնապես խնամ-
 քով ու պատասխանատվությամբ է կազմված դրանց գիտական
 մասը՝ ծանոթագրություններ, բառարանը, առաջաբանը և այլն:
 Հետեւելով հայ տպագրության ավանդույթներին և Մոսկվայի ա-
 ռաջնակարգ «Academia» հրատարակչությանը՝ մեծ ուշադրությու-
 ն էր դարձվում մատենագիտությանը: Սունդուկյանի ժողովածուի
 վերջում ղեկավարած «Բիրլիսգրաֆիան» օրինակելի է մինչև օրս էլ:
 Հրատարակությունների շապիկներին բերվում էր արդեն հրատա-

րակված և հրատարակվելիք գրքերի ցանկը: Չարենցը հատուկ խնամքով է վերաբերվել գրքերի ձևավորմանն ու նկարազարդումներին: Նրա նախաձեռնությամբ 1930 թ. հունիսի 17-ին Գրողների տանը տեղի է ունեցել «Գրքի կուլտուրայի մասին» բանավեճ, ուր ղեկուցումով հանդես է եկել ինքը: Իր շուրջը համախմբելով շնորհալի նկարիչ-գծանկարողների, այդ տարիներին հրատարակեց մի շարք գրքեր, որոնք իրենց ձևավորումով մինչև այժմ էլ հիացմունք են պատճառում: Այդպիսին են Չարենցի «Գիրք ճանապարհին», Բակունցի «Սև ցելիքի սերմնացանները», Գորկու «Բանաստեղծություններ և լեզենդներ», «Սասնա ծռերի» Ա. հատորը՝ Հ. Կոջոյանի գծանկարներով, Մահարու «Մրգահասը», Ֆիրդուսու «Ռուստոմ և Զոհրաբը»՝ Մ. Սարյանի, Գ. Սարյանի «Միջօրէն»՝ Հ. Շավարշի ձևավորումներով:

Հայրենական պատերազմի տարիներին Հայպետհրատի գեղարվեստական հրատարակությունների մեջ առանձնանում են Դեմիրճյանի ու Զորյանի պատմավեպերը, Ն. Զորյանի «Արա Գեղեցիկը», հայրենասիրական թեմաներով այլ դործեր:

Վերջին երեսնամյակում հայրենի ու թարգմանական առանձին ստեղծագործությունների տարեկան երկու-երեք հարյուր անուն հրատարակությունների մի ղգալի մասը հայ դասականների և ժամանակակից գրողների երկերի բաղմահատոր ժողովածուներն են: Կարճ ժամանակում հայ ընթերցողի սեղանին դրվեց համաշխարհային գրականության գլուխգործոցների մի պատկառելի մասը: Այդ երեսում է թեկուզ միայն հինգ-տաս և ավելի հատորներով երկերի ժողովածուների ոչ լրիվ ցանկից. Պուշկին, Տոլստոյ, Զեյսով, Տուրգենև, Գորկի, արևմտաեվրոպական և ամերիկյան հեղինակներից՝ Շեքսպիր, Բալզակ, Ժյուլ Վեռն, Զեկ Լոնգոն, Մայն Ռիդ, Դրաշվեր: Բոտ հաշվումների, հիսուն տարում (1921—1970 թթ.) տպագրվել է 6200 անուն գեղարվեստական գիրք (Մ. Դավթյան, Կեսդարյա պատմություն:— «Սովետ. Հայաստան» լրագիր, 1971, հոկտ. 27): Վերջին շրջանի մատենաշարային հրատարակություններից են «Արկածային գրադարան», «Պատմվածքներ. XX դար», «Սփյուռքահայ գրողներ», «Իմ առաջին գիրքը», «Հայ դասականներ», «Ռուս դասականներ»:

Բացի գեղարվեստական գրքերից, հրատարակչության տարեկան թողարկումների մեջ առանձնականների և հասնում գրականու-

թյան ու տեսության վերաբերյալ աշխատությունները, գրականագիտական ուսումնասիրությունները, գրողներին նվիրված գրական-ֆնանդատական հանրամատչելի ակնարկները:

1964 թ. կեսերից Հայպետհրատը վերանվանվեց «Հայաստան»: Նրա կազմում, բացի հայ գրականություն, թարգմանական և մանկապատանեկան բաժիններից, կազմակերպվեց նաև հայ գրականությունը ուսերեն թարգմանությունների բաժին: Առավել կատարելագործվեց գեղարվեստական գրքի ձևավորումն ու նկարազարդումը: Այս ասպարեկում մեծ վաստակ ունի Գր. Խանջյանը, ապա և Ռ. Բեդրոսյանը, Մ. Սոսոյանը, Ան. Գասպարյանը, Վ. Մանգակունին, Ալ. Գրիգորյանը, Հ. Սիրավյանը, Զ. Գրիգորյանը:

1976 թ. «Հայաստան» հրատարակչության գեղարվեստական բաժինների հիմքի վրա ստեղծվեց մասնագիտացված առանձին հրատարակչություն՝ «Սովետական գրող»: Հայերեն գեղարվեստական գրքի տպագրությունը դրվեց առավել լայն հունի մեջ:

Ներկայումս բացի «Սովետական գրողից», գրական-գեղարվեստական գրքեր են տպագրում երեք խոշոր բազմաճյուղ հրատարակչություններ՝ «Հայաստանի գիտությունների ակադեմիայի», «Լույս» և «Նրևանի պետական համալսարանի»:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչություն: Հիմնվել է 1930-ական թթ. կեսերից նախ իբրև ՍՍՀՄ ԳԱ Հայկական բաժանմունքի, իսկ 1943-ից ՀՍՍՀ նորակազմ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն: Թողարկում է Ակադեմիայի ինստիտուտների գրական արտադրանքը: Գեղարվեստական գրականության գծով իրականացնում է հայ դասականների երկերի լիակատար ժողովածուների ակադեմիական հրատարակությունը: Արդեն ավարտվել են Խ. Աբովյանի, Գ. Սունդուկյանի, Հ. Պարոնյանի, Ռ. Պատկանյանի, Պ. Դուրյանի երկերի հրատարակությունները, ընթացքի մեջ են Դ. Դեմիրճյանի, Ա. Բակունցի, Մ. Նալբանդյանի երկերի լիակատար ժողովածուների ակադեմիական հրատարակությունները: 1966 թ. սկսվել է «Գրական հուշարձաններ» մատենաշարը, որով արդեն լույս են տեսել Ռուսթավելու «Ընձենավորը», Դանթեի «Աստվածային կատակերգությունը», Շեքսպիրի «Քրոնիկները» (գիրք 1—2), «Բենվենուտո Զելինիի կյանքը», էքերմանի «Զրույցներ Գլոբիի հետ», «Վասիլ Դիգենիս Ակրիտաս»: Գրականագիտական սովորածավալ հրատա-

րակություններ են Մ. Արեղյանի «Հայ հին գրականության պատմությունը», նրա անվան ինստիտուտի գիտաշխատողների պատրաստած «Հայ նոր գրականության պատմությունը», «Սովետահայ գրականության պատմությունը» գրական հարցերին կամ առանձին հեղինակներին նվիրված տասնյակ մենագրություններ ու ժողովածուներ:

1964 թ. հրատարակչությունների վերակառուցումից հետո Լրեք-չորս տարի անվանվեց «Գիտություն», բայց այնուհետև նորից կոչվեց ներկա անունով:

«Լույս»: 1955 թ. Հայպետհրատի Ուսումնամանկավարժական բաժնի անջատումով ստեղծվեց Ուսումնահրատը, որը 1964 թ. վերանվանվեց «Լույս»: Հիմնական թեքումը ուսումնական-մանկավարժական գրականության հրատարակումն է: Տպագրում է ամեն տեսակ դասագրքեր հանրակրթական դպրոցների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, սփյուռքահայ երեսանների համար, մանկավարժական-մեթոդական ձեռնարկներ ուսուցիչների և ծնողների համար: Ունի գրական-գեղարվեստական բաժին և «Դպրոցական գրադարան» մատենաշարով աշակերտության համար հրատարակում է ծրագրային գրականություն: Լույս են տեսել հայ անցյալի և ժամանակակից գրողների ժողովածուները:

Երևանի պետական համալսարանի հրատարակչություն: Ստեղծվել է 1922 թ.: Սկզբնական շրջանում տպագրությունը իրականացվում էր ապակետիպ եղանակով: Հայրենական պատերազմից հետո այս հրատարակչությունն ընդլայնվեց և այժմ Հայաստանի հինգերորդ խոշոր բաղմամջուղ հրատարակչությունն է: Տարեկան շուրջ 70 տպագիր արտագրանքից մի նշանակալի մասը գրականագիտական բնույթի են: Հրատարակում է իր դասախոսների գրականության դասագրքերը, գրական-բանասիրական ուսումնասիրությունները:

1964—68 թթ. վերանվանվեց «Միտք», բայց այնուհետև շարունակվեց կոչվել Երևանի պետական համալսարանի հրատարակչություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հրատարակչական գործը Սովետական Հայաստանում, Ե., 1972, 48 էջ:

Թ Ե մ ա 7. Կենտրոնական, մարզային, հանրապետական գրական-գեղարվեստական ուսերեն պարբերականներ

Մեր երկրում լույս տեսնող շուրջ յոթ հազար հանդիսների մեջ զգալի տեղ են գրավում գրական-գեղարվեստական թեքում ունեցողները: Հանդիսանալով գրական կյանքի հայելին, դրանք միաժամանակ հասարակական մտքի ամբիոններ են, որտեղից ակտիվ պայքար է մղվում հանուն մարքս-լենինյան գաղափարախոսության, ընդդեմ բուրժուական հոսանքների ու հայացքների: Եվ բնական է, որ սովետական գրական մամուլը միշտ էլ եղել է Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ուշադրության կենտրոնում: Այդ մասին են վկայում մեր մամուլի համար ուղենիշ հանդիսացող բաղմամբով որոշումները, որոնցից են.

1940 թ. «Գրական քննադատության և մատինադիտության մասին»,

1946 թ. «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին»,

1948 և 1951 թթ. «Կրոկոդիլ» հանդեսի մասին,

1948 և 1958 թթ. «Օգոնյոկ» հանդեսի մասին,

1949 թ. «Զնամյա» ամսագրի մասին. (1946 թ. «Զվեզդա» և «Լենինգրադ, ամսագրերի մասին» որոշման արդյունքների ստուգման առթիվ),

1956 թ. «Գրականության տեսության և պատմության հարցեր» ամսագիր հրատարակելու մասին»,

1959 թ. «Գրական-գեղարվեստական ակամախներին մասին»,

1960 թ. «Սմենա» ամսագրի աշխատանքները բարելավելու մասին:

Գրական մամուլի նկատմամբ կուսակցության մշտական հույատարությունը նպաստել է նրանում էական ճշգրտումներ մտցնելուն, ճիշտ ուղղություն տալուն, նրա գրական-գաղափարական առաջարկությունը պահպանելուն:

Ներկայումս ուսերեն լեզվով հրատարակվում են շուրջ 40 առումն գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական ամսագրեր:

Դրանցից հնագույններն են. «Զվեզդա», «Օկտյարր», «Նովի միր», «Մոլոդայա զվարդիա», «Սիրիլսկիե օգնի», որոնք լույս են

ուեսնում 1922—25 թթ.: Համեմատաբար նորերն են Սովետական
գրողների երկրորդ համագումարից (1954, դեկտեմբեր) հետո
ստեղծված «Դրուժբա նարոդով», «Յունոստ», «Նևա», «Խնոստրան-
նայա լիտերատուրա», ապա և «Մոսկվա», «Դոն», «Պոդյոմ»,
«Ուրալ», «Նաշ սովրեմեննիկ», «Սևվեր», «Վոդլա»...

Ռուսերեն լիզվով հրատարակվում են նաև այնպիսի ամսա-
գրեր էլ, որոնք տպագրում են միայն զրականագիտական նյութեր:
Դրանք են՝ «Վոպրոսի լիտերատուրի» (1957-ից) և «Րուսակայա
լիտերատուրա» (1958-ից):

Մեկական ուսերեն զրական ամսագիր են հրատարակում
Միոթենական հանրապետությունները. Ուկրաինան՝ «Րադուգա»,
Ուլրեկստանը՝ «Զվեզդա վոստոկա», Ղաղախստանը՝ «Պրոստոր»,
Հայաստանը՝ «Լիտերատուրնայա Արմենիա», Վրաստանը՝ «Լիտե-
րատուրնայա Դրուդիա» և այլն:

Գրականագիտական թեքում ունի «Լիտերատուրա վ շկոլե»
ամսագիրը, որի խնդիրը դպրոցներում զրականության դասավան-
դումը կատարելագործելն է: Նրանում տպագրվում են զրականա-
գիտական հոդվածներ, գրախոսություններ, զրականության ցան-
կեր:

Գրականագիտական-բանասիրական ուսումնասիրություններով
հարուստ են «Իզվեստիա Ան ՍՍՍՐ: Սերիա լիտերատուրի և յադի-
կա» (1940-ից), «Վեստնիկ Մոսկովսկովու ունիվերսիտետա: Սե-
րիա ֆիլոլոգիա, ժուրնալիստիկա» (1946-ից), «Վեստնիկ Լենին-
գրադսկովու ունիվերսիտետա: Սերիա իստորիա յադիկա և լիտե-
րատուրի» (1946-ից):

Վերոհիշյալ բոլոր ամսագրերն էլ 15—25 մամուլ խոշոր ծա-
վալով են և անվանվում են «հաստ» ամսագրեր: Կան 5—6 մա-
մուլանոց «բարակ» կոչվող պարբերականներ էլ, որոնք թեև հա-
սարակական-քաղաքական թեքում ունեն, բայց տպագրվում են
նաև գեղարվեստական փոքրածավալ ստեղծագործություններ,
փոքրիկ գրախոսականներ, հարելյանական ակնարկներ: Այդպիսի
ամենատարածված հանդեսներից են «Օգոնյոկը», երգիծական
«Կրոկոդիլը», ևրիտառարդական «Սմենան», կանանց «Րաբոտ-
նիցան», «Կրեստյանկան»:

Ժամանակակից ամենախոշոր ուսերեն զրական լրագրերը
հետևյալ երկու շաբաթաթերթերն են.

«Լիտերատուրնայա գաղետա»։ ՍՍՀՄ գրողների միության օրգան։ Հրատարակվում է 1929-ից։ 1965-ից լույս է տեսնում 16 մեծադիր էջերով։ Մավալով ամենամեծն է ՍՍՀՄ-ում։ Հասարակական-քաղաքական, հրապարակախոսական հոդվածներին ղուգընթաց նրա էջերում զգացվում է մեր ամբողջ հրկրի գրական կյանքի ամենօրյա հերքը, աշխարհի առաջավոր մտքի ամենաթարմ նորությունները։

«Լիտերատուրնայա Րոսսիյա»։ ՌՍՖՍՀ գրողների միության օրգանն է։ Հրատարակվում է 1963-ից (փոխարինելով 1958-ից լույս տեսնող «Լիտերատուրա ի ժիզն»-ին)։ Նրա ուշագրության կենտրոնում Ռուսաստանի ֆեդերացիայի գրական կյանքն ու գրողների ստեղծագործություններն են։

ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Библиография художественной литературы, стр. 106—116.

Թ Է մ ա 8. Սովետահայ գրական-գեղարվեստական պարբերականներ

Հայ նոր գրականության սկզբնավորումը անմիջականորեն կապված է հայկական մամուլի հետ։ 1843-ին «Բաղմավկալում» տպագրվեցին Ղ. Ալիշանի աշխարհաբար բանաստեղծությունները։ 1858-ին հիմնադրված Ստ. Նազարյանի և Մ. Նալբանդյանի «Հյուսիսափայլը» հայ նոր գրականության գրողակազմի բաղադրությունն էր։ Հետագայ տասնամյակներում «Կոռնկ Հայոց աշխարհի», «Արևելյան մամուլ», «Փորձ», «Աղբյուր», «Մուրճ», «Անահիտ», «Մշակ», «Մեղու», «Արձագանք», «Նոր դար» և այլ տպագրերի ու լրագրերի էջերում միայն հնարավոր դարձավ հայ դատականների հրեման մեծածավալ հրկրի լույսընծայումը։ Սակայն այս պարբերականները, փոքր բացառությամբ, կոչված էին լուծելու հասարակական-մշակութային բազում խնդիրներ։ Միայն գրական թեքումով տպագիր օրգաններ չկային։ Նման պարբերականների ղոյությունը հնարավոր էր գաղափարական կաշուն հենարանի և պետական իշխանության պայմաններում։ Այդպիսի պայմաններ ստեղծվեցին 1920-ից հետո։ Սովետական իշխանության տարիներին պահանջ-

վեց շուրջ մեկ տասնամյակ, մինչև որ մի շարք կարճատև գրական պարբերականներից հետո («Մուրճ», «Նորք», «Վերելք», «Գրական դիրքերում», «Նոր ուղի») հիմնադրվեց հայերեն ամս-նաստվար ու տեական գրական ամսագիրը:

«Խորհրդային գրականություն»: Հայաստանի գրողների միության օրդան: Հրատարակվում է 1934 թ. մայիսից: 1940 թ. սեպտեմբերից մինչև 1942 թ. հոկտեմբերը վերանվանվել է «Սովետական գրականու-թյուն»: 1943—55 թթ. կոչվել է «Սովետական գրականություն և արվեստ», այնուհետև՝ «Սովետական գրականություն»: Հիմնադր-ման օրից ընթերցողին է ներկայացնում նախ սովետահայ գրող-ների ստեղծագործությունները, ապա նմուշներ ռուս, ՍՍՀՄ ժողո-րդների և արտասահմանյան գրականություններից, կուսակցու-թյան և կառավարության որոշումները գրականության և մշակույ-թի մշուս բնագավառների վերաբերյալ, գրականագիտական-քննա-դատական հոդվածներ, գրախոսություններ:

«Գառուն»: ՀԼԿԵՄ Կենտկոմի և Հայաստանի սովետական գրողների միության օրդան: Հրատարակվում է 1967-ից: Մեծ տեղ է հատկացնում երիտասարդ ստեղծագործողներին: Բազմաթեմ է: Տպագրում է նաև հրապարակախոսական հոդվածներ հասարակա-կան կյանքի, մշակույթի այլ ասպարեզների վերաբերյալ, գրակա-նագիտական ակնարկներ, հարցազրույցներ, գրախոսություններ: Աչքի է ընկնում լավ ձևավորումով, նկարազարդումներով: Իր այս կողմերով այն նման է կենտրոնական «Մոսկվա», «Նևա», ամսա-գրերին:

«Լյուբրատորնայա Արմենիա»: Հայաստանի սովետական գրողների միության օրդան: Հրատարակվում է 1958-ից: Հիմնա-կանում սովետահայ, մասամբ նաև հայ դասականների ստեղծա-գործություններն է ներկայացնում ռուս ընթերցողներին:

«Գրական Աղբյուր»: Աղբյուրների գրողների միության օր-դանն է: Լույս է տեսնում այդ միության հայկական բաժանմունքի ուժերով: 1951—57 թթ. արմանախ էր: Այնուհետև վերածվեց ամ-սագրի: Տպագրում է Աղբյուրում տպրող հայ հեղինակների զր-վածքները, թարգմանություններ աղբյուրական և այլ ժողովուրդ-ների գրականություններից, գրական-քննադատական նյութեր:

«Կամուրջ»: Արմանախ Վրաստանի գրողների միության հայ-կական բաժանմունքի: 1961-ից մինչև այժմ հրատարակել է մի

շարք ժողովածուներ: Կատարում է նույն դերը, ինչ որ Ադրբեջանում «Գրական Ադրբեջանը»:

Գրական հետազոտություններ, բանավեճեր, գրախոսություններ են տպագրվում Հայաստանի մի շարք բանասիրական, գրական, հասարակական հանդեսներում ու գիտական ժողովածուներում, որոնցից են. «Լրաբեր» ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտությունների (հիմնադրման օրից՝ 1943-ից մինչև 1965 թ. կոչվում էր՝ «Տեղեկագիր»...): «Պատմաբանասիրական հանդես»: «Բանբեր Երևանի պետական համալսարանի», «Բանբեր Մատենադարանի», Համալսարանի, Արուլյանի անվան մանկավարժական ինստիտուտի և Քրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի «Գիտական աշխատություններում»:

Գրական-գեղարվեստական ոչ ծավալուն, բայց բազմաքանակ նյութեր են տպագրում նաև մի շարք փոքրածավալ հանդեսներ: Դրանցից են. կանանց համար նախատեսված «Հայաստանի աշխատավորուհի», սփյուռքահայության հետ մշակութային կապերի օրգան «Սովետական Հայաստան» ամսագիրը, ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրության «Կուլտուր-լուսավորական աշխատանք» երկամսյա հանդեսը, «Ողնի» կիսամյա երգիծական հանդեսը, «Պիոներ» մանկական ամսագիրը, «Սովետական մանկավարժ» ամսագրի հավելված «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» ամսագիրը:

Սովետահայ միակ գրական լրագիրը Հայաստանի գրողների միության օրգան «Գրական թերթն» է: Հրատարակվում է 1932 թ. շաբաթը մեկ, 1941 թ. գեկտ.— 1944 թ. գեկտ. բնդհատումով:

Գրական-մատենադիտական թեքումով է Հայկ. ՍՍՀ Հրատպետկոմի օրգան «Գրքերի աշխարհ» ամսաթերթը: Հրատարակվում է 1968 թ. սեպտեմբերից:

Իրենց էջերում գրական-գեղարվեստական նյութերին լայն տալարեղ են տալիս նաև Հայաստանի ոչ գրական թեքումով լրագրերը՝ «Սովետական Հայաստան», «Կոմունիստ» (ռուսերեն), «Երեկոյան Երևան», «Ավանդարդ», «Պիոներ կանչ», «Սովետ էրմանիստան» (ադրբեջաներեն), «Րյա թաղա» (քրդերեն), քաղաքային ու շրջանային այլ թերթեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հ. Յելեքյան, Հայաստանի պարբերական մամուլը․ սոցիալիզմի կառուցման պայքարում: Ե., ԳԱ հրատ., 1970, էջ 453—508:

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Թ Ե Մ Ա. 9. Գրական մատենագիտությունների տեսակներն ու կառուցվածքը

Սովետական Միության կենտրոնական գրական մատենագիտություններ: Հրատարակող հաստատություններն են. ՍՍՀՄ՝ Վ. Ի. Լենինի անվան պետական գրադարանը, Սալտիկով-Շչեդրինի անվան հանրաշին պրադարանը, մարզային ու հանրապետական խոշոր գրադարանները, ՍՍՀՄԳԱ ռուս գրականության ինստիտուտը (Պուշկինյան տուն), Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտը, ՍՍՀՄԳԱ Գիտական ինֆորմացիայի ինստիտուտն ու հասարակական գիտությունների հիմնական (ֆունդամենտալ) պրադարանը և այլն: Հայաստանում այդպիսի աշխատանք են կատարում ՀՍՍՀ Ար. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանը, Խնկո-Անդր անվան հանրապետական մանկական գրադարանը, Հայաստանի պետական գրապալատը, ՀՍՍՀ ԳԱ հիմնական գրադարանը, Գիտությունների ակադեմիայի նախագահությանը կից Գիտական-ինֆորմացիայի բաժանմունքը, Երևանի պետական համալսարանի Գրական կապերի կարինետը, Գրքասերների ընկերությունը:

Սրանցից յուրաքանչյուրը հրատարակում է իր թեքման, մասնագիտության և խնդիրներին համապատասխան գրական մատենագիտություններ: Ստեղծվել է մատենագիտական գրականության օրհցօր ավելացող հսկայական քանակություն: Անհրաժեշտ է, որ դրանցից օգտվող մանկ և մասնագետ, և առաջին հերթին գրադարանավարը, ձեռքն առնելով նոր կամ տարիներ առաջ լույս տեսած նման ուղեցույցը, կարողանա որոշել, թե ինչ նպատակով և ում համար է նախատեսված, ինչպիսի կառուցվածք ու բովանդակություն ունի, ինչպես պետք է օգտվել նրանից: Մասնագիտական այսպիսի ունակություններ ձեռք բերելուն կնպաստի մատենագիտական ձեռնարկների տեսակավորումը կամ դասակարգումը:

Ինչպես ընդհանուր, այնպես էլ գրական մատենագիտությունները դասակարգելիս նկատի է առնվում նրանց որևէ հատկանիշը: Նման մոտեցման դեպքում միևնույն մատենագիտությունը կարող է պատկանել և՛ մեկ, և՛ մի ալ տեսակի՝ նայած թե նրա որ հատկանիշն ենք հիմք ընդունում:

Նկատի ունենալով նպատակային, ընթերցողական հատկացվածությունը, այսինքն ընթերցողական ինչպիսի խմբի համար նախատեսված լինելը, գրական մատենագիտությունները բաժանվում են երկու հիմնական տեսակի. Հանձնարարական և Գիտաինֆորմացիոն:

Հանձնարարական են կոչվում մատենագիտական այն ցանկերը, որոնք նախատեսված են ընթերցողական տարբեր խմբերի համար, ամփոփում են որևէ բնագավառի վերաբերյալ ընտրովի, լավագույն գրականությունը, ընթերցողին օգնում են խորացնելու իր գիտելիքները:

Գրական հանձնարարական ցանկերը նվիրված են լինում որևէ գրողի, ժանրի, երբեմն շափածոյի կամ արձակի մի տեսակի: Սակայն բաղմարանակ ալ ցանկերը միանման չեն և իրենց հերթին բաժանվում են երկու ենթատեսակի: Մեկը՝ նախատեսված ընթերցող լայն շրջանների համար, մյուսը՝ մասնագետների:

Ընթերցող լայն շրջաններ ասելով հասկանում ենք նրանց, որոնց համար գրականությունը թեև մասնագիտություն չէ, բայց կապված են նրա հետ, զեղարվեստական խոսքը կենսական պահանջ է, զեղագիտական հաճույքի ու կատարելագործման միջոց: Խալտաբեղետ է նման ընթերցողների կազմը: Դրանք միջնակարգ կրթությունը բանվորներ ու կոլտնտեսականներ են, բարձրագույն կրթությունը ինժեներներ, գասատուներ, բանասիրական կրթության, բայց ալ բնագավառներում ծառայողներ, թոշակառուներ, տնտեսուհիներ: Նրանցից շատերի համար դժվար է ինքնուրույն կողմնորոշվել գրքերի անժադրածիր աշխարհում, սիրելի հեղինակի կամ նյութի վերաբերյալ գրքերից տարբերել կարեորը պակաս կարևորից: Ահա այսպիսի ընթերցողների համար մշակվել են մեկ-երկու էջից մինչև տաս, քսան, երբեմն ավելի էջերից բաղկացած մատենագիտական ցանկերի մի շարք ձևեր: Դրանք հիմնականում տպագրում են Հանրապետական գրադարանները և մասնավորական գրադարանների միջոցով հասցնում ընթերցողներին:

Մասնագետների համար նախատեսված հանձնարարական մատենագիտական ցանկերը հիմնովին տարբերվում են լայն շրջանների համար նախատեսվածներից: Մրանցում հավաքվում են թեմայի վերաբերյալ հրապարակում եղած բոլոր այն նյութերը, որոնք գիտական արժեք են ներկայացնում: Բացառվում են մանր, ոչ կարևոր համարվող և զաղափարապես խորթ, ետադիմական նյութերը: Այսպիսի մատենագիտական ցանկերը օգնում են գրականագետներին, ասպիրանտներին և այլոց՝ խորանալու մասնագիտության մեջ, տեղյակ լինելու հարցի շուրջ եղած կարևորագույն գրականությունը: Նյութի ընդգրկման առումով թեև այսպիսի ցանկերի շրջանակները նեղ են, բայց անհրաժեշտ աղբյուրներ են, եթե տվյալ թեմայի կամ գրողի մասին գիտա-ինֆորմացիոն մատենագիտություններ դեռևս չեն հրապարակվել:

Գիտա-ինֆորմացիոն մատենագիտություններ: Այնպիսիներն են, որոնցում ընդգրկված է տվյալ հարցի վերաբերյալ ամբողջ գրականությունը: Իհարկե, բացարձակ լիակատար մատենագիտություններ չկան: Կադմումը անհնար կամ, լավագույն դեպքում, երկար ժամանակ պահանջող ու դժվար իրագործելի է: Այստեղ տեղին է հնչում ֆրանսիացի մեծ բանաստեղծ Ալֆրեդ դը Մյուսսի խոսքը թե՛ «Մատենագիտական ձեռնարկները ճակատագրորեն անկատար են»: Այդ պատճառով էլ ընդունված է այդպիսի մատենագիտություններ կազմելուց առաջ որոշել նրանց ընդգրկման սահմանները, այսինքն՝ ինչ ժամանակաշրջան, ինչ աղբյուրներից և ինչպիսի նյութեր է հավաքված: Ահա այսպիսի սահմաններում է, որ առավելագույն լիակատարությունը պարտադիր է: Գիտա-ինֆորմացիոն մատենագիտությունը պետք է ընդգրկի բոլոր նյութերը, առանց բացառություն:

Միանգամայն պարզ է գրական մատենագիտությունների տեսակավորումը ըստ հրատարակչական հատկանիշի: Այս դեպքում նրանք բաժանվում են դարձյալ երկու տեսակի. Առանձին զբոլ և Ռեգրեգիլ:

Անվանումներն արդեն բնորոշում են այս տեսակներից յուրաքանչյուրին: Նկատենք միայն, որ ներգրքային են կոչվում ոչ միայն սրէ գրքի կամ ժողովածուի ներսում, առանձին բաժնով ներկայացված ցանկերը, այլև ամսագրերում ու լրագրերում զետեղվածները:

Գրական մատենագիտությունները դասակարգելիս ավելի հաճախ նկատի է առնվում նրանց բովանդակությունը: Ըստ այդմ նրանք բաժանվում են երեք տեսակի.

ա. Բաղմահեղինակ,

բ. Անհատական,

գ. Թիմատիկ:

Բաղմահեղինակ են կոչվում այն մատենագիտությունները, որոնք ընդգրկում են որևէ ազգային գրականության տեական մի ժամանակաշրջանը, հատվածը և անպայման բաղմաթիվ հեղինակներ: Նյութերը խմբավորվում, դասավորվում են մեծ մասամբ հետևյալ կարգով.

Մարքսիզմի հիմնադիրների և մարքսիստ-հեղափոխականների գրականագիտական-քննադատական աշխատությունները:

Սովետական գրականագետ-քննադատների ընդհանուր բնույթի աշխատությունները, գրականության պատմությունները:

Գեղարվեստական ժողովածուները; բրեստոմատիաները, դասագրքերը:

Գրականության այդ նույն շրջանի վերաբերյալ նախկինում հրատարակված մատենագիտական բաղմահեղինակ ցանկերն ու տեղեկատու ալլ հրատարակությունները:

Այս ընդհանուր բաժիններին հաջորդում են ավել ժամանակաշրջանի հեղինակները՝ ժամանակագրական կամ այբբենական կարգով: Վերջում օժանդակ ցանկերն են:

Նյութերի խմբավորման այս կարգը ոչ միշտ է պահպանվել հայկական բաղմահեղինակ մատենագիտություններում: Դրա պատճառը փորձի պակասն է և տեսական հարցերի մշակման դեռևս ցածր մակարդակը:

Անհատական մատենագիտությունները նվիրվում են որևէ մեկ հեղինակի և ընդգրկում են նրա ամբողջ ստեղծագործությունն ու նրա մասին հնարավորին չափ լիակատար գրականությունը: Իրենց հերթին սրանք ևս աճեն ենթատեսակներ: Անհատական այն մատենագիտությունները, որոնցում միայն գրողի ստեղծագործություններն են, կոչվում են բնագրերի մատենագիտություններ: Հայերեն այդպիսիները չկան, մինչդեռ ռուսերենը հարուստ է այդպիսիներով: Ներկայացվում է գրողի բոլոր ստեղծագործությունները՝ բաղմակողմանի տեղեկություններով և ծանոթագրություն-

ներով, մոտավորապես այնպիսի, ինչպիսին մեզանում տրվում է դասականների երկերի լիակատար ժողովածուների ծանոթագրություններում: Ռուսերեն բնագրերի մատենագիտության լավագույն նմուշներից են Ն. Ա. Կուլմինայի «Լեհմոնտովի բնագրերի մատենագիտություն» (Մ.—Լ., 1936), Դ. Ս. Բալուխատիի «Մաքսիմ Գորկու զրական աշխատանքը» (Լ., 1934): Անհատական մատենագիտություններում առանձնանում են նաև Կենսամատենագիտությունները: Այսպես են կոչվում այնպիսիները, որոնց սկզբում տրվում է հեղինակի մանրամասն, ամբողջական կենսագրությունը: Մատենագետը այս դեպքում կատարում է գրականագետի աշխատանք, ուսումնասիրելով գրողի կյանքի հանդամանքները, նոր փաստերի հիման վրա շարադրում է գրողի գիտական կենսագրությունը: Այսպիսի կենսագրությունը չպետք է շփոթել հաճախ անհատական մատենագիտությունների սկզբում զետեղված գրողի կյանքի և գործունեության վերաբերյալ զրաքննադատական ակնարկի հետ:

Անհատական մատենագիտությունները մեծ մասամբ հետևյալ կառուցվածքն ունեն.

I մաս. Հեղինակի կենսագրությունը կամ կյանքի և գործունեության ժամանակագրությունը, և կամ զրական-քննադատական ակնարկ: Առաջարկն մատենագիտություն: Կառուցվածքի, ընդգրկման մասին:

II. մաս. Հեղինակի ստեղծագործությունների ցանկը հետևյալ հաջորդականությամբ.

Հեղինակի երկերի ժողովածուները,

Ստեղծագործություններն առանձին գրքերով,

Ստեղծագործությունները պարբերական մամուլում,

Հոդվածները զրականության և մշակույթի այլ ճյուղերի վերաբերյալ,

Հրապարակախոսություն,

Նամակներ,

Կատարած թարգմանություններ և փոխադրություններ,

Կազմած և խմբագրած գրքերը:

III մաս. Նրա մասին գրականություն՝ հետևյալ հաջորդականությամբ.

Մարքսիզմի հիմնադիրների և մարքսիստ հեղափոխականների
ուսումնասիրությունները, հոգվածները կամ ասույթները,

Գրքեր,

Հոգվածներ, ուսումնասիրություններ պարբերականներում,
ժողովածուներում,

Գրողը և արվեստը (ներառնազրեքով երգեր, կինոնկարներ,
ներան նվիրված ստեղծագործություններ, դիմանկարները և այլն),

Նախկինում նրա վերաբերյալ լույս տեսած մատենագիտական
ցանկեր, տեղեկատուներ:

IV մաս. Օժանդակ ցանկեր:

Վերնագրերի ու ենթավերնագրերի այսպիսի կազմը, իհարկե,
բարաբար կարգ չէ: Յուրաքանչյուր գրողի ստեղծագործության
կամ նրա մասին գրականության ցանկերի ենթավերնագրերի բա-
ժանումը կախված է նրանից, թե ինչ նախասիրություններ է ունե-
ցել, աշխատանքային, մասնագիտական ինչպիսի ուղի է անցել:
Ջոհրապը, օրինակ, եղել է իրավաբան և նրա ասպազա մատենա-
դիտության մեջ հավանաբար կառանձնացվեն այդ բնագավառի
վերաբերյալ նյութերը:

Թե՛նախկին և ն կոչվում այն մատենագիտությունները, որոնք
ընդգրկում են գրականագիտական որևէ թեմայի, բնագավառի
կամ հարցի վերաբերյալ գրականություն: Դրանք կարող են սահ-
մանափակվել միայն ազգային գրականության շրջանակներում,
կարող են և ունենալ ամբողջ լայն ծավալ: Օրինակ, «Հայ պատմա-
վիպագրությունը» թեմայով ցանկը կընդգրկի միայն հայ հեղի-
նակների ստեղծագործությունները, մինչդեռ «Հայաստանը պատ-
մավիպագրության մեջ» ցանկում, բացի հայ հեղինակների ստեղ-
ծագործություններից, կարող են բերվել ընդհանրապես բոլոր այն
երկերը, որոնք երբևէ կամ որևէ լեզվով գրվել են հայոց պատմու-
թյան թեմայով: «Քաղաքացիական կռիւների արտացոլումը հայ
գրականության մեջ» ցանկը կընդգրկի հայ հեղինակների երկերը,
իսկ «Քաղաքացիական կռիւների արտացոլումը գեղարվեստական
գրականության մեջ» ցանկը շատ ամբողջ համապարփակ կլինի:
Թեմատիկ ցանկերը մեծ մասամբ կազմվում են գրական կարեու-
րություն ունեցող, առօրեական հարցերի վերաբերյալ. «Մեր մրցա-
նակակիր զրոյները», «Կոլտնտեսային գյուղը գեղարվեստական

գրականության մեջ», «Սոցիալիստական ռեալիզմի տեսությունը» և այլն:

Գրական մատենագիտությունները կարելի է տեսակավորել նաև այլ հատկանիշներով, սակայն ամենից հաճախ դրանք ճանաչվում, վերլուծվում են ըստ վերը նշված հատկանիշների, հատկապես ըստ բովանդակության: Այդ դասակարգումով էլ հաջորդ բաժիններում կուսումնասիրվին հայկական և ռուսական գրական մատենագիտությունները: Իսկ այժմ անդրադառնանք դրանց մի բանի ընդհանուր կողմերին:

Նյութերի դասավորությունը: Ամենահարմար ձևը բոլոր բաժինների ներսում նյութերը ժամանակագրական, այսինքն ըստ տպագրության տարեթվերի դասավորելն է: Այդպիսի դասավորություն ունեն անհատական և բազմահեղինակ մատենագիտությունների մեծ մասը: Որոշ մատենագիտություններում էլ հեղինակի ստեղծագործությունները դասավորված են վերնագրերի, իսկ նրա մասին գրողներինը իրենց ազգանունների այբուբենի կարգով:

Օժանդակ ցանկեր: Այսպես են կոչվում մատենագիտությունների վերջում կցված անձնանունների, վերնագրերի և ուրիշ ցանկերը: Դրանք մատենագիտությունից օգտվելու, առավել շատ և բազմակողմանի տեղեկություններ ստանալու բանալիներ են: Բոլոր մատենագիտությունների համար պարտադիր է անձնանունների ցանկը: Նրանում պետք է արտացոլվեն տվյալ մատենագիտության մեջ հանդիպող բոլոր անունները, բացի մատենագրվող հեղինակի և զեղարվեստական երկերի հերոսների անուններից: Անհրաժեշտ ցանկերից է նաև վերնագրերի ցանկը, ուր մտցվում են գրողի բոլոր զեղարվեստական և այլ գրվածքների վերնագրերը: Անվերնագիր բանաստեղծությունների զեպքում, ինչպես նկարագրություններում, այնպես էլ ցանկում, բերվում է առաջին տողը: Որոշ զեպքերում օժանդակ ցանկերի կազմը պայմանավորված է մատենագիտության նյութերի դասավորությունից: Օրինակ, նյութերի այբբենական դասավորության դեպքում անպայման անհրաժեշտ է ժամանակագրական ցանկը: Հանդիպում են մատենագիտություններ (օր. «Արարատ» ամսագրի), որոնցում գրողների, հոգվածագիրների ցանկը անվանովի է «Հեղինակների ցանկ» և անջատվել մատենագիտության մեջ հանդիպող մյուս անուններից, որոնք կոչվել են «Անձնանունների ցանկ»: Նման բաժանումը որևէ իմաստ չունի

և թյուրիմացությունների տեղիք է տալիս: Թերևս արդարացվում է գրական կապերի վերաբերյալ մատենագիտություններում թարգմանիչների առանձնացումը մյուս անունների ցանկից:

Լրացուցիչ ցանկեր: Սրանք պետք է տարբերել վերը հիշատակված օժանդակ ցանկերից: Լրացուցիչ ցանկերը ամփոփապես տվյալ մատենագիտություններից օգտվելու միջոց չեն, այլ տեղեկություն են հաղորդում մատենագիտության կազմման մասին: Այդպիսին է, օրինակ, մատենագիտությունը կազմելու համար օգտագործած պարբերականների ցանկը:

Նյութերի համակարգումը: Մատենագիտություններից շատերի նկարագրությունները համարակալված են: Դա երկու նպատակով է արվում: Նախ ցույց է տալիս, թե որքան նյութ է պարունակում, և հրկրորդ, որ ավելի էական է, հեշտացնում է օժանդակ ցանկերից օգտվելը: Այստեղ շտրաքանչյուր վերնագրից կամ անունից հետո դրվում է նկարագրությունների հերթական համարները, որոնցում հիշատակված է, և ընթերցողը հեշտությամբ գտնում է փնտրածը: Համարակալություն չլինելիս անվան կամ վերնագրի դիմաց դրվում է էջը: Այս դեպքում հնարավոր չի լինում ցույց տալ, թե քանի անգամ է հիշատակվում անունը կամ վերնագիրը:

Մատենագիտության բոլոր նկարագրությունները ունենում են մեկ, միասնական համարակալություն: Անձնանունների ցանկում հեղինակի մասին նկարագրությունները առնվում են փակագծերի մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Библиография художественной литературы, стр. 117—208.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Թ Ե մ ա 10. Գեղարվեստական գրականությունը և գրականագիտությունը ընդհանուր մատենագիտություններում

Հայկական գրական մատենագիտություններ են կոչվում բոլոր այն օջառները (անկախ լեզվից), որոնք հրատարակվել են հայ իրականության մեջ և ընդգրկում են բացառապես գեղարվեստական և գրականագիտական գրվածքներ: Այդպիսի մատենագիտություններն առանձին օրինակներ, փոքրածավալ ցանկերի ձևով, մեզանում երևան են եկել դեռևս հնագույն ժամանակներից: Ասկայն այսօրվա առումով, այլ-գիտելիքներից անջատ, զուտ-գրական մատենագիտական ցանկերի որոշ նմուշներ տեղեկվել են 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբներին: Ինչպես ճյուղային մյուս մատենագիտությունները, այնպես էլ գրականը, առանձնացվեց, ինքնուրույն բնագավառ դարձավ սովետական իշխանության տարիներին: Մինչև այդ գեղարվեստական գրականությունը և գրականագիտությունը հիմնականում արտացոլվում էին ընդհանուր մատենագիտական ցանկերում: Առանձին գրքով առաջին այդպիսի ցանկը ապագրել են 1810 թ. Վենետիկի Մխիթարյանները: «Ցուցակ ընդհանուր գրոց տպագրելոց ի Վենետիկ»: Այնուհետև նման ցանկեր լրացումներով հրատարակել են տասնյակ անգամներ: Վերջինը լույս է տեսել 1960 թ. «Գրացուցակ Մխիթարյան տպարանին. 1716—1960» վերնագրով: Սկսած 1840-ական թթ. նույնպիսի ցանկեր են հրատարակել նաև Վիեննայի Մխիթարյանները, ապա և Կ. Պոլսի Պալենց, Աշճյան, Մարգարյան, Զարդարյան և այլ խոշորագույն հրատարակչական տները: Արևելյան Հայաստանում այդպիսի անդրանիկ ծավալուն ցանկը հայտնի դրահրատարակիչ և գրավաճառ էնֆիաճյան եղբայրներինն է: Ցուցակ ամենայն ազգ հայերին մատենից, տպագրելոց ի Վենետիկ, ի Վիեննա, ի Կոստանդնուպոլիս, ի Կալկաթա, ի Զմյուռնիա, ի Մոսկով և հ' այլ քաղաքս: Վաճառին ի գրատան եղբարց Ավետիքա և Համբարձումա էնֆիաճյանց ի Տփլիս: Թիֆլիս, 1850, 24 էջ: Անցյալ դարի երկրորդ կեսին և ներկա դարի սկզբներին այդպիսի տասնյակ ցանկեր են հրատարակվել Թիֆլիսում, էջմիածնում,

Բաքվում, Շուշիում, Մոսկվայում, նոր նախիջևանում և այլուր⁵։ Մեծ մասամբ գրավաճառության համար, և կամ մի որևէ հաստատության գրքային ունեցվածքը արձանագրող այս ցանկերը միանական նկարագրություն չունենին, հայերեն գիրքը լիակատար ներկայացնելու նպատակ չէին հետապնդում։ Գիտական աշխատություններ հանդիսացան Մ. Միանսարյանի «Կովկասի և Անդրկովկասի մատենագիտությունը» (Ս. Պետերբուրգ, 1876, եռալեզու՝ ռուսերեն, ֆրանսերեն, հայերեն), Գ. Զարբանալյանի «Հայկական մատենագիտությունը» (Վենետիկ, 1883), Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի» (Վենետիկ, 1909—12)։ Մեր օրերում հրատարակվեցին հայ գրքի երկու մատենագիտական ցանկեր ևս. «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ. 1512—1800» (Ե., 1963) և «Հայ գիրքը 1801—1850 թթ. Մատենագիտություն» (Ե., 1967)։ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հիմնադիր գրադարանը հրատարակել է «Արմֆանի և Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակությունների մատենագիտություն. 1936—1956» (Ե., 1957)։ Շարունակությունը՝ «Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակությունների մատենագիտություն. 1957—61» (Ե., 1963)։ Լույս են տեսել նաև հետազոտարիների մատենագիտությունները։ Երևանի պետհամալսարանի շուրջ քառասուն տարիների հրատարակությունները ամփոփված են «Երևանի պետական համալսարանի հրատարակությունների բիբլիոգրաֆիա. 1922—1963» գրքում (Ե., 1964)։ Վերջապես լույս է տեսել նաև «Հայկական գիրքը Վրաստանում. 1921—1938» (Թբիլիսի, 1941)։

Վերոհիշյալ բոլոր աղբյուրներում, այլ գրքերի շարքում ներկայացվում է նաև գեղարվեստական գրականությունն ու գրականագիտությունը՝ առանձին բաժիններով կամ հեղինակների ու գրքերի վերնագրերի այբուբենի կարգով։

Պարբերական մամուլում հրատարակված գեղարվեստական, գրականագիտական, քննադատական նյութերի առաջժամ ամենահիմնական աղբյուրը Հովհաննես Պետրոսյանի «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա» եռհատորն է։ Զնայած բացթողումների

⁵ Այս գրացուցակների ցանկը տես՝ Մատենագիտություն հայկական մատենագիտության։ Ե., 1963, էջ 177—214։

ու անճշտությունների առատությունը, այստեղից է, որ մասնագետը անվանացանկերի օգնությամբ, հնարավորություն ունի տեղեկություններ քաղելու հայ, ռուս և աշխարհի այլ ժողովուրդների գրողների մամուլում տպագրված երկերի, նրանց մասին հոգվածների վերաբերյալ:

Գրականագետի համար արժեքավոր ուղեցույցներ են բոլորովին վերջերս երևան եկած պարբերականների մատենագիտությունները: Կարճ ժամանակում նման մի քանի աշխատությունների ստեղծումը մատենագիտության այդ ճյուղի զարգացման լավագույն վկայությունն է: Արդեն հրապարակի վրա են.

«Արարատի» մատենագիտություն» (էջմիածին, 1970),

«Մշակ» լրագիր: Բովանդակության ցանկ. 1872—1875» (Ե., 1975),

«Արևելյան մամուլ հանդեսի մատենագիտություն», (Ե., 1976)

«Մատենագիտություն «Մուրճ» ամսագրի» (Ե., 1977),

«Մատենագիտություն «Փորձ» հանդեսի» (Ե., 1978),

«Հյուսիսային» ամսագրի մատենագիտությունը» (Ե., 1979),

«Արևելք» (1855—1856) և «Արևմուտք (1859, 1864—1865) հանդեսների անոտացված մատենագիտություն» (Ե., 1980):

Մշակույթի այլ բնագավառներին զուգընթաց սրանցում նաև գրականությունն է: Ուշադրությունից դուրս մնացած արժեքավոր տեղեկություններ են հաղորդվում ժամանակաշրջանի գրական ուղղությունների, գրողների և նրանց ստեղծագործությունների մասին:

Ինչ վերաբերում է այսօրվա, ընթացիկ կամ մեկամյա, երկամյա մոտ անցյալին, ապա դրա միակ տեղեկատու աղբյուրը ընթացիկ մատենագիտական օրգան տպագրության տարեգրերն են:

Թե մա 11. Բազմառնդինակ մատենագիտություններ

Հայ իրականության մեջ անցյալ դարի վերջերին մշակույթի բոլոր բնագավառներն ընդգրկող ընդհանուր մատենագիտությունների երևան գալուց շատ շանցած, քայլեր արվեցին նաև գրական մատենագիտություններ ստեղծելու ուղղությամբ: 1898 թ. լույս տեսավ Նշանավոր մանկավարժ Հովհաննես Տեր-Միրաքյանի «Դեռահասների աղատ ընթերցանությունը», որի վերջում, իբրև հա-

վելված կցված էր «Հանձնարարելի և մերժելի գրքերի ցուցակը»։ Սա գրական բաղմահեղինակ մատենագիտության նախահեղափոխական առաջին և միակ փորձն է։ Դա նախորդ հարյուր տարիների (1793—1896) արևելահայերենով լույս տեսած մանկական գրքերի ցուցակն է։ Ինչպես առաջաբանում է նշվում, հեղինակը հնարավորություն չի ունեցել ընդգրկելու արևմտահայերեն հրատարակությունները, բայց որոշ գաղափար տալու համար ցանկի վերջում կցել է ժամանակագրական մի աղյուսակ, որը ցույց է տալիս նաև արևմտահայերենի թվական քանակը։

Այս նույն ցանկը, հավելումներով ու լրացումներով վերահրատարակվեց 1906 թ. հետևյալ վերնագրով. «Դեռահասները ի՞նչ կարդան»։ 350 հանձնարարարելի և մերժելի գրքերի մատենագիտական ցուցակ։ Կազմեց ռուսահայկական դպրոցների վերաբացման առթիվ Հ. Տեր-Միրաքյան։ («Մուրճից» արտատպություն)։ Թիֆլիս, 1906, 74 էջ։

Ոչ Տեր-Միրաքյանին, ոչ էլ մեկ ուրիշի այնուհետև չհաջողվեց ստեղծել հայ գրականության մի շրջանի կամ բնագավառի մատենագիտությունը։ Դրա համար անհրաժեշտ պայմաններ չկային։ Դա հնարավոր դարձավ սովետական իշխանության տարիներին։ 1930 թ. «Գրական գիրքերում» ամսագրի 11—12-րդ միացյալ համարում (էջ 91—98) հրատարակվեց «Տասնամյակի ընթացքում լույս տեսած գեղարվեստական գրականությունը»։ (Վերջնականապես ոչ լրիվ ցուցակ)–ը, ուր ժամանակագրական կտրված նկարագրվում է 1922—29 թթ. լույս տեսած 290 գեղարվեստական, 18 գրաքննադատական գրքեր և 4 պարբերական։

Ինչպես ամբողջ Միության, այնպես էլ սովետահայ գրական մատենագիտության զարգացման համար մշտական նշանակություն ունեցավ Համկ(բ)Կ Կենտկոմի 1940 թ. «Գրական քննադատության և մատենագիտության մասին» որոշումը։ Այս որոշումից մի քանի ամիս անց արդեն հրապարակի վրա էր Հ. Պետրոսյանի, Վ. Կարմենյանի և Հ. Հովակիմյանի կազմած Հայկական սովետական գրականություն։ (Բիբլիոգրաֆիա)։ Պր. 1. «Արձակագիրներ, Դեմիքրճյան Դ., Զորյան Ստ., Մանվելյան Մ., Վարդանյան Ան., Սիրաս, Քոչար Հ., Բախալցյան Ք., Ե., 1941, 112 էջ (ՀՍՍՀ Պետ. գրապալատ)։

Առաջաբանում կազմողները՝ դրել են: «Ղեկավարվելով ՀամԿ(բ)Պ Կենտկոմի կայացրած որոշումով... սովետական գրողների անմիջական աջակցությամբ, մենք կազմել ենք «Հայկական սովետական գրականության բիրլիոգրաֆիան», որն ունի երկու պրակ՝ Ա. Արձակագիրներ և Բ. Բանաստեղծներ»:

Վերահաստ պատերազմը խանգարեց Բ պրակի լույսընծայումը, բայց նույն թվին երևան եկավ Հ. Պետրոսյանի հայ գրականության երեք մատենագիտություններից առաջինը.

Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիրլիոգրաֆիա (V—XIX դար): Ե., 1941, 252 էջ: (ՀՍՍՀ Պետ. գրապալատ):

Գրախոսություն. Ա. Մխիթարյան. Հայ հին և... — «Սովետ. գրականություն» 1942, № 1, էջ 98—101: Ա. Կարինյան, Հայ հին և... — «Սովետ. գրող», 1942, № 2:

Ընտրվել է հայ մատենագրության առավել անվանի 120 հեղինակ և դասավորվել նրանց ասլրած ժամանակի հերթականությամբ, սկսած Մեսրոպ Մաշտոցից մինչև Հարություն Ալամդարյան: Տրվում է յուրաքանչյուրի համառոտ կենսագրությունը, ապա երկերի հրատարակություններն ու ուսերեն թարգմանությունների ցանկը և գրականություն նրա մասին:

Սրա շարունակությունն է հեղինակի.

Հայ գրականության բիրլիոգրաֆիա (XIX դարից մինչև սովետական կարգերի հաստատումը): Ե., 1953, 401 էջ: (ՀՍՍՀ Պետ. գրապալատ):

Գրախոսություն. Լ. Մելքումյան, Դիտողություններ «Հայ գրականության բիրլիոգրաֆիայի» մասին: — «Սովետ. գրակ. և արվեստ» 1953, № 11, էջ 151—155:

Ի տարբերություն նախորդի, այստեղ դասավորությունը հեղինակների ազգանունների ալբոբենի կարգով է: Ընդգրկում է հայ նոր գրականության 56 հեղինակ, որոնցից ամեն մեկը հետևյալ ձևով.

ա. Ստեղծագործությունները զրբերով:

բ. Երկերի թարգմանությունները ուսերեն:

գ. Պարբերականներում տպագրված գրվածքները:

դ. Գրական-քննադատական ուսումնասիրություններ և հոդվածներ նրա մասին:

Վերջում ունի հետևյալ շորս հավելվածները. «Հայ ժողովրդական էպոս. Գարեգին Սրվանձության», «Հայ նոր գրականության սլաւոնական վերաբերյալ աշխատություններ», «Հայ աշուղական ժողովրդական գրականություն», «Հրապարակախոսություն (Ավ. Սրասխանյան, Գր. Արծրունի, Ստ. Նազարյան, Հար. Սվաճյան):

Երկրորդ գրքի սկզբունքով է կազմված ավելի վաղ լույս տեսած երրորդ գիրքը՝ Սովետահայ գեղարվեստական գրականության բիբլիոգրաֆիա: Ե., Հայսյեռհրատ, 1949, 772 էջ: (Պետգրասլաւատ):

76 հեղինակների այս ցանկում ճանաչվածների հետ տեղ են գտել նաև սկսնակ, երկրորդական գրողները: Եվ սա այս բնույթի մատենագիտությունների գրական կողմերից է: Սաւկայն, կազմողի կամքից, անկախ, նրանից դուրս են մնացել Ե. Չարենցը, Ա. Բակունցը, Վ. Թոթովենցը, Գ. Մահարին, Զ. Խաչանը և ուրիշներ: Լեւտեսվել են ժամանակի քննադատներ Պ. Մակինցյանի, Յ. Խանդադյանի, Հ. Սուրխաթյանի, Գ. Վանանդեցու, Դր. Սիմոնյանի և ուրիշների գրքերն ու հոգվածները: Պետրոսյանի մատենագիտությունները այս առումով հատկապես արատավոր են: Նրա նախորդ գրքերում տեղ չեն գտել հայ հին, միջնադարյան և նոր գրականության շատ ականավոր դեմքեր, մի հանդամանք, որ այդ աշխատությունները դարձրել է պակասավոր:

Պետրոսյանի վերջին աշխատությունը կոչվում է.

Հայ դիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ: (Կենսաբիբլիոգրաֆիական ծանոթագրություններով): Հատ. 1: Ե., 1960, 540 էջ. (ՀՍՍՀ Պետգրասլաւատ):

Գրախոսություն. Հ. Դավթյան, Հայ նշանավոր մարդկանց նվիրված մատենագիտություն— «Գրադարանավար», 1960, № 5, էջ 27—30: Ռ. Իշխանյան, «Նորարարություն» մատենագիտության մեջ— «Գրական թերթ», 1960, № 32: Ալ. Մարգարյան, Ունկնդրել քննադատության ձայնին— «Լենինյան ուղիով», 1960, № 10, էջ 105—109: Ս. Շտիկյան, Երբ հաշվի չի տնւվում քննադատությունը— «Սովետ. գրակ.», 1961, № 1, էջ 172—175: Ա. Երեմյան, Հ. Պետրոսյանի «Հայ դիտնականներ...»— «Հանդես ամսօրյա», 1964, № 7—9, էջ 438—440:

Սրանում ամփոփված են նախահեղափոխական և սովետական շրջանի մշակութային, հասարակական գործիչների, գրողների հրապարակախոսական սշխատությունները: Այս գրքում ևս շրջանցվել են շատ հայտնի գործիչներ: Պետրոսյանի բոլոր մատենագիտությունների խոցելի կողմերից մեկն էլ փաստերի, թվերի, անունների աղավաղումները, սխալների չափազանց առատությունն է: Այդուհանդերձ դրանք մնում են իբրև եղակի և օգտակար աղբյուրներ հայ գրականության մասնագետների և ուսումնասիրողների համար:

Հայ գրականություն հասկացողության սահմանները, սակայն, շատ ավելի լայն են և Պետրոսյանի հիշյալ մատենագիտությունները հեռու են այն ամբողջությամբ ներկայացնելուց: Նրանցում մասամբ է արտացոլված հայ գրականության ուսերեն թարգմանությունները, իսկ այլ ժողովուրդների լեզուներով թարգմանությունները իսպառ բացակայում են: Մինչդեռ հայ գրականությունը ուսերեն սկսվել է թարգմանվել դեռևս XVIII դարավերջից, իսկ XIX դարում և XX-ի սկզբներին այն նշանակալից չափերի հասավ: Բայց միայն սովետական իշխանության տարիներին է, որ ՍՍՀՄ մյուս ժողովուրդների գրականությունների հետ հայ գրականության ուսերեն թարգմանություններն արտացոլվեցին ուսերեն տարեգրերում, այնուհետև նաև սովետական մատենագետներ Մացուկի և Ստարցևի աշխատություններում: Մինչև վերջերս էլ չկար անցյալի ուսերեն թարգմանությունների մի որևէ ուղեցույց: Չկար նաև սովետական տարիների թարգմանությունների առանձին զբլրով և ամբողջական մատենագիտություն: Այս դործի սկզբնավորողը եղավ Նրևանի պետհումալսարանի Գրական կապերի կաբինետը: 1969 թվականից Կուրինետը «Բիրլիոգրաֆիչեսկայա սերիա» մատենաշարով հրատարակում է ուսս գրողների հայերեն թարգմանությունների և հայ գրականության ուսերեն թարգմանությունների մատենագիտությունները: Մատենաշարի առաջին համարով լույս տեսավ բանասիրական գիտությունների դոկտոր Կամսար Գրիգորյանի Армянская литература в русских переводах. Вып. I. 1786—1917. Составитель и автор предисловия К. Н. Григорьян. Ереван, 1969, 164 с.

Ժողովրդական սանդղագործությունների ուսերեն թարգմանություններից հետո, այբբենական կարգով, բերվում է հին ու

միջնադարյան 44-և նոր-գրականության 69 հեղինակների ստեղծագործությունների առաջին թարգմանությունների ցանկը: Վերջում ունի-թարգմանիչների և ժամանակագրական օժանդակ ցանկեր: Հայ գրականության և գրողների մասին նյութերը շին-բերված: Այդպիսի որոշ աղբյուրներ հիշատակվում են կալմուղի ընդարձակ առաջաբանում:

Ավելի ամբողջական է; գրողների մասին գրականություն էլ է բերվում ՀՍՍՀ Ա. Մյասնիկյանի անվան համրագիտական դրադարանի Տեղեկատու-մատենագիտական բաժնի աշխատողների կազմած երկհատորը:

Армянская литература. (Библиографический указатель). Вып. I. Досоветский период. Составители: Н. А. Адамян, Е. М. Нерсисян, Н. К. Хосеян. Ред. В. М. Мнацаканян. Ереван, 1974, 335 с.

Армянская литература. (Библиографический указатель). Вып. 2. Советский период. Составители: С. Р. Коцинян, М. Н. Нерсисян. Ред. В. М. Мнацаканян. Ереван, 1972, 563 с.

Գրախոսություն. Ն. Հովսեփյան, Հայ գրականությունը՝ ուսւ ընթերցողին:— «Կուլտ. լուս. աշխ.» 1973, № 2, էջ 46—47:

Առաջինում հայ հին, միջնադարյան և նոր-գրականության 45, երկրորդում 94 սովետահայ հեղինակներ են: Դասավորված են ըստ ծննդյան թվականների: Յուրաքանչյուր գրողի լուսանկարից հետո կյանքի ու ստեղծագործության համառոտ բնութագիրն է, ապա ստեղծագործությունների ուսակրեն թարգմանությունների և նրա մասին գրականության ցանկերն են: Ունեն անձնանունների, վերնագրերի և թարգմանիչների օժանդակ ցանկեր:

Հայկական մատենագիտությունը զգալի նվաճումների է հասել հայ և օտար գրական առնչությունների ասպարեկում ևս: Անհիշելի վաղեմություն ունեն հայ-հունական, հռոմեական, պարսկական, արաբական, հնդկական գրական-մշակութային կապերը: Անհամար են հայոց ալբուբենից հետո այդ առնչությունները հաստատող վկայությունները: Հետագա XVII—XVIII դարերում դեպի Հայաստանն ու նրա մշակույթը բուռն հետաքրքրություն առաջացավ Եվրոպայում: 1736 թ. խորհնացու «Հայոց պատմությունը» հրա-

տարակվեց լատիներեն: Այնուհետև Եվրոպական ժողովուրդները
 թարգմանեցին և հրատարակեցին հայ մատենագիրների երկերը:
 Ստեղծվեց գիտության մի քանիսն ընդգրկող հայագիտությունը:
 19-րդ դարակեսերից սարբեր լեզուներով հրատարակվեցին
 նաև մի շարք գրական երկեր, գրվեցին գրականությանը
 նվիրված ուսումնասիրություններ: Եվրոպական լեզուներով ստեղծ-
 ված հսկայական գրականությունը դրանց մատենագիտական ցան-
 կերը կազմելու պահանջ առաջացրեց: 1890 թ. «Հունդես գրակա-
 նական և պատմական» պարբերականի երրորդ գրքում հրապա-
 րակվեց Կ. Սդյանի, «Եվրոպական լեզուներով գրված գրքեր և
 հոգվածներ առաջ առնելու ընթացքում. 1876—1886» ցանկը: Հնուց
 եկող հայուստ փաստերով էլի Ֆրանսիացի հայագետ, եվրոպա-
 կան դիվաններին քաջատեղյակ Գ. Շրումպֆի «Ուսումնասիրու-
 թյունք հայ լեզվի և մատենագրության հարևանությամբ» աշխատու-
 թյունը, որ Գ. Զարհանալյանի թարգմանությամբ և լրացումներով
 լույս տեսավ Վենետիկում, 1895-ին, Դրան հաջորդեցին Ս. Պա-
 րոնյանի «Մատենագիտություն հայկական ըստ օտար լեզվաց, այն
 է ցանկ ամենայն մատենից և հոգվածոց որք ճառեն հ'օտար լե-
 զուս ղհայոց և ղհայկականաց» («Բանասեր» 1900), Հ. Կոստան-
 յանի «Հայագիտությունն Արևմտյան Եվրոպայում» (Թիֆլիս,
 1910), Հ. Ֆերհաթյանի «Յուզակ հայագիտական հրատարակու-
 թյանց հ'նվիրույա. 1896—1910» (Վիեննա, 1919): Վերջին տա-
 նալյակներում այս ուղղությամբ ակնառու աշխատանք է կատարել
 Ա. Սալմասլյանը: 1946-ին Փարիզում առաջին հրատարակությամբ,
 իսկ 1969-ին Երևանում, լրացումներով, լույս տեսավ նրա «Հայ-
 կական մատենագիտությունը»:

Բոլոր այս սղորյուրներում հայ գրականությունը խառն է այլ
 ընդգրկվածների հետ և պակասավոր: Ներկայումս, երբ հայ գրա-
 կանության համաշխարհային ճանաչումն աճում է օրեցօր, շատ
 զգալի էր գրական լիակատար մատենագիտություն ստեղծելու
 անհրաժեշտությունը և միանգամայն ժամանակին էր ՀՍՍՀ Ալ.
 Մյասնիկյանի անվան պետական գրադարանի հրատարակությունը:

Հայ գրականությունը օտար լեզուներով: Մատենագիտություն: Կաղմեցին Ա. Նազիկյանը, Յ. Խաչատրյանը, Ա. Յիցինյանը: Խմբագրություն և առաջաբան Ռ. Իշխանյանի: Ե., 1971, 376 էջ:

Դրախոսություն. Հ. Դավթյան, Հայ գրականությունը...— «Սովետ. գրակ.» 1972, № 6, էջ 162—64:

Պատասխանում է ալն հարցին, թե 19-րդ դարի սկզբից մինչև 1960-ական թթ. վերջերը հայ դասականներից, սովետահայ և սփյուռքահայ հեղինակներից ինչ է թարգմանվել և ինչ գրականություն կա նրանց մասին աշխարհի 25 ժողովուրդների լեզուներով: Նյութերը դասավորված են հեղինակների ազգանունների ալբոսերենի կարգով: Առանձին ենթաբաժիններում հավաքված են զեղարվեստական ժողովածուները, գրականության պատմություններն ու քննադատական ուսումնասիրությունները: Ունի միայն անունների ցանկ, որով հեշտությամբ իմացվում է, թե աշխարհի այս կամ այն լեզվով ինչ հեղինակներ և նրանց որ գործերն են թարգմանվել:

Վերջերս գրական բազմահեղինակ մատենագիտությունների շարքը համարվեց Խնկո-Ապուր անվան հանրապետական գրադարանի թողարկած հետևյալ հրերի պրքերով:

ա. Խորհրդային հայ մանկական գրականության մատենագիտություն: Պր. 1. 1920—1945: Կաղմեցին Ս. Լալախանյան, Ա. Հակոբյան, Ա. Ամիրյան, Բ. Մելյան: Ե., 1972, 148 էջ:

բ. Հայ մանկական գրականության մատենագիտություն: Սովետական շրջանի հրատարակություններ: Պր. 2. 1946—1972: Կաղմեցի Բ. Գ. Զաքարյան, Բ. Գ. Մելյան: Ե., 1974, 488 էջ:

Դրախոսություն. Հ. Դավթյան, Անհրաժեշտ ձեռնարկ— «Սովետ. Հայաստան» 1975, փետրվարի 18:

դ. Հայ մանկական գրականության մատենագիտություն: Պր. 5. Մանկական թարգմանական գրականություն: Սովետական հրատարակություններ. 1920—1972: Կաղմեցի Բ. Գ. Զաքարյան, Ե., 1975, 412 էջ:

Դրախոսություն. Հ. Դավթյան, Օգտակար և հավաստի— «Գրքերի աշխարհ», 1975, ապրիլի 15:

Առաջին երկու պրակներում ներկայացվում են հայ գրողների սովետական տարիներին հրատարակված մանկական ստեղծագործությունները, իսկ երրորդում՝ այլ ժողովուրդների գրողների մանկական ստեղծագործությունները: Բոլորում էլ նյութերը դասավորված են հեղինակների աղգանունների այբբենական կարգով: Ունեն հարուստ օժանդակ ցանկեր:

Ժողովուրդների գրական ամենաթյուրանքների ուսումնասիրումը ժամանակակից գրականագիտական միտքը դրադեցնող կարևորագույն խնդիրներից է և պատահական չէ, որ ՀՍՍՀ ԳԱ Աբեղյանի անվան գրականություն ինստիտուտն ու Գիտական-ինֆորմացիայի բաժանմունքը և Մյասնիկյանի անվ. պետական գրադարանը հրատարակել են այս թեմայով բաղմահ հեղինակ մի քանի ուղեցույցներ: Առաջինը Գրականություն ինստիտուտի հրատարակած Արամ Բարսյանի երկիկովյա (ռուսերեն և հայերեն) ցանկն է.

Հայ գրական կապեր. 1920—1960: Նյութեր մատենագիտության համար: Ե., 1960, 152 էջ:

Ամփոփում է գրական-քննադատական և բանասիրական գործերը, պարբերականներում և ժողովածուներում տպագրված հոդվածները միայն: Գեղարվեստական ստեղծագործությունները չեն վերցվել (բացառությամբ փոքր թվով ժողովածուների): Բաղկացած է հետևյալ բաժիններից.

Ընդհանուր աշխատություններ.

Հայ գրական կապերը ՍՍՀՄ ժողովուրդների գրականությունների հետ. (Հայ-ռուսական, ադրբեջանական, բելոռուսական, վրացական, բրդական, լատիշական, լիտվական, ուկրաինական):

Հայ գրական կապերը արտասահմանյան ժողովուրդների գրականությունների հետ. (Հայ-անգլիական, արաբական, բուլղարական և այլն):

Բանահյուսական կուլիտ. անթոլոգիաներ և ժողովածուներ:

Միայն երկու ժողովուրդների գրական կապերին է նվիրված ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների նախագահության առընթիր Գիտական ինֆորմացիայի սեկտորի աշխատակից Ավ. Շահսուվարյանի կազմած

Հայ-ադրբեջանական գրական կապեր. (1920—1970): Ե., 1972, 183 էջ:

Գրախոսություն. Ռ. Ռուբինյան, Հայ-ադրբեջանական գրական կապերի մատենագիտություն:— «Սովետ. Հայաստան», 1973, նոյեմբ. 22:

Այստեղ մասնավորապես կոչվում են տարիներին Հայաստանում լույս տեսած ադրբեջանական գեղարվեստական գրականությունը, հեղվածները և ուսումնասիրությունները ադրբեջանական գրականության մասին՝ հայերեն, ադրբեջաներեն և ռուսերեն: Նույն սկզբունքով է կառուցված նաև ադրբեջանական բաժինը:

Շատ կողմերով գրվածների այս աշխատությունը թերի է կատարված: Զգիտես ում և հրավիր համար է թողնված նախահեղափոխական շրջանը, առանց որի հարցի մասին ամբողջական պատկերացում ստանալը անհնար է:

Այս առումով միանգամայն օրինակելի է Արեղյանի անվան գրականության ինստիտուտի նորերս հրատարակած.

Հայ-ուկրաինական գրական կապեր. 1861—1971: Մատենագիտություն: Կաղմեց Ս. Գ. Սմիրյան, խմբագրեցին Հ. Մ. Դավթյան և Ե. Ի. Սկոկան: Ե., 1976, 371 էջ:

Գրախոսություն. Օ. Բոժկո, Հայ-ուկրաինական գրական կապերի բիբլիոգրաֆիա:— «Սովետ. Հայաստան», 1977, սեպտ. 25:

Ընդգրկում է ռուսերեն, հայերեն և ուկրաիներեն հարյուր տաս տարվա ամբողջ գրականությունը և նախատեսված է ռուսերենից օգտվող բոլոր մասնագետների համար:

Այլ. Մյասնիկյանի անվան պետական գրադարանը այսպիսի ցանկերի ռոտատիպ թողարկումը նորերս է սկսել և արդեն հրապարակի վրա են.

Հայ-լիտվական գրական կապեր. 1946—1975: Ե., 1975, 72 էջ:

Հայ-լատիշական գրական կապեր. 1945—1975: Ե., 1978, 118 էջ:

Հայ-բելոռուսական գրական կապեր. 1935—1978: Ե., 1979, 108 էջ:

Գրական-բաղմահեղինակ վերջին մատենագիտական ցանկը հրատարակել է ՀՍՍՀ զրքասերները ընկերությունը: Այն կազմել է ժամանակակից սովետահայ արձակագիրներից մեկը: Ահա այդ գրքի նկարագրությունը:

Խաչատրյան Հայկ. Մեկեկես դար ուս գրքի հետ: Մատենագիտություն: Ե., 1979, 285 էջ:

Մասնագետն ու հետաքրքրվողը այստեղ կգտնի այն հարցերի պատասխանները, թե Հայաստանը Ռուսաստանին միավորվելու ժամանակներից մինչև 1976 թվականը ուս, արտասահմանյան և ՍՍՀՄ ժողովուրդների գեղարվեստական զրականություններից ինչ ստեղծագործություններ են ուսերինից թարգմանվել և հրատարակվել հայերեն:

Շուրջ երեք հազար տնուն գեղարվեստական գրքեր նախ ներկայացվել են ժամանակագրական կարգով՝ ըստ տպագրության տարեթվերի, և ապա՝ նույն այդ գրքերը՝ ըստ հեղինակների:

Իր բովանդակությամբ բաղմահեղինակ մատենագիտություն է Ալ. Մյասնիկյանի անվան պետական գրադարանի հրատարակած հետևյալ ցանկը:

Սովետահայ գրական-գեղարվեստական ժողովածուներ: Մատենագիտություն: Ե., կազմեց Ռ. Ռուրինյան: Ե., 1964, XVI, 312 էջ:

Գրախոսություն. Հ. Դավթյան, Սովետահայ գրական-գեղարվեստական...:— «Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1965, № 4, էջ 30—32: Ն. Հովսեփյան, Պահանջվում է արտակարգ բարեխղճություն:— «Գրական թերթ», 1965, սեպտ. 24:

Ժամանակագրական կարգով նկարագրված են 1924—1960 թթ. Երևանում, Բրիլիսիում, Բաքվում, Մոսկվայում, Դոնի Ռուստովում, Լենինգրադում լույս տեսած հայերեն գրական-գեղարվեստական ժողովածուները, Հայաստանում լույս տեսած ուսերեն, ագրեքսերեն, բրդերեն ժողովածուները: Ունի «Գրական-գեղարվեստական ժողովածուների այրերենական ցանկ», «Երևանից դուրս հրատարակված գրական-գեղարվեստական ժողովածուների ցանկ» և «Անվանացանկ»:

Լույս է տեսել նաև սրա լրացուցիչ պրակը:

Սովետահայ գրական-գեղարվեստական ժողովածուներ: Մատենագիտություն. 1961—1965: Կազմեց Ռ. Ռուբինյան: Ե., 1966, 171 էջ:

Կենսագրական բառարաններ, տեղեկատուներ, տարեգրություններ: Թեև կառուցվածքով, նյութերի դասավորությամբ այս ուղեցույցները իսկական առումով մատենագիտություններ չեն, բայց բովանդակությամբ, կատարած դերով մոտենում են գրական մատենագրություններին և կարելի է համարել դրանց մի ենթատեսակը:

Կենսագրական բառարաններում սովորաբար ընդգրկվում են ոչ միայն գրողները, այլև մշակույթի մյուս գործիչները: Շատ դեպքերում դրանցում տեղ են գտնում նաև այլ ժողովուրդների նշանավոր գեմքերը: Բառարաններով հարուստ հայ գրականության մեջ դեռևս անցյալ դարի առաջին կեսից լայն տարածում ունի Մ. Մաղաթ-Թեոփիլյանցի «Կենսագրություն և քննություն արանց» երկհատոր ծավալուն բառարանը (Վենետիկ, 1839), Մ. Բժշկյանի «Համառոտ նկարագիր վարուց և քննություն արանց» (Վենետիկ, 1850), Հ. Պոստրյանի «Հայ հանրագիտակի» Ա հատորը (Բուխարեստ, 1937—39), Արևելահայ իրականության մեջ՝ Հ. Տեր-Աստվածատրյանի 1904 թ. Թիֆլիսում տպագրված «Բառարան հայ կենսագրության» (միայն Ա տառն է լույս տեսել փոքրիկ պրակով): Եվ ահա մեր օրերում իրականացվում է այդպիսի մի նոր աշխատություն, որի առաջին հատորն է լույս տեսել առայժմ:

Գլանիկ Սահիանյան, Կենսագրական բառարան: (Հայ մշակույթի գործիչներ): Երեք հատորով: Հատոր 1. Ա.-Բ. Ե., «Հայաստան», 1973, 384 էջ:

Գրախոսություն. Ս. Սարինյան, Երկարամյա աշխատանքի արդյունքը:— «Գրքերի աշխարհ», 1973, սեպտ. 15: Ն. Մուրադյան, «Կենսագրական բառարանի» առաջին հատորը:— «Գրական թերթ», 1973, հոկտ. 5: Ա.. Ղանալանյան, Գիրք, որ ապրելու է երկար տարիներ:— «Երեկոյան Երևան», 1973, հոկտ. 8: Մ. Նարյան, Կենսագրական բառարան:— «Հայրենիքի ձայն», 1973, հոկտ. 10:— Ստ. Կուրտիկյան, Կենսագրական բառարան:— «Սովետ. գրակ.», 1974, № 7, էջ 142—153:—

Հնազույն ժամանակներից մինչև մեր օրերը գրողների, մատենագիրների, արվեստագետների, հրապարակախոսների, բանասերների, թարգմանիչների, մշակույթի, կրթական գործիչների համառոտ կենսագրություններն են, իրենց վաստակի հիշատակումով:

Տեղեկատուներ են անվանվում այնպիսի գրքերը, որոնցում երբեմն տրվում են նաև մասնակի, փոփոխություններ ևնթակա տեղեկություններ: Դրանք հաճախակի են վերահրատարակվում ուղղումներով և լրացումներով: Գրականության գծով այդպիսի առաջին փորձն արված է մեզանում: Այն կոչվում է.

Գրական տեղեկատու Հայաստանի սովետական գրողների միության անդամներ. 1934—1974: Կազմեց Հայկ հուշատրյանը: Ե., «Հայաստան», 1975, 819 էջ: (Հայաստանի սովետական գրողների միություն):

Գրախոսություն. Հ. Դավթյան, «Գրական տեղեկատու»:— «Սովետ. Հայաստան», 1976, փետրվ. 17:

Առձևոն օգտագործման համար շատերին պիտանի այս ուղեցույցից կարելի է տեղեկություններ քաղել քառասուն տարվա Հայաստանի գրողների միության 424 անդամների մասին: Բերվում են նույնիսկ արդի գրողների հասցեներն ու հեռախոսները: Մատենագիտական տեսակետից ամենաարժեքավորը կենսագրություններից հետո բերվող ցանկերն են, թեև բերվում է միայն նրանց առանձին գրքերով հեյերեն երկերն ու ռուսերենից կատարած թարգմանությունները: Հնարավորություն ունենալով անձամբ ծանոթանալու գրողների գիվաններին, կազմողը գտել և ցանկերում արտացոլել է երբեմն այնպիսի հրատարակություններ, որոնք չկան Հայաստանի խոշորագույն գրադարաններում անգամ: Եվ սա այս ցանկերի մեծագույն արժանիքներից է:

Տարեգրությունները կամ ժամանակագրությունները նվիրված են լինում որևէ բնագավառի և պատասխանում են այն հարցին, թե յուրաքանչյուր տարում ինչ կարևոր իրադարձություններ և տեղի ունեցել այդ ասպարեզում: Լինում են պատմական, գրական, թատերական և այլ տարեգրություններ: Վերջին տարիներին

հայ դրականությունը հարստացավ այդպիսի մի քանի աղբյուրներիով: Դրանցից են Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հրատարակած հետեւյալ երկու հատորները.

Սովետահայ գրականության տարեգրություն. 1920—1956: Կազմեցին Հ. Ղազարյան, Ս. Մանուկյան: Ե., 1957, 753 էջ:

Սովետահայ գրականության տարեգրություն. 1957—1975: Կազմեցին Հ. Ա. Գալստյան, Դ. Վ. Գասպարյան: Ե., 1977, 320 էջ:

Գրական իրադարձությունների առիթով հիշատակված բազմաթիվ հրատարակություններից, հոգվածներից բացի, յուրաքանչյուր տարեթիվի վերջում բերվում է տվյալ տարվա գրական-գեղարվեստական հրատարակությունների ցանկը: Մասնագետը հնարավորություն ունի տեղեկություն ստանալու անցած տարիների գեղարվեստական հրատարակությունների մասին:

Գրականության ինստիտուտը թողարկել է նաև հայ նոր գրականության նախորդ հիստորի տարիների ժամանակագրությունը, որ է.

Շախիջան Ս. Ա., Հայ նոր գրականության ժամանակագրություն (1801—1850): Ե., 1973, 354 էջ:

Տարեկան գրական իրադարձությունների և բանասիրական, լեզվաբանական հրատարակությունների շարքում հիշատակվում են այդ տարիներին հրատարակված բոլոր գեղարվեստական գրքերը: Տեղեկություններ են տրվում նաև այդ թվականներին ծնված գրական, մշակութային գործիչների մասին:

Մասնագետների համար օգտակար աղբյուր է ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի նույնպես երկհատոր հետեւյալ աշխատությունը.

Հարությունյան Բ. Սովետահայ թատրոնի տարեգրություն: Գիրք երկրորդ (1941—1960): Ե., 1969, 937 էջ:

Հարությունյան Բ. Սովետահայ թատրոնի տարեգրություն: Գիրք երկրորդ. 1941—1960: Ե., 1969, 937 էջ:

Սա մի իսկական թատերական հանրագիտարան է: Համակողմանի տեղեկություններ է տալիս Հայաստանի և Սովետական Միության մյուս հանրապետությունների անցյալում ու այժմ գործող հայկական թատրոնների, ինչպես և Հայաստանում գործող ռուսական, ադրբեջանական, քրդական թատրոնների, թատերական գործիչների, խաղացանկերի, ռադիոյի և հեռուստատեսության թա-

տերական հաղորդումների մասին: Հատուկ ջանասիրությամբ է հավաքված թատրոնի և թատերական երկերի վերաբերյալ գրականությունը: Թատերական երկերի բեմադրության կամ հրատարակության առթիվ հիշատակվող հոգվածներից ու գրախոսություններից բացի, ամեն տարվա իրադարձությունների շարագրումից հետո տրվում է տարվա լույս տեսած գրքերի և մամուլում հղած հոգվածների ցանկերը: Ունի հմտորեն կազմված օժանդակ ցանկեր. «Դրամատիկական և երաժշտա-դրամատիկական ստեղծագործություններ», «Հեղինակներ, ստեղծագործություններ»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Հր. Կոստիկյան, Մատենագիտության հիմունքները: (2-րդ վերամշակված, լրացված հրատ.)։ Ե., 1968, էջ 327—331:
- Ռ. Իշխանյան, Հայ մատենագիտության պատմություն: Պր. 3։ Ե., 1966, էջ 64—75:
- Հ. Դավթյան, Դրական մատենագիտության արդի վիճակն ու հեռանկարները:— «Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1978, № 1, էջ 28—33:

Թ Ե Մ Ա 12. Անհատական մատենագիտություններ

Մեզանում գրական անհատական մատենագիտության ակունքները ևս բավական խոր են: Ավելի քան յոթ տասնամյակ առաջ վենետիկյան Միլիթարյանները հրատարակել են հայ նոր գրականության հսկաներից մեկի՝ Ղևոնդ Ալիշանի մատենագիտությունը: Նյն կազմել է հայկական մատենագիտության ամենանշանավոր դեմքերից մեկը՝ Արսեն Ղալիկյանը:

Ալիշանյան մատենագրարան: Վենետիկ, Ս. Ղալար (1907 կամ 1908), 1 չհ. 8 էջ:

Առաջին չհամարակալված էջի «Աղղը» լիտկատար պատկերացում է տալիս ցանկի մասին: «Պատասխանելու համար հին իղձի մը, բիշ մը ամեն կողմն լսված, կը հրատարակենք ահա հ. Ալիշանի գործերուն ամբողջական ցուցակը՝ ամփոփելով փոքր տետրի մը մեջ, մինչ իր գրքերը կրնան լեցնել կոկիկ դրտան մը դարանները: Ցանկը լիակատար ընել ուղեկով՝ ջանացինք չվրիպեցնել ու է

Հրատարակություն որուն դպած ըլլա մեր նահապետին գրիչը: Առանց վարանելու նշանակեցինք որեմն նախնայաց այն գրքերը, որոնք լույս տեսնելէ առաջ մտած էին Ալիշանի համության բովը, լուսարանվելու համար իր ծանոթություններով և հառաջարաններով: Կարելի չէր դանց ընել նաեւ իր ըրած թարգմանությունները, որոնք միշտ իր սեպհական մտքէն բան մ'ունին: Պետք էր, վերջապէս, այսպիսի համատեսական ցուցակ մը հ. Ալիշանի գործերուն, որոնց անունները ցանցնված են մեր գրոց ցուցակին մէջ, պարզապէս՝ զոհացնելու համար այրբենական քմայքը»:

Իր բնույթով սա բնագրերի մատենագիտություն է, այն էլ սոսկ առանձին գրքերով հրատարակությունների: Ալիշանի ստեղծագործությունները մամուլում և նրա մասին գրականությունը չի բերվել: Նյութերը ներկայացված են հետևյալ բաժիններով.

- ա. Բանաստեղծությունք,
- բ. Մատենագրությունք,
- գ. Աշխարհագրականք և պատմականք,
- դ. Բանասիրականք,
- ե. Կրոնականք:

Գրքույկում կազմողի անունը նշված չէ: Այն ենթադրվում է «Ազդի» վերջին տողերից: Տպագրության թիվը նույնպէս նշված չէ, բայց շապկի վերջին երեսին «Գեղունիք» հանդեսի 1901—5 և 1906 թ. հավաքածուների վաճառքի մասին հայտարարությունն է: Հայտնի է, որ 1907—8 թթ. ընդմիջումից հետո հանդեսի տպագրությունը շարունակվել է, մինչդեռ հետագա թվականների մասին հիշատակություն չկա, ուրեմն գրքույկը լույս է տեսել այդ դադարի տարիներին:

Նախահեղափոխական շրջանում, քաղաքական խառնակ իրադարձությունների պայմաններում, գրական անհատական մատենագիտության որեւէ այլ փորձ չարվեց: Նման աշխատանքի համալսող ու հնարավորություն ստեղծվեց դարձյալ սովետական իշխանության օրոք: 1930-ական թթ. սկզբներին Միության խոշոր գրադարանների առջև խնդիր դրվեց հանձնարարական մատենագիտության զարգացման մասին: 1933 թ. հունվարի 22-ին «Գրական թերթը» տպագրեց մատենագետ-բանասեր Արամ Բարսեղյանի «Բիբլիոգրաֆիայի մի քանի հարցեր» հոդվածը: Նա ինքն էլ մա-

տենագիտական ցանկեր կադմոդներին մեկը եղավ, Հետագա մի քանի տարում հրատարակված հանձնարարական ցանկերից են.

Պրոլետարական մեծ արվեստագետ Մաքսիմ Գորկին. 1868—1936, Կազմեց Ա. Բաբայան, Ե., 1937, 45 էջ: (ՀՍՍՀ Լուսժողկոմատի Գրադարանային վարչություն: Պետական գրապալատ):

Տարաս Գրիգորեիչ Շեչենկո. 1814—1939: Ծննդյան 125-ամյակի առթիվ: Ե., 1939, 47 էջ (Պետական հանրային գրադարան):

Լ. Ն. Տոլստոյ: Մահվան 30-ամյակի առթիվ: 1910—1940, Ե., 1940, 27 էջ: (ՀՍՍՀ Լուսժողկոմատի Գրադարանային-մեթոդական բաժին):

Նախապատերազմյան և հտպատերազմյան տարիներին մեղանում հրապարակ եկան ևս մի քանի փոքրածավալ և ներգրքային ցանկեր, մինչև որ հասունացավ գրական ծավալուն անհատական մատենագիտությունների պահանջը: Նման աշխատությունների երևան գալը պայմանավորված էր հիստոնական թվականների կեսերից սովետական գրականության և գրականագիտության վերելքով: Բնութագրելով այդ շրջանի գրականագիտության ընդհանուր վիճակը, մեր օրերի քննադատներից մեկը գրել է.

«Այն բեկումը, որ տեղի ունեցավ սովետական հասարակության գաղափարական կյանքում՝ կապված անհատի պաշտամունքի քննադատության և կուսակցության XX համագումարի հետ, որոշակի ազդեցություն ունեցավ ինչպես հասարակական բոլոր գիտությունների, նույնպես և գրականագիտության զարգացման համար:

Ընդհանուր առաջընթացը գրականության նյութի հետազոտությունն էր: Գրականագիտության նախորդ տասնամյակները փաստի յուրացման տեսակետից սուղ հանգամանքներում էին գտնվում: Հաղթահարվեց այդ մակերեսայնությունը, ուսումնասիրվեցին մամուլը, արխիվները, հետազոտողները առանձնահատուկ ուշադրությամբ վերաբերվեցին թեմայի բանասիրական կողմին, շրջանառության մեջ դրվեցին բոլոր այն նյութերը, ինչ առկա էր արխիվներում ու մամուլում»¹:

Սրանով պետք է բացատրել այն փաստը, որ հիստոնական

¹ Ս. Սարիյան, Քննադատությունը և գեղարվեստական զարգացումը: Ե., «Հայաստան», 1973, էջ 347:

թվականներից մեղանում հետզհետե ավելացան գրական մատենագիտություններ հրատարակող հաստատությունների թիվը: Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում հրատարակվեցին բառասունից ավելի գրողների անհատական ծավալուն մատենագիտություններ:

Անհատական մատենագիտության խոշոր կենտրոնը մեղանում ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան պետական գրադարանն է, որը զգալի ավանդ է ներդրել հատկապես հայ դասականների այդպիսի մատենագիտություններ կազմելու ուղղությամբ: 1954 թ. առայսօր գրադարանը հրատարակել է հետևյալները.

1. Վլադիմիր Մայակովսկի: Բիրլիոգրաֆիա: Հայերեն հրատարակությունները առանձին գրքերով, երկերի հայերեն թարգմանությունները պարբերական մամուլում և երկերի ժողովածուներում: Մայակովսկու մասին առանձին հրատարակություններով, ժողովածուներում և պարբերական մամուլում: Կազմեցին Հր. Գրիգորյան, Լ. Մելքոնյան, Ե. Սարգսյան: Ե., 1954, 44 էջ:

2. Միքայիլ Նալբանդյան. 1829—1954: Ակնարկ կյանքի և դործունեության և համառոտ բիրլիոգրաֆիա: Տեքստի հեղինակ Ն. Մուրադյան: Բիրլիոգրաֆիական ցանկը կազմել է Բիրլիոգրաֆիայի բաժինը: Խմբագիր Վ. Պարտիզունի: Ե., 1954 (Շապկի վրաս տպագր. թիվը 1955 է), 48 էջ:

3. Խաչատուր Արուլյան. 1805—1955: Համառոտ բիրլիոգրաֆիա: Կազմեց Բիրլիոգրաֆիայի բաժինը: Առաջաբանով և խմբագրությամբ Պ. Հակոբյանի: Ե., 1956, 88 էջ:

4. Դերենիկ Դեմիրճյան. 1877—1956: Բիրլիոգրաֆիա: Կազմեց Տեղեկատու-բիրլիոգրաֆիայի բաժինը: Խմբագրությամբ և առաջաբանով Հր. Մուրադյանի: Ե., 1957, 96 էջ:

5. Եղիշե Չարենց (1897—1937): Բիրլիոգրաֆիա: Կազմեց Տեղեկատու-բիրլիոգրաֆիայի բաժինը: Խմբագրություն և առաջաբան էդ. Զրբաշյանի: Ե., 1957, 95 էջ:

6. Ալեքսանդր Շիրվանդադե. (1858—1958): Բիրլիոգրաֆիա: Կազմեց Տեղեկատու-բիրլիոգրաֆիայի բաժինը: Խմբագրություն և առաջաբան Հր. Ս. Բամբադյանի: Ե., 1959, 244 էջ:

Գրախոսություն. Հ. Դավթյան, Ալ. Շիրվանդադեի մատենագիտությունը:— «Սովետ. գրակ.», 1960, № 4, էջ 152—156:

7. Ակսել Բակունց: Կենսագրություն և մատենագիտություն: Հեղինակ Ռ. Իշխանյան: Ե., 1960, 204 էջ:

Գրախոսություն. Ղ. Հայրապետյան, Յուրատեսակ ձոն Ակսել Բակունցին:— «Ավանդարդ», 1961, մարտի 25: Ա. Մարգարյան, Բարեխիղճ աշխատանքի արդյունքը:— «Սովետ. գրակ.», 1961, № 9, էջ 154—156: Ալ. Շահազիզյան, Ուշագրավ գիրք:— «Գրական թերթ», 1961, մարտի 24:

8. Հովհաննես Քումանյան (1869—1923): Մատենագիտություն: Կազմեց Տեղեկատու-րիբլիոգրաֆիայի բաժինը: Խմբագրություն և առաջաբան էդ. Մ. Զրբաշյանի: Ե., 1961, 388 էջ:

Գրախոսություն. Հ. Դավթյան, Քումանյանի մատենագիտությունը:— «Գրական թերթ», 1962, հունվ. 12: Ալ. Շահազիզյան, Արժեքավոր ռիբլիոգրաֆիա:— «Սովետ. Հայաստան», 1962, փետրվ. 10: Ռ. Իշխանյան, Մատենագիտություն. սկիզբ և հիմք ուսումնասիրության:— «Նրեան», 1962, հունիսի 15: Դ. Ռոստոմյան, Արժեքավոր մատենագիտություն հայ մեծ գրողի մասին:— «Բյուրական» (Փարիզ), 1962, հոկտեմբեր:

9. Հակոբ Հակոբյան, (1866—1936): Խմբ. և առաջաբան Գր. Ա. Սարգսյանի: Ե., 1967, 230 էջ:

10. Պարույր Սևակ: Կենսամատենագիտություն: Հեղինակ Ն. Հովսեփյան: Խմբագիր Ռ. Իշխանյան: Ե., 1968, 160 էջ:

Գրախոսություն. Գ. Ղուկասյան, Պարույր Սևակի ստեղծագործության մատենագիտությունը:— «Գրական թերթ», 1969, ապրիլի 18: Հ. Դավթյան, Պարույր Սևակը՝ ամբողջությամբ:— «Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1969, № 3, էջ 30—31:

11. Ղազարոս Աղայան. 1840—1911: Մատենագիտություն: Կազմեցին, նախասովետական շրջան՝ Փ. Հ. Խանդադյան, սովետական շրջան՝ Գ. Ա. Աղյան: Խմբագրություն և առաջաբան Ա. Պ. Հակոբջանյանի: Ե., 1972, 344 էջ (Ալ. Մլասնիկյանի անվան հան-

րապետական գրադարան: Խնկո-Ասոր անվան հանրապետական մանկական գրադարան):

Գրախոսություն. Հ. Դավթյան, Ղ. Աղաջանի մատենագիտությունը:— «Կուլտուր-լուսավ. աշխատանք», 1973, № 1, էջ 35—39:

12. Գաբրիել Սունդուկյան. (1825—1912): Կենսամատենագիտական ցանկ: Կազմողներ Մ. Բաբայան, Փ. Խանդավյան, Ն. Հարությունյան: Խմբագրություն և առաջարան Տ. Կարապետյան: Ե., 1976, 340 էջ:

13. Ավետիք Իսահակյան. (1875—1957): Կենսամատենագիտական ցանկ: Կազմեցին Խանդավյան Փ., Հովհաննիսյան է. Ղարիբյան Ա., Քաջախյան Կ.: Խմբագրությամբ Ա. Ինճիկյանի և Տ. Կարապետյանի: Ե., 1976, 510 էջ:

14. Ավետիք Իսահակյան. (1875—1957): Մատենագիտական ցանկ: Մաս 2-րդ: Կազմեց է. Հովհաննիսյան, խմբագիր Տ. Ա. Կարապետյան: Ե., 1977, 195 էջ:

Հանրապետական գրադարանին է պատկանում նաև հայ հեղինակների ռուսերեն թարգմանությունների մատենագիտություններ կազմելու նախաձեռնությունը, թեև այժմ այդ խնդրով հիմնականում ղրադվում է արդեն Նրեանի պետհամալսարանի Դրական էսայերի կաբինետը: Տարիներ առաջ հանրապետական գրադարանը հրատարակել է երկու այդպիսի մատենագիտություններ, որոնք են.

15. Аветик Исаакян на русском языке. Библиография переводов и критической литературы. Автор Левон Мкртчян. Ереван, 1964, 154 с.

16. Ваан Терян на русском языке. Библиография переводов и критической литературы. Автор С. О. Меликян. Ереван, 1965, 77 с.

Դրականագիտությանը հետաքրքրող բոլոր հարցերի պատասխանները չէին տրվի, եթե կազմվեին միայն գրողների մատենագիտությունները: Ռուսական մատենագիտությունը թերի կլիներ առանց Բեկինսկու, Զերնիշևսկու, Դոբրոլյուբովի և նշանավոր այլ բնագավառների մատենագիտության: Մեղանում այս ուղղությամբ քիչ աշխատանք է կատարված: Առաջին փորձերն արել է ՀՍՍՀ ԳԱ հիմնական գրադարանը, որը «Սովետական Հայաստանի ականա-

վոր գիտնականները» մատենաշարով մեր հանրապետության նշանավոր գիտնականների շարքում կազմել է նաև մի քանի բանասեր-քննադատների մատենագիտություններ: Արդեն հրապարակվել են.

Մանուկ Խաչատուրի Աբելյան: Ներածականը Ա. Տ. Ղանալանյանի: Բիրլիոգրաֆիան կազմել է Ռ. Ա. Բարաջանյանը: Ե., 1963, 72 էջ:

Արսեն Հարությունի Տերտերյան: Ներածականը Հր. Ս. Թամրադյանի: Մատենագիտությունը կազմել է Ռ. Ա. Բարաջանյանը: Ե., 1966, 72 էջ:

Աշոտ Գարեգինի Հովհաննիսյան: Ներածականը Վ. Ա. Դիրոյանի: Մատենագիտությունը կազմել է Ռ. Ա. Բարաջանյանը: Ե., 1973, 64 էջ:

Արտաշես Բալասիի Կարինյան: Ներածականը Գ. Ա. Գալոյանի: Մատենագիտությունը կազմել է Ռ. Ա. Բարաջանյանը: Ե., 1977, 102 էջ:

Երեխաների քննիչացանությունը ղեկավարելու զուգընթաց նաև մատենագիտական հաստատություն է դարձել Խնկո-Այոթր անվան հանրապետական մանկական գրադարանը: Նախորդ թեմայում ծանոթացանք այստեղ հրատարակված բազմահղիմակ մատենագիտությունների հետ: Հանդիսանում է մանկական գրականության համընդհանուր մատենագիտություն կենտրոնը: Միաժամանակ մտնողների սեղանին է դրել հայ մանկագիրների մի քանի ծավալուն անհատական մատենագիտություններ.

Աթաբեկ Խնկոյան (Խնկո-Այոթր): Կենսագրություն և մատենագիտություն: Հեղինակ Բ. Գ. Մելյան: Ե., 1969, 178 էջ:

Գրախոսություն. Հ. Դավթյան, Օգտակար աշխատություններ:— «Կուլտ. լուս. աշխատանք», 1970, № 4, էջ 29—32:

Մաթևոս Դարբինյան (Կենսամատենագիտություն): Հեղինակ Բ. Գ. Մելյան: Ե., 1970, 316 էջ:

Գրախոսություն. Ա. Հայրապետյան, «Մաթևոս Դարբինյան»...:— «Սովետ. գրակ.», 1971, № 7, էջ 152—153: Հ. Դավթյան, Մի նոր կենսամատենագիտություն:— «Կուլտ. լուս. աշխատանք», 1972, № 2, էջ 44—46:

Հայրապետ Հայրապետյան: (1874—1962): Մատենագիտություն: Կազմեցին Ս. Գ. Լալախանյան, Գ. Ա. Ադյան: Խմբագրությամբ Ռ. Ա. Իշխանյանի: Ե., 1974, 264 էջ:

Արարս: Մատենագիտություն: Կազմեց Ե. Կ. Երեմյան: Ե., 1977, 91 էջ:

Իր գոյություն շուրջ մեկ տասնամյակի ընթացքում Երևանի պետական համալսարանի Դրակոն կադերի կաբինետը, որ զբաղվում է հիմնականում Երևանի համալսարանի և այլ համալսարանների փոխադարձ շփումներով, զգալի աշխատանք է կատարել մատենագիտության դժով, կազմելով մի կողմից՝ հայ հեղինակների ուսերին թարգմանությունների, մյուս կողմից՝ ուս հեղինակների հայերեն թարգմանությունների մատենագիտությունները: Ահա դրանց ցանկը.

Հովհաննես Թումանյան: Ռուսերեն թարգմանությունների մատենագիտություն (1893—1968): Կազմեց Ա. Մ. Բարայան: Ե., 1969, 159 էջ:

Ն. Ա. Նեկրասով: Հայերեն թարգմանությունների մատենագիտություն: (1870—1969): Կազմեց Ռ. Խաչատրյան: Ե., 1971, 51 էջ:

Ա. Ս. Պուշկին: Հայերեն թարգմանությունների մատենագիտություն: (1843—1973): Կազմեց Ա. Վ. Քալաշյան: Ե., 1974, 186 էջ:

Լ. Ն. Տոլստոյը հայերեն թարգմանություններում: Կազմող և առաջաբանի հեղինակ Ս. Ս. Բաղյան: Ե., 1971, 141 էջ:

Ա. Մ. Գորկին հայ գրականություն մեջ: Մատենագիտություն: Պրակ առաջին (1899—1936): Հեղինակ Ա. Ս. Բարայան: Ե., 1974, 176 էջ:

Սրանք բոլորն էլ երկրեզվյա (ռուսերեն և հայերեն) մատենագիտություններ են: Առաջին չորսը տպագրված են ուսուցիչին եղանակով: Ունեն միայն ռուսերեն առաջաբաններ: Դրանցում բավական շատ են մատենագիտական կարգի անճշտությունները: Կատարման վարպետությամբ լավագույնը Արամ Բաբայանի աշխատությունն է: Ռուսերեն և հայերեն առաջաբաններից հետո, ներկայացվում է նախ Գորկու հայերեն տպագրված բոլոր ստեղծագործությունները, այնուհետև նրա մասին գրականությունն է: Կազմված է, ինչպես առաջաբանում է ասվում, «այն հաշվով և այնպիսի մեթոդով, որ նրանից կարողանա օգտվել և՛ ուս և՛ հայ

ընթերցողը: Այս իմաստով նկարագրությունները տրված են միա-
ժամանակ հայերեն և ռուսերեն լեզուներով, պահպանելով մատե-
նագիրական նկարագրության կանոնները» (էջ 11—12):

Բացառիկ արժեք է ներկայացնում Բրյուսովի ամբողջական
անհատական մատենագիտությունը:

Библиография В. Я. Брюсова. 1884—1973. Составитель Э. С. Даниелян. Редактор К. Д. Муратова, Ереван, 1976, 504 с.

Դրախոսություն. Н. Трифонов, Библиография В. Я. Брюсова.—«Книжное обозрение», 1977, 8 апреля.

Այն ստեղծվել է Երևանի պետհամալսարանի Դրական կապե-
րի կարինեստի, Վ. Յա. Բրյուսովի անվան պետական մանկավար-
ժական ինստիտուտի և ՍՍՀՄ ԳԱ Ռուս գրականության ինստիտու-
տի (Պուշկինյան տուն) համատեղ աշխատանքով: Ընտրվել է մի
հեղինակ, որը ռուս գրականության սյուներից մեկն է և միաժա-
մանակ այնքան թանկ ու հարազատ հայ ժողովրդի համար: Կազ-
մրված է մեծ խնամքով ու հմտությամբ և խմբագրված համամիու-
թենական ճանաչում վայելող այնպիսի մասնագետի ձեռքով, ինչ-
պիսին Կ. Դ. Մուրատովան է: Միութենական պարբերական մա-
սույր բարձր գնահատեց և ջերմ ընդունելության արժանացավ:

Այսինքն և գործունեության տարեգրություններ: Դրականագի-
տական այսպիսի աշխատություններում գիվանական անտիպ և
տպագիր նյութերի հիման վրա, ժամանակագրական հերթականու-
թյամբ, ներկայացվում է գրողի կյանքի և գործունեության հնա-
րավորին չափ ամբողջական փաստերը, այդ թվում և ստեղծագոր-
ծություններն ու նրա մասին գրականության կարևորությունը:
Մեզանում այս կարգի երկու օրինակ կա.

Ա. Մ. Ինձիկյան, Միքայել Նալբանդյանի կյանքի և գործու-
նեության տարեգրությունը: Ե., 1954, 400 էջ: (ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղ-
յանի անվան գրականության ինստիտուտ):

Դրքում, տարեգրությունից հետո իբրև հավելված ղետեղված
է Նալբանդյանի կենդանության օրով և հետադաշում տպագրված
գործերի մատենագիտությունը՝ առանձին գրքերով և մամուլում
(էջ 351—379), իսկ «Աղբյուրներ» վերնագրի տակ՝ նրա մասին
գրականությունը (էջ 383—386):

1980 թ. այս պիտքը լույս տեսավ երկրորդ տպագրությամբ։
Նույն ինստիտուտի մյուս հրատարակությունն է.

Խ. Մ. Գյուլիազարյան, Ս. Ա. Մանուկյան, Հակոբ Հակոբյանի
կյանքի և գործունեության տարեգրությունը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ.,
1965, 299 էջ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հր. Կոստիկյան, Մատենագիտության հիմունքները (2-րդ վերա-
մշակված, լրացված հրատ.)։ Ե., 1968, էջ 344—355։

Ռ. Իշխանյան, Հայ մատենագիտության պատմություն։ Պր. 3։ Ե.,
1966, էջ 223—226։

Հ. Դավթյան, Գրական մատենագիտության արդի վիճակն ու հե-
ռանկարները։— «Կուլտ.-լուս. աշխատանք», 1978, № 1,
էջ 28—33։

Մատենագիտություն հայկական մատենագիտության։ Ե., 1963,
էջ 147—174։

Թ Ե Մ Ա 13. Թեմատիկ մատենագիտություններ

Այս տեսակի գրական մատենագիտությունների թիվը մեզա-
նում զեռու շատ սահմանափակ է։ Առաջիմ կարելի է միայն երկու
երինակ ցույց տալ։ Առաջինն է.

Սասունցի Դավիթ։ Հայ ժողովրդական էպոս։ Բիրլիոգրաֆիա։
Պր. 1։ Կապանցի Մարջիկ Բաբայան և Սուրեն Միքայելյան։ Նե-
րածության հեղինակ և խմբագիր Մանուկ Աբեղյան։ Ե., 1939,
174 էջ։ (ՀՍՍՀ Ար. Մյասնիկյանի անվան հանրային գրադարան)։

Նրանում մասնագետը գտնում է մեր էպոսի բոլոր գրառում-
ները, նրա մասին գրքերը, հոդվածները, մշակումները։ Առաջին
բաժնում այդ ամենը բերվում է ժամանակագրական կարգով, երկ-
րորդում՝ խմբավորումներով («էպոսի հրատարակությունները»,
«Հետազոտությունները», «էպոսի մշակումները» և այլն)։

Լիարժեքությամբ, կառուցվածքով, զիտականությամբ այս
մատենագիտությունը իր տեսակի մեջ կատարյալ է, թեև կազմվել
է վաղուց և նախորդը չի ունեցել։ Նրա օրինակը մեկ անգամ ևս
ցույց է տալիս, որ մատենագիտական աշխատանքը պահանջում է

առարկայի խոր ու բազմակողմանի իմացություն: Սրա հաջողության հիմնական դաղտները՝ առաջին հերթին նրանում է, որ անցել է Արեղյանի նման Հայոսագիտի ձեռքով:

Երկրորդ պլակը, որ պետք է ընդգրկեր էպոսի հազարամյակի տոնակատարությունից՝ 1939 թ. հունիսի 15-ից հետո հայերեն և ՍՍՀՄ ժողովուրդների լեզուներով եղած նյութերը, լույս չի տեսել:

Համեմատաբար նոր է թեմատիկ մատենագիտության հրկրորդ նմուշը:

Լենինը հայ գեղարվեստական գրականության մեջ: Մատենագիտական ցանկ: Կազմեց Ե. Մ. Սարգսյան: Ե., 1970, 71 էջ: (ՀՍՍՀ ԱԼ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան: Գիտական մատենագիտության և տեղեկատու աշխատանքի բաժին):

Իմի են բերված հայ գրողների Լենինի մասին արձակ, շափածո գեղարվեստական հրկերը, պոսանական, բանահյուսական ստեղծագործությունները՝ տպագրված կոլեկտիվ և հեղինակային ժողովածուներում, մամուլում, առանձին գրքերով: Հայերենից հետո ռուսերեն թարգմանված ստեղծագործությունների ցանկն է: Ինչպես առաջաբանում է տսվում, այն լիակատար լինելու հավակնությամբ շունի:

Հաճախակի են հանդիպում հատկապես ներգրգային թեմատիկ ցանկեր, մեծ մասամբ կցված գրականագիտական այնպիսի մենագրությունների, որոնք նվիրված են գրական որևէ հարցի, ուղղության, ժանրի: Այսպես օրինակ, էդ. Ջրբաշյանի «Պոետիկայի հարցեր» մենագրության վերջում, ««ժանոթագրություններ և լրացումներ» խորագրի տակ (էջ 441—462) ռուսերեն և հայերեն բաղմամբով աղբյուրներ են թվարկվում գեղարվեստական մեթոդի, գրական ժանրերի, բանաստեղծական շափի, ավանդույթի, նորարարության մասին: Այսպիսի օրինակներ շատ կարելի է ցույց տալ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Библиография художественной литературы, стр. 256—257.

**Թ Ե մ ա 14. Հանձնարարական ցանկեր, մեթոդական-
մատենագիտական գրքույկներ, «Նշանավոր և հիշարժան
տարեթվեր»**

**ՀՍՍՀ ԱԼ. Մյասնիկյանի անվան պետական գրադա-
րանը** հանդիսանալով մեր հանրապետությունում հանձնարարա-
կան մատենագիտության կենտրոնը, հատկապես Հայրենական
պատերազմից հետո ընկած ժամանակաընթացքում հրատարակել
է բազմաթիվ գրական աշխատքի ցանկեր: Դրանցից առավել ար-
ժեքավորներից են «Մեր երիտասարդ գրողները» մատենաշարով
1971-ին լույս տեսած 16—18 էջանոց հատկալ վեց գրքույկները.

«Աղասի Այվազյան», «Զորայր Խալափյան», «Հրանտ Մաթևոս-
յան», «Մանուկ Մնացականյան», «Ռազմիկ Դավոյան», «Վարդգես
Պետրոսյան»:

Այս ուղղությամբ բեղմնավոր է նաև Խնկո-Ասլուր անվան հան-
րապետական մանկական գրադարանը: 1976 թ. առ այսօր այստեղ
հրատարակվել է մանուկների համար նախատեսված շուրջ հիսուն
հայ մանկագիրների և մանուկների համար գրող հեղինակների
հանձնարարական ցանկեր: Օրինակ.

Հովհաննես Թումանյանը մանուկներին (1967, 10 էջ):

Սուրեն Մուրադյանը մանուկներին (1968, 9 էջ),

Սիրվա Կոպուտիկյանը մանուկներին (1969, 10 էջ),

Ստեփան Զորյանը մանուկներին (1970, 18 էջ),

Մկրտիչ Կորյունը մանուկներին (1973, 48 էջ) և այլն:

Բոլորն էլ սկսվում են հեղինակի մասին կենսագրական տե-
նարկով, ապա՝ հանձնարարվող մանկական գրքերի նկարագրող և
ծանուցված ցանկն է, վերջում նրա մասին գրականությունը:

Նորերս գրական հանձնարարական մատենագիտության ուղ-
ղությամբ լայն գործունեություն է ծավալել ՀՍՍՀ գրքասերների
ընկերությունը: Ընկերության հրատարակությունների մասին
ուսանողը կարող է տեղեկություններ քաղել ներկա թիմայի վեր-
ջում ցույց տրված «Կուլտ.-լուս. աշխատանք» ամսագրի հոդվա-
ծից»:

Մեթոդական-մատենագիտական փոխադարձ գրքույկներ:
Այսպիսի գրքույկների մի ամբողջ շարան են կազմում Մյասնիկ-

յանի և Խնկո-Ապոռ անվան զրադարանների թողարկումները: Դրանք հրատարակվել են հայ և այլ ժողովուրդների նշանավոր գրողների ծննդյան կամ մահվան տարեկիցների առթիվ: Միանման կառուցվածք ունեն: Պարունակում են գրողի կյանքի ու գործունեության մասին ակնարկ, համառոտ ժամանակագրություն, քննադատների և այլ գործիչների ասույթներ, քաղվածքներ գրողի բնույթի մտքերից՝ գրականության, լեզվի, արվեստի, հասարակական կյանքի վերաբերյալ և հեղինակի ստեղծագործությունների և նրա մասին գրականության ցանկեր:

Նախատեսված են մասսայական զրադարանների համար: Դրանցից անհրաժեշտ տեղեկություններ են քաղում նաև պարբերականների խմբագրությունները, լրագրողները, գրողի ստեղծագործությամբ զբաղվողները: Որոշ գրողների մասին հրատարակվել են երկու-երեք այդպիսի գրքույկներ: Ահա մի քանիսը.

Խաչատուր Աբովյան. 1848—1948: Մահվան 100-ամյակի առթիվ: Կաղմեցին Ա. Ս. Բաբայան, Լ. Բ. Մելքումյան Ե., 1948, 171 էջ:

Վիսսարիոն Գրիգորևիչ Բելինսկի: 1848—1948: Մահվան 100-ամյակի առթիվ: Կաղմեցին Ա. Ս. Բաբայան և Լ. Բ. Մելքումյան: Պատ. խմբ. Ռ. Վարդադարյան: Ե., 1948, 76 էջ:

Ավետիք Իսահակյան: Ծննդյան 80-ամյակի առթիվ: Կաղմեց Լ. Դավթյան, խմբ. Պ. Հակոբյան: Ե., 1955, 28 էջ:

Խաչատուր Աբովյան: Ծննդյան 150-ամյակի առթիվ: Կաղմեց Ալ. Շահազիզյան, խմբ. Պ. Հակոբյան: Ե., 1955, 60 էջ:

Նդիլի Զարենց: Ծննդյան 60-ամյակի առթիվ. 1897—1957: Կաղմեց Ա. Ռ. Կոծինյան, խմբ. և առաջաբան էդ. Մ. Զրբաշյան: Ե., 1957, 67 էջ:

Ալեքսանդր Շիրվանզադե: Ծննդյան 100-ամյակի առթիվ: Կաղմեց Լ. Մ. Դավթյան, խմբ. և առաջաբան էդ. Մ. Զրբաշյանի: Ե., 1958, 66 էջ:

Հովհաննես Թումանյան. 1869—1959: Կաղմեց Ս. Ռ. Կոծինյան, խմբ. էդ. Մ. Զրբաշյան: Ե., 1959, 66 էջ:

Շոթա Ռուսթավելին և նրա «Ընձևնալորը»: Ծննդյան 800-ամյակի առթիվ: Կաղմեց Ա. Շահազիզյան, խմբ. Պ. Մուրադյան: Ե., 1966, 91 էջ:

Հովհաննես Թումանյան (1869—1969): Ասույթներ, թեմատոր

խոսքեր, կենսագրական և մատենագիտական տեղեկություններ: Կազմեց Ա. Շահազիզյան, խմբ. էդ. Զրբաշյան: Եր., 1969, 186 էջ:

Թումանյանական օրերը մանկական գրադարանում: Կազմեց Բ. Գ. Մելյան, խմբ. Արմ. Հակոբյան: Ե., 1969, 80 էջ: (Ռոտատիպ):

«Նշանավոր և հիշարժան տարեթվեր» (Մինչև այժմ կոչվում էին «Նշանավոր և հիշարժան տարեթվերի օրացույցներ»): Հրատարակում են՝ Մյասնիկյանի անվ. գրադարանը 1957-ից, իսկ հնկո-Ապուր գրադարանը 1965-ից, անընդմեջ, երեք կամ չորս ամիսը մեկ: Պետական գրադարանի հրատարակություններում՝ հասարակական-քաղաքական նշանավոր տարեթվերի հետ տրվում են հայ և այլ ժողովուրդների անվանի գրողները, նույնպիսի նյութեր են և հնկո-Ապուր անվան գրադարանի հրատարակություններում՝ մանկական և երիտասարդական թեմաներով: Բերվում է յուրաքանչյուր գրողի համառոտ կենսագրությունը, ասույթներ և հանձնարարական ցանկ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հր. Կոստիկյան, Մատենագիտության հիմունքները: Ե., 1968, էջ 282—285 և 307—312:

Հ. Դավթյան, Գրքի պրոպագանդման ազնիվ մղումով:— «Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1980, № 1, էջ 26—29:

Ք ե մ ա 15. Ներգրվային գրական մատենագիտություն

Ներգրվային մատենագիտական ցանկերը մեծ մասամբ կցվում են գրականագիտական մենագրությունների, գրողների երկերի ժողովածուների կամ գրականագիտական ժողովածուների վերջում: Նման մատենագիտության առաջին և լավագույն օրինակը մեզանում Գ. Սունդուկյանի մատենագիտությունն է, զետեղված նրա 1934 թ. լույս տեսած երկերի մեկհատորյաչի 516—522 երկսյուն, մեծագիր էջերում: Միայն մեծ թատերագրի մասին գրականության ցանկն է: Գրականագետ-հեղինակների ազգանունների այբուբենի կարգով բերվում է հայերեն, ռուսերեն և վրացերեն սլավոնագրականներում եղած նյութերի բավական սպառիչ ցանկը: Կազմել է հատորը հրատարակության սլատրաստող, առաջաբանի, ծանոթա-

գրությունների հեղինակ և խմբագիր, գրականագետ Սուրեն Հաբությանյանը: Նույնպիսի լիարժեք ցանկեր են 1937-ին լույս տեսած «Ա. Պուշկին» ժողովածուի 317—394 էջերի Ա. Բաբայանի կազմած «Պուշկինը հայ գրականության մեջ», 1940-ին լույս տեսած Ն. Շահադիզի «Դիվան խաչատուր Աբովյանի» 362—370 էջերում՝ Խ. Աբովյանի մատենագիտությունը և այլն:

Հայրենական պատերազմի հետագա տարիներին լույս տեսած ներգրքային մատենագիտություններից ծավալունը Ռ. Հովհաննիսյանի «Ռուս գրականությունը հայ հասարակական մտքի գնահատմամբ» (Պետհամալսարանի հրատ. 1949) աշխատության մեջ ղեկավարված է: Շուրջ հարյուր էջերում՝ 279—383, ցույց է տրվում, թե սկզբից մինչև 1945 թ. մամուլում և առանձին գրքերով ռուս գրականությունից ինչ է լույս տեսել հայերեն: Փոքրիկ առաջաբանում հեղինակը ծանուցում է ցանկի կազմման սկզբունքները. «Բիբլիոգրաֆիան ըստ հեղինակների կազմել եմ, պահպանելով պատմականությունը, այսինքն երբ է գրողը հանդես եկել ռուս իրականության մեջ: Դա հնարավորություն կտա պարզել, թե այս կամ այն էսլոխայում հանդես եկած հեղինակներից որոնք են ամենից շատ գնահատվել հայ հասարակական մտքի կողմից, որոնք են ամենից շատ մասսայականացվել հայ ընթերցողների մեջ: Իսկ ամեն հեղինակից կատարված թարգմանությունները և հեղինակների մասին քննադատական հոդվածները, հեղինակների մասին բանաստեղծությունները դասավորել եմ ժամանակագրական կարգով՝ սկսած 13-րդ դարից մինչև 1945 թ.: Այս սկզբունքը պահպանված է միայն շնչին խախտումներով» (էջ 279): Իր բովանդակությամբ բաղմահ հեղինակ այս մատենագիտությունը ընդգրկում է նախահեղափոխական 51 և խորհրդային 46 հեղինակների: Այս նույն թեմայով ներգրքային երկրորդ մատենագիտությունը կազմել է գրականագետ Գուրգեն Հովնանը: Նրա «Ռուս-հայ գրական կապերը 19—20-րդ դարերում» մենագրության երկու հատորներում տրվում է ռուս առանձին գրողների երկերի հայերեն թարգմանությունների ցանկերը: Առաջին հատորի (Ե., 1960) 453—506 էջերում Գոգոլի, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի և Նեկրասովի ցանկերն են, իսկ երկրորդ հատորի (Ե., 1961) 443—478 էջերում՝ Լ. Տոլստոյի, Չխտովի, Գրբկու: Հայերեն վերնագրերից հետո տրվում է ռուսերենը. որով հեշտությամբ խմացվում է հա-

յերենում տարբեր անուններով թարգմանված միևնույն երկի բնագրային վերնագիրը:

Հայ-վրացական գրական առնչությունների վերաբերյալ միակամբողջական աղբյուրը առայժմ նույնպես ներգրծային մի ցանկ է: Այն ղետեղված է Միք. Զավարյանի «Ուրվագծեր հայ-վրաց գրական-կուլտուրական կապերի պատմության XIX—XX դդ.» (Ե., 1959) աշխատության 195—232 էջերում: Այստեղ հավաքված է 19-րդ դարի կեսերից սկսած վրացերենից հայերեն թարգմանված գեղարվեստական երկերը, գրականության, լեզվի, հասարակական կյանքի վերաբերյալ ուսումնասիրությունները, հոդվածները, գրախոսությունները: Դրանք դասավորված են հետևյալ հաջորդականությամբ. վրացական ժողովրդական բանահյուսության նմուշների հայերեն թարգմանություններից հետո, ժամանակագրական կարգով, վրաց նշանավոր գրողների երկերն ու նրանց մասին գրականությունն է, սույա «վրաց այլ գրողների ստեղծագործությունների թարգմանությունները»: Զանապրությամբ կազմված «Անձնանունների բառարանում» յուրաքանչյուր հեղինակի մասին տրվում է համառոտ, բայց հանգամանալից կենսագրական տեղեկություններ:

Ներգրծային մատենագիտության օրինակներից են. Ա. Բաբայանի Շիլլերի ստեղծագործությունների հայերեն թարգմանությունների ցանկը՝ նրա «Շիլլերը հայ գրականության մեջ և թատրոնում» աշխատության (Ե., 1959) 339—366 էջերում, Ռ. Իշխանյանի՝ Բակունցի ստեղծագործությունների մատենագիտությունը «Ակսել Բակունցի ստեղծագործությունը: Հոգվածների ժողովածու» գրքում (Ե., 1959, էջ 271—294), Ա. Շարուրյանի՝ Սրբուհի Տյուսարի մատենագիտությունը, նրա «Սրբուհի Տյուսար: Կյանքը և ստեղծագործությունը» գրքում (Ե., 1963, էջ 215—245), Վ. Վարդանյանի «Հովհաննես Մասեհյանի մատենագիտությունը»՝ «Շեքսպիրականի» 6-րդ գրքում (Ե., 1980, էջ 247—268), Իրենց լիակատարությամբ և օժանդակ ցանկերով բոլորովին չեն զիջում առանձին գրքով հրատարակվածներին Պետական համալսարանի «Գրական կապեր» ժողովածուի 2-րդ հատորում ղետեղված Ի. Վարդապետյանի «Ն. Վ. Գոգոլը հայերեն թարգմանություններում և քննադա-

տության մեջ» Ա. Սահակյանի «Ի. Ս. Տուրգենևը հայերեն թարգմանություններում և քննադատության մեջ» ցանկերը⁶։

Կարելի է ցույց տալ այլ օրինակներ ևս, սակայն այսքանով բավարարվենք նշելով, որ ներգրքային մատենագիտական ցանկեր հետզհետե ավելի հաճախ են հանդիպում հասկապես մեծ ընդգրկումով, բազմաթիվ աղբյուրների օգտագործած մենագրություններում, զրականության պատմություններում, ժողովածուներում։ Դա մի կողմից Կրականագիտական ուսումնասիրությունների մակարդակի բարձրացման ցուցանիշ է, մյուս կողմից՝ մատենագիտական աշխատանքի գնահատության վկայություն։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱՅԻՆ

ՌՈՒՍՍԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Թ Ե մ ա 16. Գրական բազմաճյուղի (общелитературная) մատենագիտություններ

Ռուսական նոր մատենագիտության զարգացման շրջադարձային կետերից էր 18-րդ դարի երկրորդ կեսերը, երբ հրատարակվեց Ն. Ի. Նովիկովի «Ռուսական գրողների մասին պատմական բառարանի փորձ» աշխատությունը։ Այնուհետև հաջորդ դարի սկզբներին, 1813—1821 թթ. արդեն հրապարակի վրա էր ուսական մատենագիտության «հայր» Վասիլի Ստեպանովիչ Սոսիկովի ուսերին գրքի հինգհատորյա ամբողջական մատենագիտությունը։ Այս նույն դարում, 1872 թ. Վ. Ի. Մեժովի История русской и всеобщей словесности. Библиографические материалы...

(«Ռուս և համաշխարհային դպրության պատմություն։ Մատենագիտական նյութեր») աշխատության հրապարակումով սկզբնավորվեց ուսական գրական մատենագիտությունը իբրև ինքնուրույն բնագավառ։ Մեժովի հաջորդ աշխատության՝ բազմահատոր Русская историческая библиография (СПб., 1884) 4-րդ հատորը ամբողջովին նվիրված էր զրականությանը։

⁶ Н. В. Гоголь в армянских переводах и критике. (Составитель И. Б. Вардапетян).—В кн. Литературные связи, т. 2, Ереван, Изд-во Ереванского университета, 1977. стр. 258—289; И. С. Тургенев в армянских переводах и критике, (Составитель А. Г. Саакян).— Там же: стр. 290—327.

Գրական մատենագիտության ստեղծման հաջորդ քայլը կատարեց Ավգուստինա Մեղկերը: Նրա հրկհատոր Русская словесность с XI по XIX столетие включительно. (Спб., 1899—1902) արժեքավոր է ոչ միայն նյութի լայն ընդգրկումով, այլ կառուցվածքով ու կազմման եղանակով: Շնորհիվ այն բանի, որ նրանում ընդգրկված են նաև հրկրորդական, ոչ հանրահայտ հեղինակները, այն մինչև այսօր էլ մնում է իբրև հազվագյուտ տեղեկատու աղբյուր:

Մեղկերի ընկերված ժամանակաշրջանի գրականությունը, բայց առավել լայն ծրագրով ու խորությամբ է մատենագրել գրականության խոշորագույն սյուսմաբան և մատենագետ Ս. Ա. Վենգերովը: Նա մտադրվել էր կազմել սկզբից մինչև 19-րդ դարավերջ ռուս գրողների և գիտնականների մատենագիտական ընդարձակ բառարանը: Այդ բովանդակությամբ նրա առաջին աշխատությունը կոչվում է. Критико-биографический словарь русских писателей и ученых (от начала русской образованности до наших дней). Т. 1—6. Спб., 1889—1904. («Ռուս գրողների և գիտնականների քննադատական-կենսագրական բառարան»): Տրվում է յուրաքանչյուր գրողի կամ գործիչի կենսագրությունը, գործունեության մանրամասն քննադատական բնութագիրը, ստեղծագործությունների և նրա մասին գրականության լրիվ ցանկը: Գործը զուլի բերելու համար, նա այդ աշխատանքում ներգրավել էր մի շարք գիտնականների: Շուտով ակնհայտ դարձավ, որ այդպիսի ծավալուն աշխատության իրականացումը անհնար է: Գործի հրատարակված չորս հատորները ընդգրկում էին միայն Ա.—Բ տառերը և Վ տառի մի մասը: Մնացած երկու հատորներում հավաքված են այբուբենից դուրս, տարբեր տառերով սկսվող հեղինակների մասին կենսագրական-քննադատական նյութեր ու այլ տեղեկություններ:

Հրաժարվելով իր հսկայական ծրագրից, Վենգերովը 1900 թվականից սկսեց հրատարակել իր աշխատության նոր տարբերակը՝ Источники словаря русских писателей. Т. 1—4. Спб.-Пг., 1900—1917. («Ռուս գրողների բառարանի աղբյուրները»): Այստեղ յուրաքանչյուր հեղինակի մասին տրվում էր կենսագրական տեղեկություն և նրա մասին գրականության լիակատար ցանկը: Գրողների ստեղծագործությունների ցանկը այս աշխատության,

խնդիրներից դուրս էր: Մակայն այս դործը նույնպես անավարտ մնաց և 1917-ին ընդհատվեց «Նեկրասով» ազգանվան վրա:

Վենգերովի երրորդ, առավել սահմանափակ ծրագրով փորձը կոչվում է. Критико-биографический словарь русских писателей и ученых (от начала русской образованности до наших дней). Изд. 2-е, совершенно переработ. Предварительный список русских писателей и ученых и первые о них справки. Т. 1—2. Пг., 1915—1918. («...Ռուս գրողների և գիտնականների նախնական ցանկ և սկզբնական տեղեկություններ նրանց մասին»): Այստեղ տրվում է գրողների ու գիտնականների անուն-ազգանունը, կյանքի տարեթվերն ու համառոտ տեղեկություններ նրանց մասին: Նույնպես անավարտ մնացած այս բառարանը հասցված է մինչև «Պավլով» ազգանունը:

Վենգերովի հավաքած հսկայական նյութը մեծ մասամբ մնացել է անտիպ: Նրա հարուստ մատենագիտական քարտարանը, որ հասցված է մինչև 1910 թվականը, այժմ պահպանվում է ՍՍՀՄ ԳԱ Ռուս գրականության ինստիտուտում և օգտագործվում է մասնագետների կողմից: Վենգերովի և Մեզլերի աշխատությունները լրացնում են միմյանց և ցարդ մնում են իբրև հիմնական աղբյուր մինչև 19-րդ դարիվերջի գրական հարցերի վերաբերյալ պրպտումներ կատարելը:

Վենգերովից հետո բոլոր ժամանակների գրողներն ու գիտնականներն ընդգրկող մատենագիտություններ կազմելու փորձեր չտրվեցին: Բանասերները համոզվեցին, որ հնարավոր է կազմել որևէ դարաշրջանի, հատվածի, բնագավառի վերաբերյալ և այն էլ ոչ թե անձնուրաց անհատների ջանքերով միայն, այլ դիտական խոշոր հաստատությունների հովանավորությամբ ու միջոցներով: Սովետական իշխանության տարիներին մատենագիտությամբ պրազվում են ոչ միայն պետական խոշոր դրագարանները, այլև ՍՍՀՄ ԳԱ զանազան ինստիտուտները:

Ռուս գրականության տարբեր դարաշրջաններին նվիրված մի շարք մատենագիտություններ է հրատարակել ՍՍՀՄ ԳԱ Ռուս գրականության ինստիտուտը: Ահա դրանցից մի քանիսը.

Н. Ф. Дробленкова. Библиография советских русских работ по литературе XI—XVII вв. За 1917—1957 гг. Под ред.

ի со вступит. статьей В. П. Адрнановой-Перетц. М.-Л., Изд-во АН СССР, 1961, 435 с.

Степанов В. П., Стенник Ю. В. История русской литературы XVIII века. Под ред., с доп. и предисл. П. Н. Беркова. Л., «Наука», 1968, 500 с..

Վերջինս բաղկացած է ընդհանուր բաժնից և 18-րդ դարի 52 հեղինակների դործերի և նրանց մասին գրականության ցանկերից: Սրանից ավելի վաղ են հրատարակվել.

История русской литературы XIX века. Библиогр. указатель под ред. К. Д. Муратовой. М.-Л., Изд-во АН СССР, 1962. 966 с.

История русской литературы конца XIX—начала XX вв. Библиогр. указатель под ред. К. Д. Муратовой. М.-Л., Изд-во АН СССР, 1963, 520 с.

Այս մատենագիտությունները կազմելիս օգտագործվել են Ռուս գրականության ինստիտուտում պահվող այլևայլ քարտարաններ, Համամիութենական գրադաշտի տարեգրերը: Մատենագրվող հեղինակների ընտրությունը կատարելիս կազմողները առաջնորդվել են բազմազատոր «Ռուս գրականության պատմության» (Մ.—Լ., 1941—1956) և «Ակնարկներ ռուսական լրագրության և քննադատության պատմության: Հատ. 1» (Լ., 1950) տվյալներով ու տեսական դրույթներով:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հիսուն տարիներում ստեղծված գրաքննադատական հրականությունը ամփոփված է ՍՍՀՄ ԳԱ հիմնական գրադարանի հրատարակած հետևյալ աշխատություններում.

Советское литературоведение и критика. Русская советская литература. (Общие работы). Книги и статьи 1917—1962 гг. Библиогр. указатель. Отв. ред. Ю. Д. Рыскин. М., «Наука», 1966, 591 с.

Սրանք բոլորն էլ մասնագետների ձեռքով անցած, երբեք չափ-ժեքադրվող ծանրակշիռ աշխատություններ են և միշտ էլ կմնան իբրև անգնահատելի աղբյուրներ ռուսաց գրականության համապատասխան շրջաններն ուսումնասիրողների համար: Նույնը կարելի է ասել Ռուս գրականության ինստիտուտի թեմատիկ ու ժանրային մատենագիտությունների շարքի մասին, որոնցից են, օրինակ.

Мельц М. Я., Русский фольклор. Библиогр. указатель. [Т. 1—3. 1917—1944, 1945—1959, 1960—1965]. Под ред. А. М. Астаховой и С. П. Луппова. Л., Изд-во АН СССР—«Наука», 1961—1967.

Грознова Н. А., Советский роман, его теория и история. Библиогр. указатель. 1917—1964. Л., 1966, 258 с..

Ռուսական գրական բազմահեղինակ մատենագիտությունների մեջ հատուկ տեղ և գրավում սովետական սուս խոշորագույն մատենագիտներ Ն. Ի. Մացուերի և Ի. Ի. Ստարցևի աշխատությունները:

Ն. Ի. Մացուեր 1926—1940 թվականների ընթացքում լույս է բնծայել «Художественная литература русская и переводная» չորս գրքերը, որոնք բնագրվում են 1917—1937 թվականներին լույս տեսած իտալախորհրդային սուս, ՍՍՀՄ ժողովուրդների և արտասահմանյան երկրների գեղարվեստական գրականությունը, քննադատական, գրականագիտական գրքերն ու հոդվածները:

Սկսած 1938 թվականից՝ Մացուեր այդ ամբողջ գրականությունը ներկայացնում է երկու շարքով՝ մեկով՝ սովետական գրականությունը, մյուսով՝ սուսական իտալահեղափոխական հեղինակներն ու արտասահմանյանը: Առաջին շարքից լույս են տեսել հետևյալ գրակները.

Советская художественная литература и критика. 1938—1948. Библиография. М., «Сов. писатель», 1952, 430 с.

Նույնը՝ 1949—51 թթ.—1953, 274 էջ:

Նույնը՝ 1952—53 թթ.—1954, 298 էջ:

Նույնը՝ 1954—55 թթ.—1957, 415 էջ:

Նույնը՝ 1956—57 թթ.—1959, 548 էջ:

Նույնը՝ 1958—59 թթ.—1962, 673 էջ:

Նույնը՝ 1960—61 թթ.—1964, 569 էջ:

Նույնը՝ 1962—63 թթ.—1970, 624 էջ:

Նույնը՝ 1964—65 թթ.—1972, 647 էջ:

Սրանցից յուրաքանչյուրը կազմված է երկու հիմնական բաժիններից՝ Գեղարվեստական գրականություն (որ հեղինակների ազգանունների այբբենական կարգով բերվում է նրանց երկերի

ռուսերեն աչքի ընկնող թարգմանությունները) և Քննադատություն և գրականագիտություն (ղարծյալ այբբենական կարգով բերվում է սովետական գրականագիտների կարևորագույն աշխատությունները):

Երկրորդ շարքով Մացուկը ներկայացնում է 1938 թ. հետո լույս տեսած նախահեղափոխական ռուս և արտասահմանյան գրականությունը հետևյալ երկհատորով:

Художественная литература русская и переводная. Библиография. Т. 1—2 [1938—1945, 1946—1953]. М., Гослитиздат, 1956—1959.

Կառուցված է նախորդ գրքի նման:

Ի. Ի. Ստարցևը ավելի քան տասնհատորյա ռուսերեն մանկական գրքի մատենագիտության հեղինակ է: Համընդհանուր ճանաչում է գտել նաև նրա երկհատոր Художественная литература народов СССР в переводах на русский язык. Библиография. 1934—1954. М., Гослитиздат, 1957, 751 с.

Նույնը՝ 1955—1959. М., «Худож. лит.», 1964, 726 с.

Սա համարվում է ՍՍՀՄ ժողովուրդների գրականությունների (բացի ռուսականից) ուսումնասիրման կարևորագույն աղբյուրը: Լսմփոխում է 25 տարիներում ռուսերեն թարգմանված 60-ից ավելի ժողովուրդների գրականություններ: Գրանցված են ռուսերեն ստանձին գրքերով հրատարակված երկերն ու ժողովրդական ստեղծագործությունները: Պարբերականներում և ժողովածուներում տպագրվածները զուրս են թողնված: Քննադատական-գրականագիտական գրականությունն ավելի լիակատար է: Գրքերից ու ժողովածուներում ղեկավարված նյութերից բացի՝ կենտրոնական, հանրապետական, մարզային պարբերականներում լույս տեսած հոդվածներն ու գրախոսությունները:

Բաղկացած է երեք բաժնից. ա. «ՍՍՀՄ ժողովուրդների գրականության ու բանահյուսության թարգմանությունները և քննադատություն ռուսերեն լեզվով», ուր ազգային գրականություններն են՝ այբբենական կարգով: Յուրաքանչյուր ազգային գրականության սկզբում կոչկեղծով ժողովածուներն են, ապա հեղինակները՝ այբբենական կարգով: Հեղինակի ստեղծագործություններից անմիջապես հետո նրա մասին ռուսերեն գրքերն ու հոդվածներն են: Բ. «Ժողովածուներ» և գ. «Գրաքննադատություն»: Այս ենթաբաժ-

նում ՍՍՀՄ ժողովուրդների դրականությունների մասին ընդհանուր աշխատություններն են, ապա ազգանունների կամ վերնազրերի աչրբենական կարգով պարբերականներում տպագրված հոդվածները: Ունի անունների և օդապարծված սղբյուրների ցանկեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Библиография художественной литературы, стр. 284—305, 313—325.

Թ Ե մ ա 17. ԱՆՏԱՏԱԿԱՆ մատենագիտություններ

Որևէ հեղինակի գործունեությամբ զբաղվող մասնագետի առաջին անելիքը նրա ստեղծագործությունների և նրա մասին գրականության որոնումն է: Նկատվել է, որ շատ ավելի ջանք ու ժամանակ է պահանջում նման տեղեկանքների հավաքումը, քան շարադրանքը: Իսկ տեղեկատու աղբյուրներից լավագույնները, որոնք տասնապատիկ անգամներ հեշտացնում են հետազոտողի աշխատանքը, մատենագիտություններն են: Դրանով է բացատրվում մեր օրերում բոլոր ժողովուրդների դասական ու արդի գրողների անհատական մատենագիտությունների առատությունը: Այս առումով ևս հարուստ և ուսունելի է ուսս գրականությունը: Այսպիսի ուղեցույցներ սկսել են կազմվել զեռես անցյալ դարի երկրորդ կեսերից և այժմ դժվար է ցույց տալ որևէ նշանավոր ուսս հեղինակ, որի մատենագիտությունը կազմված չլինի: Իրենց բազմազանությամբ, ընդարձակությամբ, գիտական խորությամբ առանձնացվում են Պուշկինի, Նեկրասովի, Սալտիկով-Շչեգրինի, Չեխովի, Լ. Տոլստոյի, Գորկու մատենագիտությունները: Նրանցից յուրաքանչյուրի մատենագիտությունը բացահայտում է նաև ժամանակաշրջանի ամբողջ դրական զարգացման ուղիներն ու տրամադրությունները: Պուշկինյան մատենագիտություններն, օրինակ, բնութագրում են 19-րդ դարի գրական շարժման շատ կողմեր, Գորկունը՝ հարուստ տեղեկություններ ու հսկայական նյութ է պարունակում ևոցիալիստական ռեալիզմի, նրա զարգացման փուլերի մասին ընդհանրապես:

Վերջին երկու հեղինակների կարևորագույն մատենագիտությունների թվարկումն իսկ հնարավորություն է տալիս պատկե-

բացնելու ռուսական զրական անհատական մատենագիտությունների ընդգրկումներն ու ծավալը:

Ա. Ս. Պուշկինի մատենագիտությունները: Ռուսաց ազգային հանճարի ստեղծագործությունների կամ նրա մասին զրականության առաջին փոքրածավալ ցանկերը երևացել են դեռևս 1840-ական թթ. վերջերին, իսկ մեր օրերին արդեն անհրաժեշտություն է զգացվել կազմելու նրա մատենագիտությունների մատենագիտությունը⁷: Ըստ նրանում բերված տվյալների, մինչև 1950 թ. Պուշկինի անհատական ու հանձնարարական ցանկերի, բաղմահ հեղինակ մատենագիտություններում նրան հատկացված բաժինների, կյանքի ու գործունեության ժամանակագրությունների, ներգրքային և այլ ցանկերի ընդհանուր թիվը հասնում է 300-ի: Հարյուրն էլ ստեղծվել են վերջին երեսուն տարիներին: Տարբեր բովանդակությամբ մեծ ու փոքր այդ մատենագիտությունների մեջ կողմնորոշվելու համար թվարկներ զրանց երկու հիմնական տեսակներից մի քանիսը.

ա. Բնագրերի մատենագիտություններից լավագույններն են. Ն. Սինյավսկու և Մ. Յյավլովսկու «Պուշկինյան տպագրություններ» (Пушкин в печати. 1814—1837, М., 1914): Երկրորդ հրատարակություն՝ Մ., 1938:

Այստեղ մատենագրվում են Պուշկինի կենդանության օրոք լույս տեսած ստեղծագործությունները: Մանրագրություններում տեղեկություններ են արվում զրանց հետագա վերահրատարակությունների մասին:

Սրա անմիջական շարունակությունն է.

Կ. Բոգոևսկայայի «Պուշկինյան տպագրություններ 100 տարում» (Пушкин в печати за 100 лет. 1837—1937. М., 1938).

Սրանում հաշվի են առնվում առաջին հրատարակությունները, իսկ վերահրատարակություններից նրանք, որոնք փոփոխության են ենթարկվել:

բ) Ամբողջական (персональная) մատենագիտություններ, որոնք արտացոլում են թե՛ ստեղծագործությունները և թե՛ նրա

⁷ Добровольский Л. М., Лавров В. М. Библиография пушкинской библиографии. 1846—1950. М.-Л., Изд-во АН СССР, 1950, 67 с.

մասին գրականությունը: Պուշկինյան այս կարգի առաջին ծավալուն աշխատությունն է.

Межов В. И. Puschkiniana. Библиографический указатель статей о жизни А. С. Пушкина, его сочинений и вызванных ими произведений литературы и искусства. Спб., 1886, XI, 405 с.

Իբրև առջին փորձ սրանում բացթողումներ և այլ թերություններ կան: Այդուհանդերձ երկրորդ բաժինը՝ Պուշկինի մասին գրականության ցանկը, մինչև օրս էլ մնում է իբրև հիմնական աղբյուրներից մեկը: Բացի այդ. Մեծովի մշակած անհատական մատենագիտության կառուցվածքը հիմք հանդիսացավ հետագայի բոլոր «պուշկինիանների» համար:

Մեծովի մատենագիտության անմիջական շարունակությունը կազմել են սովետական պուշկինագետ-մատենագետները: Այն է.

Берков П. Н., Лавров В. М. Библиография произведений А. С. Пушкина и литературы о нем. 1886—1899. М.-Л., 1949, 996 с.

Նկարագրությունների ճշտությամբ, լիակատարությամբ, օժանդակ ցանկերով սա գերազանցում է Մեծովի աշխատությանը: Սրանում, օրինակ, մտենագրված են նույնիսկ լրագրական փոքր ակնարկները: Առանձնապես լիակատար է 1887 և 1899 թթ. հորեկանական տարիների գրականությունը:

Ժամանակագրական կարգով հստակա շրջանն են ընդգրկում հետևյալները.

Фомин А. Г. Puschkiniana. 1900—1910. Л., Изд-во АН СССР, 1929, X, 308 с.

Фомин А. Г. Puschkiniana. 1911—1917. М.-Л., Изд-во АН СССР, 1937, 539 с.

Սրանցից առաջինը կազմելիս Ֆոմինը օգտվել է նաև Վենգերովի հավաքած նյութերից, մինչդեռ երկրորդն ամբողջովին իր աշխատանքն է, նկարագրությունները կատարել է աչքով տեսածի հիման վրա (de visu), որ ինքնին արդեն մեծ առավելություն է: Երկրորդն ունի օժանդակ ցանկեր, որից զուրկ է առաջինը:

Добровольский Л. М., Мордовченко Н. И. Библиография произведений А. С. Пушкина и литература о нем. 1918—1936. Ч. I. М.-Л., 1952, 284 с.

Հետագա շրջանը կազմել են Ռուս գրականության ինստիտուտի (Պուշկինյան տուն) աշխատակիցները.

Библиография произведений А. С. Пушкина и литературы о нем. 1937—1948. М.-Л., 1963, 747 с.

Библиография произведений А. С. Пушкина и литературы о нем. (5 томов: за 1949, 1950, 1951, 1952—1953, 1954—1957 гг.). М.-Л., 1951—1960.

Վերջին այս տարեգրություններում ուսանողների հետ մեծ տեղ է հատկացվում Պուշկինի երկերի ՍՍՀՄ ժողովուրդների և արտասահմանյան լեզուներով հրատարակություններին, Պուշկինը և ռուս ու այլ ժողովուրդների գրողները, Պուշկինը արվեստում, թատրոնում թեմաներին:

Պուշկինյան տասնյակ հանձնարարական մատենագիտական ցանկերից լավագույնը կենինի տնվտնի ՍՍՀՄ պետական գրողարանի «Ռուս մեծ գրողներ» մատենաշարով հրատարակությունն է.

Александр Сергеевич Пушкин. Рекоменд. указатель литературы. Под общ. ред. Н. Л. Бродского. М., 1949, 176 с.

Բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

ա. կյանքի և գործունեության ժամանակագրությունը:

բ. Մտքասիրտի դասականները Պուշկինի մասին:

գ. Պուշկինի երկերի կարևորագույն հրատարակությունները:

դ. Դրականություն նրա մասին:

Իրենց բովանդակությամբ հանձնարարական բնույթի են ուսական գրական-ուսումնական շրջաններում լայն տարածում գտած «սեմինարներ»: Դրանցում արվում է հեղինակի կյանքի ու գործունեության ժամանակագրությունը, ստեղծագործությունների և նրա մասին գրականության ցանկեր, թվարկվում են այն թեմաները, որոնց շուրջ կարելի է գրել զեկուցումներ, ռեֆերատներ, հետազոտություններ: Դրանք մեծ մասամբ հրատարակում են բուհերը՝ ուսանողության, ասպիրանտների, գիտաշխատողների համար: Նման «սեմինարներ» են հրատարակվել նվիրված ուս շատ գրողների («Նեկրասովյան սեմինարներ», «Զեխովյան սեմինարներ» և այլն): Պուշկինի վերաբերյալ առաջին սեմինարը գրել է գրականագետ Ն. Պիկասանովը. «Պուշկինյան սեմինարներ» (Մ., 1922), իսկ վերջինը, առավել ամբողջական ու ընդարձակ ծրագրով, Բ. Ս.

Մեյլախի: և Վ. Մ. Լափրովի աշխատությունն է. «Պուշկին: Սեմինարներ»: Լենինգրադ, Ուչպետպիզ, 1959, 267 էջ:

Պուշկինի կյանքի ու գործունեության ժամանակագրություններից ամենածավալունն ու գիտականը նշանավոր պուշկինագետի հետևյալ աշխատությունն է.

Цявловский М. А. Летопись жизни и творчества А.С. Пушкина. Т. I, М., Изд-во АН СССР, 1951, XIV, 880 с.

Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Պուշկինի անձնական գրադարանի մասնագիտությունը: Այն հեղափոխությունից առաջ հրատարակել է պուշկինագետ Բ. Լ. Մոձալևսկին: Լրացրել է նրա որդին: սովետական տարիներին:

Модзалевский Б. Л. Библиотека А. С. Пушкина. Библиографическое описание.—В кн. «Пушкин и его современники. Вып. IX—X. СПб., 1910, 442 с.

Модзалевский Л. Б. Библиотека Пушкина. Новые материалы.—«Лит. наследство», 1934, т. 16—18. с. 984—1024.

Մ. Գորկու մատենագիտություններ: Գորկու գրական ծառանգության համարյա ամբողջական ցանկը ամփոփված է մեկ գրքում.

Балухатый С. Литературная работа М. Горького. Список первопечатных текстов и авторизованных изданий. 1892—1934. М.-Л.. «Academia», 1936, 552 с.

Գրախոսութ. Ա. Կարինյան, Մաքսիմ Գորկու ուղին:— «Խորհրդ. գրականություն», 1940, № 7, էջ 147—150:

Գրանցված են գրողի բոլոր ստեղծագործությունները, այդ թվում նաև այնպիսի ղեկուցումներ, ճառեր, ելույթներ, որոնց հրատարակությունը Գորկին չի մասնակցել: Քրտնաջան հետազոտության շնորհիվ հայտնաբերվել են անստորագիր կամ գրականագիտությանը մինչև այդ անհայտ ծածկանուններով շատ աշխատություններ և համոզիչ փաստերով ցույց տրվել, որ պատկանում են Գորկուն. Վերցված են բնագրերի բոլոր առաջին հրատարակությունները, իսկ վերահրատարակություններից նրանք, որոնք կատարվել են Գորկու ձեռքով: Մանոֆագրություններում մասնանշվել է հեղինակային կամ գրաքննական փոփոխությունները՝ դրանով իսկ հարուստ փաստեր տրամադրել հետագա ուսումնասիրողներին: Ունի Գորկու երկերի այբբենական, անձնանունների, առարկայական և օգտագործված աղբյուրների ցանկեր:

Այդուհանդերձ այս հրաշալի աշխատությունը դերժ է թերություններից: Ձի նայվել մի շարք ուսուսական և արտասահմանյան (իտալական, ֆրանսիական, ամերիկյան) պարբերականներ, որոնցում ենթադրվում է, որ մասնակցած պետք է լինի Գորկին: Օգտագործված աղբյուրների ցանկից բաց են թողնվել նրանք, որոնցում Գորկուց նյութեր չի գտնվել:

Հետագայում հրատարակած բնագրերի մատենագիտություններում վերացվել են նման թերությունները.

Балухатый С., Муратова К. Литературная работа М. Горького. Дополнительный список первопечатных текстов и авторизованных изданий. 1889—1936. М.-Л., Изд-во АН СССР, 1941. 196 с.

Муратова К. Д. Литературная работа М. Горького. Второй дополнительный список первопечатных текстов и авторизованных изданий. 1888—1936.—В кн. М. Горький, Материалы и исследования. Т. 4. Л., 1951, с. 329—400.

Այնուհետև Գորկու մատենագիտությունների կազմումը կենտրոնացվել է ՍՍՀՄ ԳԱ Մ. Գորկու տնվան համաշխարհային գրականության ինստիտուտում: Մի շարք ցանկեր է հրատարակել նաև ՍՍՀՄ ԳԱ հիմնադիր գրադարանը: Այս վերջիններից են.

Бродская С. Я. Публикации текстов А. М. Горького в СССР. (1959—1963). Библиогр. указатель. М., «Наука», 1967, 253 с.

Կա նաև այս հեղինակի «Մ. Գորկու բնագրերի հրատարակությունները արտասահմանում. 1905—1958 թթ.»:

Գորկու մասին գրականության առավել լիակատար մատենագիտությունը դարձյալ նրա բնագրերի մատենագիտության հեղինակինն է.

Балухатый С. Д. Критика о М. Горьком. Библиография статей и книг. 1893—1932. Л., ГИХЛ, 1934, 593 с.

Գորկու մասին լույս տեսած բոլոր գրքերն են, ուսումնամեթոդական ձեռնարկների առանձին գլուխներ, գրողի երկերի նախաբաններ ու վերջաբաններ: Նախահեղափոխական շրջանից վերցված են միայն առաջատար հոսանքները ներկայացնող ամսագրերի նյութերը, իսկ սովետական տարիների կենտրոնական պարբերա-

կանները շրջանակները առավել լայն է: Մայրամասային մամուլը տեսադաշտից դուրս է թողնվել:

Թեև հեղինակն իր մատենագիտությունը համարում է «սպառիշտ», բայց նյութի նկատելի ընտրություն է կատարել: Բացառվել են, օրինակ, տեղեկատվական, լրագրային կարճ հաղորդումները, զարդակաւ ձևով արկերի հոդվածները և նրանք, որոնցում Գորկու անունը հիշատակվում է հարեանցիորեն: Սակայն այս սկզբունքը ոչ միշտ է պահպանվել:

Երկար ժամանակ այս մատենագիտությունը շարունակողներ չունեցավ, մինչև որ հրատարակվեց.

Лукирская К. П., Морщихина А. С. Литература о М. Горьком. Библиография. 1955—1960. Под ред. К. Д. Муратовой. М.-Л., «Наука», 1965, 406 с. (АН СССР. Ин-т лит. (Пушкинский дом). Биб-ка).

Բալուխատիի հետևությունները կազմված այս գործի զլխավոր առավելությունը գիտականությունն ու լիակատարությունն է, թեև նրա կազմողները ևս չեն հրաժարվել նյութերի որոշ ընտրությունից: Նրանք նույնպես չեն վերցրել այն գրքերն ու հոդվածները, ուր Գորկու անունը հիշատակվում է թուցիկ, ինչպես և լրագրային փոքրածավալ հաղորդագրությունները:

Գորկու վերաբերյալ տեղեկատու գրականության մեջ լայն ճանաչման են արժանացել սեմինարները: Դրանցից են.

Балухатый С. Д. Горьковский семинарий. Л., Изд-во Ленингр. гос. ун-та, 1946, 186 с.

Муратова К. Д. Семинарий по Горькому. Л., Учпедгиз, 1956, 275 с.

Նյութերի բազմազանությամբ, կառուցվածքով, թեմաների ու գրականության ցանկերի հարստությամբ առավել հաջողվածը այս երկրորդն է:

Կազմված է նաև Գորկու քառահատոր կյանքի և գործունեության ժամանակագրությունը (Մ., 1958—60), որն իրականացրել է Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտը:

ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Библиография художественной литературы, стр. 305—312, 330—337.

Թ Է մ ա 18. Արտասահմանյան երկրների գրականության
ոուսերեն մասենագիտություններ

Արտասահմանյան երկրների ղեկավարվածության գրքերի ուս-
սերեն ընթացիկ թարգմանությունները ներկայումս մատենագրվում
են Համամիութենական գրապալատի և Արտասահմանյան գրա-
կանության համամիութենական պետական գրադարանի համա-
տեղ ուժերով լույս աեսնող «Լիտերատուրա ի խսկուստովո նա-
րոգով ՍՍՍՐ ի զարուբեժնիս ստրան» երկամյա բյուլետենում:
Իսկ արտասահմանյան երկրների գրականությունների վերաբերյալ
գրականագիտական նյութերը՝ «Նովայա սովետսկայա լիտերա-
տուրա: պո լիտերատուրովեդենիյու» ամենամսյա բյուլետենում,
որը հրատարակում են ՍՍՀՄ ԳԱ հասարակական գիտությունների
Գիտաինֆորմացիայի ինստիտուտը և հասարակական գիտություն-
ների հիմնական գրադարանը:

Այս բնագավառի հետադարձ մատենագիտություններից ամե-
նանշանավորը: 16-րդ թեմայում արգեն հիշատակված Ն. Ի. Մա-
ցուեի «Ռուսական և թարգմանական ղեկավարվածության գրականու-
թյուն. 1938—1953» երկհատորն է:

Ծուպատերազմյան տարիներին հրատարակվել են ոչ քիչ մա-
տենագիտական ցանկեր արտասահմանյան առանձին երկրների
գրականությունների ոուսերեն թարգմանությունների: Օրինակ, եր-
կու դար է ընդգրկում հետևյալ ցանկը.

Шур. Л. А. Художественная литература Латинской Аме-
рики в русской печати. Аннот. библиография русских пере-
водов и критической литературы на русском языке. 1765—
1959. М., Изд-во Всесоюз. кн. палаты, 1960, 292 с. (Всесоюз.
гос. б-ка иностр. лит-ры).

ՍՍՀՄ ժողովուրդների լեզուներով թարգմանված արևելյան եր-
կրների գրականությունների լավագույն աղբյուրներից է.

Художественная литература Зарубежного Востока. Биб-
лиография переводов на языки народов СССР. (1918—1960).
М., Изд-во вост. лит. 1963, 130 с.

Բազմաթիվ են առանձին երկրների գրականությունների մա-
տենագիտությունները, որոնց ցանկը հրատարակել է Սալտիկով-
Շչեգրինի անվան հանրային գրադարանը (Տե՛ս Կандель Б. Л.

Библиография русских библиографий по зарубежной художественной литературе и литературоведению. Л., 1962, 180 с.).

Արտատահմանյան գրական մատենագիտությունների մեջ նկատելի տեղ են զբաղեցնում լեհերի անվան պետական գրադրանի հրատարակած անհատական մատենագիտությունները: Առաջիններից է «Կ. Հյուգոյի ոտանոթն թարգմանությունների մատենագիտությունը» (1953): Այնուհետև հաջորդաբար լույս են տեսել Ա. Միցկիի, Հալսե, Սիրվանտսո, Ստենդալ, Լոպե դե Վեգա, Դիկկենս, Հոֆման, Բալզակ, Ուելս և այլք: Բացի սրանցից «Արտատահմանյան երկրների գրողներ» մատենաշարով ստեղծված են շուրջ 150 բաղմահեղինակ մատենագիտություններ, որոնցում ներկայացվում է քսանից ավելի երկրների գրականություններ: Բերվում են հեղինակների ստեղծագործությունների ցանկերը բնագրերով, ասլա գրանց ոտանոթն թարգմանությունների նկարագրությունները: Ընդգրկվել են ինչպես անցյալի նշանավոր շատ գրողներ (Կալիդաս, Ռաբլե, Ֆիլդինգ, Մերիմե, Իբսեն, Շոու), այնպես էլ ժամանակակիցներ (Բեխեր, Զեդերս, Ֆուլիկ և ուրիշներ):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Библиография художественной литературы, стр. 349—362.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Դասընթացը 3

Առաջին բաժին

Թեմա 1. Գեղարվեստական գրականության դերը հասարակական կյանքում:
Կոմունիստական կուսակցության բաղադրականությունը գեղարվեստա-
կան գրքի հրատարակության ասպարեզում 5

Իրկուրդ բաժին

Թեմա 2. Գեղարվեստական հրատարակությունների տեսակները 9
Թեմա 3. Դրականագիտական-քննադատական հրատարակություններ 11
Թեմա 4. Դրական-գեղարվեստական հրատարակությունների օժանդակ ա-
պարատը 17
Թեմա 5. Ռուսերեն գրական-գեղարվեստական երկերի ժամանակակից հրա-
տարակցությունները 17
Թեմա 6. Հայերեն գրական-գեղարվեստական երկերի ժամանակակից հրա-
տարակցությունները 22
Թեմա 7. Կենտրոնական, մարզային, հանրապետական գրական-գեղարվես-
տական ռուսերեն պարբերականներ 28
Թեմա 8. Սովետահայ գրական-գեղարվեստական պարբերականներ 30

Նորուրդ բաժին

Թեմա 9. Դրական մատենագիտությունների տեսակներն ու կառուցվածքը 33

Չորրորդ բաժին. Հայկական գրական մատենագիտություններ

Թեմա 10. Գեղարվեստական գրականությունը և գրականագիտությունը ընդ-
հանուր մատենագիտություններում 41
Թեմա 11. Բազմահեղինակ մատենագիտություններ 43
Թեմա 12. Անհատական մատենագիտություններ 57
Թեմա 13. Թեմատիկ մատենագիտություններ 66
Թեմա 14. Հանձնարարական ցանկեր, մեթոդական-մատենագիտական դըր-
բույկներ, «Նշանավոր և հիշարժան տարեթվեր» 68
Թեմա 15. Ներգրության գրական մատենագիտություն 70

Հինգերորդ բաժին. Ռուսական գրական մատենագիտություն

Թեմա 16. Դրական բազմահեղինակ (Общелитературная) մատենագիտու-
թյուններ 73
Թեմա 17. Անհատական մատենագիտություններ 79
Թեմա 18. Արտասովետական երկերի գրականության ռուսերեն մատենա-
գիտություններ 86

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՎՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

A " 65751

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220065751